



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 132 2022

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գևորգ Բաղդասարյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դոցենտ (գլխավոր խմբագիր)

Արմեն Մարուխյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան ԵՊՀ պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Հովհաննես Սրեփանյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Դավիթ Մելքոնյան իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Արթուր Չախոյան ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Գլխավոր խմբագրի հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511-640
Էլ. հասցե՝ ashot@yessayan.am
orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

Հանձնված է արտադրության՝ 12.11.2022թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 5 պայմ. մասով
Գրանցման վկայական՝ N 688

© Համակարգչային շարվածքը, ոճը, տառաձևերը և էջադրումը՝ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արթուր Ղամբարյան Դատական ցուցմունքների դեպոնացումը և անձի հարցաքննությունը դատարանում՝ տեսակոնֆերանսի համակարգերի կիրառմամբ	3
Գևորգ Իսրայելյան Արգելանքի տակ գտնվող գույքի նկատմամբ ապօրինի արարքի նկարագիրը՝ ըստ Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի կարգավորումների	7

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Աննա Մկրտչյան Իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտի որոշ հիմնախնդիրները ՀՀ քաղաքացիական իրավունքում	10
Նահապետ Սուքիասյան Անչափահասների և անգործունակների կողմից ժառանգության ընդունումը՝ փաստացի տիրապետման և կառավարման միջոցով	16

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Անուշ Մովսիսյան Համայնքային ծառայության էությունն ու նշանակությունը	23
Լիանա Մալխասյան Պետության ժամանակակից մեկնությունները	30
Նորիկ Շահնազարյան Սահմանադրության կառուցվածքը	35
Վաչիկ Շահվերդյան Որոշ նկատառումներ պառլամենտական կառավարման ձևի գաղափարախոսական հիմքերի վերաբերյալ	40

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Միքայել Մելքումյան Իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հիմնախնդիրները	46
--	----

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Роза Амирова Актуальные проблемы, вытекающие из договоров банковского вклада	53
--	----

ՄԱՔՍԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Սյուզաննա Վարդանյան «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների փոխադրման դեպքում փոխադրողի և առաքողի (էքսպեդիտորի) պարտականությունները	59
--	----

ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts	65
---	----

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները	80
--	----

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ վաստակավոր իրավաբան

**ԴԱՏԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԻ ԴԵՊՈՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՆՁԻ
ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ՝ ՏԵՍԱԿՈՆՖԵՐԱՆՍԻ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ**

1. Ցուցմունքի դեպոնացման նպատակը

1.1. Ընդհանուր դրույթներ

Ցուցմունքի դատական դեպոնացումը կատարվում է դատաքննությանը ներկայանալու հնարավորություն չունենալու կամ դատաքննության ընթացքում իրավաչափորեն ցուցմունք չտալու հիմնավոր ենթադրության պարագայում պատշաճ ապացուցումն ապահովելու նպատակով՝ քննիչի կամ վարույթի մասնավոր մասնակցի միջնորդությամբ (ՀՀ քր. դատ. օր.-ի 306-րդ հոդվածի 1-ին մաս): Մեկնաբանվող հոդվածը կարգավորում է ցուցմունքի դատական դեպոնացման նպատակը, հիմքերը (դեպքերը) և ցուցմունքի դատական դեպոնացում կատարելու միջնորդություն ներկայացնելու լիազորություն (իրավունք) ունեցող անձանց ցանկը:

Ցուցմունքի դեպոնացման օրենսդրական նպատակն է՝ ապահովել ապացուցման պատշաճությունը: Ցուցմունքի դեպոնացվում է, եթե հիմքեր կան ենթադրելու, որ՝ 1) անձը հնարավորություն չի ունենա ներկայանալու դատաքննությանը (առաջին ատյանի դատարանում մեղադրանքի քննությանը, այլ կերպ ասած՝ հիմնական դատախազներին), 2) անձը դատաքննության ընթացքում իրավաչափորեն կիրառարվի ցուցմունք տալուց¹:

1.2. Պատշաճ ապացուցման ապահովումը՝ որպես ցուցմունքի դեպոնացման նպատակ

Ցուցմունքի դատական դեպոնացման՝ որպես դատական երաշխիքի նպատակն է դատարանի վերահսկողության միջոցով ապահովել հարցաքննության՝ օրենսգրքով սահմանված ընթացակարգի (ապացուցման) պատշաճությունը և հարցաքննության պատշաճ արձանագրումը:

Դեպոնացումը կոչված է ապահովելու ապացուցման պատշաճությունը երկու եղանակով՝ 1) դատական վարույթի անմիջականության պայմանի պահպանմամբ. 2) անձանց հակընդդեմ հարցման իրավունքի ապահովմամբ: Այլ կերպ ասած՝ ցուցմունքի դեպոնացում կատարելու միջոցով տեղի է ունենում պատշաճ ապացուցում, քանի որ մի կողմից՝ հարաբերականորեն ապահովվում է դատական վարույթի անմիջականությունը, մյուս կողմից՝ հակընդդեմ հարցման իրավունքը:

Ցուցմունքի դատական դեպոնացումը նպատակ ունի ապահովել ապացույցի հետազոտման անմիջականությունը, դատական իշխանության մարմինների կողմից ապացույցի անմիջապես ընկալումը: Մինչդրացան փոխում ցուցմունքի դատական դեպոնացման դեպքում դատական վերահսկողությունը վերափոխվում

¹ Այս մասին մանրամասն տե՛ս Գամբարյան Ա. Ս., Գոգանյան Ա. Ա. Судебное депонирование показаний на предварительном следствии (сравнительно-правовой анализ) // Библиотека криминалиста. Научный журнал. 2014. № 2(13). С. 320-325, Գամբարյան Ա., Տիմոնյան Ս. Судебное депонирование признательных показаний обвиняемого (необходимость и угрозы) // Расследование преступлений: проблемы и пути их решения. 2015. № 2(8). С. 78-83. Գամբարյան Ա. Ս., Տիմոնյան Ս. Ա. Судебное депонирование показаний в современном уголовном процессе. М.: Юрлитинформ, 2016, Գամբարյան Ա. Ս. Судебное депонирование показаний в системе производства судебных гарантий (судебного контроля) // Вестник Калининградского филиала Санкт-Петербургского университета МВД России. 2015. № 2(40). С. 48-50, Թեմիրբեկովա Ա. Ա. Судебное депонирование показаний в современном уголовном процессе // Международный журнал экспериментального образования. 2019. № 6. С. 72-76. Թերեխով Ա. Յ., Լատիպով Վ. Ս. Необходимость депонирования показаний свидетелей и потерпевших по сложным уголовным делам // Вестник Казанского юридического института МВД России. 2021. Т. 12. № 1(43). С. 115-121.

է դատական ապացույցի ձևավորման միջոցի, որը հետագայում առաջին ատյանի դատարանի կողմից պետք է ընդունվի որպես դատական ապացույց:

Ինչ վերաբերում է հակընդեմ հարցման իրավունքին, ապա դրա մասին մանրամասն կխոսվի հաջորդիվ, իսկ այժմ նշենք, որ ցուցմունքի դատական դեպոնացման ինստիտուտի և պատշաճ ապացուցման սկզբունքի տեսանկյունից հակընդեմ հարցման իրավունքի կրող է ոչ միայն մեղադրյալը, այլ նաև վարույթի մասնավոր մյուս մասնակիցները, որոնց վերաբերյալ դեպոնենտը տալիս է այնպիսի ցուցմունքներ, որոնք կարող են օգտագործվել ի վնաս տվյալ անձանց:

2. Տեսակապի միջոցով անձին հարցաքննելը

2.1. Ընդհանուր դրույթներ

ՀՀ քր. դատ. օր.-ը հնարավորություն է տալիս մինչդատական և դատական վարույթներում բացառիկ դեպքերում հարցաքննությունը կատարելու տեսահաղորդակցության տեխնիկական միջոցների օգտագործմամբ (տեսակապի միջոցով): Այսպես՝ այն բացառիկ դեպքերում, երբ առողջական վիճակի կամ այլ վայրում գտնվելու (դատական վարույթի պարագայում՝ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվելու) պատճառով անձի ներկայությունը հարցաքննության կատարմանն անհնար է, կամ երբ առկա է անձի անվտանգությունն ապահովելու (դատարանում հարցաքննությունը կարող է սպառնալ հարցաքննվողի անվտանգությանը կամ վտանգել ցուցմունքի արժանահավատությունը), կամ անչափահաս տուժողի կամ վկայի իրավաչափ շահերի պաշտպանության անհրաժեշտություն, հարցաքննությունը կարող է կատարվել տեսակապի միջոցով (ՀՀ քր. դատ. օր.-ի՝ 214-րդ հոդվածի 6-րդ մաս, 327-րդ հոդվածի 1-ին մաս):

Տեսակապի միջոցով հարցաքննություն կատարելու՝ հարցաքննությանը ներկայանալու

անհնարինության հիմքը նման է ցուցմունքի դեպոնացման՝ մասնակցության անհնարինության հիմքին, ուստի անհրաժեշտ է քննարկել տեսակապի միջոցով հարցաքննության և ցուցմունքի դեպոնացման փոխհարաբերակցությունը:

Ցուցմունքի դեպոնացման հիմքերը կանխատեսողական են, վերաբերում են այնպիսի հնարավոր իրադարձություններին, որոնք կարող են տեղի ունենալ ապագայում, մինչդեռ տեսակապի միջոցով հարցաքննության վերաբերելի հիմքը փաստական է, այսինքն՝ այն պետք է գոյություն ունենա: Ցուցմունքը կարելի է դեպոնացնել, եթե հիմքեր կան ենթադրելու, որ անձը ապագայում հնարավորություն չի ունենա ներկայանալու դատական հարցաքննությանը, իսկ տեսակապի միջոցով հարցաքննության պարագայում, որպես փաստ, անձի ներկայությունը հարցաքննության կատարմանն անհնար է:

Այս ինստիտուտների հիմքերի տարբերական պայմաններում այնուամենայնիվ պետք է քննարկել երկու հարց: Նախ՝ հնարավոր է արդյոք ցուցմունքը դեպոնացնել՝ անձի հարցաքննությունը դատարանում տեսակապի միջոցով կատարելու եղանակով, երկրորդ՝ եթե մինչդատական վարույթում անձի ցուցմունքը դեպոնացվել է, ապա դատարանում մինչև այն հրապարակելը, արդյոք պետք է քննարկել այլ պետության տարածքում գտնվող անձին տեսակապի միջոցով հարցաքննելու հարցը:

2.2. Ցուցմունքի դատական դեպոնացում՝ տեսակապի միջոցով հարցաքննությամբ

Եթե անձը, որպես փաստ, գտնվում է ՀՀ սահմաններից դուրս, սակայն առկա են տեղեկություններ, որ նա առողջական վիճակի պատճառով ապագայում հնարավոր է, որ մահան կամ կորցնի հաղորդակցվելու ունակությունները: Այս դեպքում արդյոք հնարավոր է անձի ցուցմունքը դեպոնացնել՝ նրան դատարանում տեսակապի միջոցով հարցաքննելու եղանակով²:

² Նախապես նշենք, որ այս քննարկվող հարցի տեսանկյունից ՀՀ քր. դատ. օր.-ի 309-րդ հոդվածի 1-ին մասն ըստ որի՝ ցուցմունքի դեպոնացումը կատարվում է դռնփակ դատական նիստում՝ օրենսգրքի 8-րդ բաժնի պահանջների՝ վերաբերելի մասով (mutatis mutandis) պահպանմամբ, քննարկվող երկու ինստիտուտների միաժամանակյա կիրառությանը չի խոչընդոտում: Եթե ՀՀ քր. դատ. օր.-ի 8-րդ բաժնում նախատեսված չեն դեպոնացման ընթացակարգի համար անհրաժեշտ նորմեր, ապա ՀՀ քր. դատ. օր.-ի 309-րդ հոդվածի 1-ին մասում նշված կանոնը չի արգելում, որպեսզի դեպոնացման ընթացակարգի և արձանագրման հարաբերությունների նկատմամբ

Ընդհանուր առմամբ, տեսակապի միջոցով հարցաքննությունը և ցուցմունքի դեպոնացումը միաժամանակ կիրառելն նպատակահարմար չէ, քանի որ երկու ինստիտուտն էլ ընդհանուր հարցաքննության կարգից շեղվող (բացառիկ) միջոցներ են: Միևնույն ժամանակ, այս ինստիտուտները զուգակցմամբ կիրառելն անխուսափելի է, եթե կոնկրետ իրավիճակում միաժամանակ առկա են երկու ինստիտուտների կիրառման փաստական հիմքերը: Վերը նշված օրինակում առկա է տեսակապի միջոցով հարցաքննելու հիմքը՝ անձի՝ ՀՀ սահմաններից դուրս գտնվելու փաստն է, ինչպես նաև ցուցմունքը դեպոնացնելու հիմքը՝ հիվանդության պատճառով տվյալ անձի մահանալու հավանականությունն է: Նման փաստակազմի միաժամանակյա առկայությունը հնարավոր, նույնիսկ՝ անխուսափելի է դարձնում քննարկվող ինստիտուտների միաժամանակյա կիրառությունը: Հակառակ դեպքում, եթե անձը մինչդատական վարույթում տեսակապի միջոցով հարցաքննվել է առանց դատական դեպոնացման ինստիտուտի միաժամանակյա կիրառության, ապա հետագայում՝ դատաքննության ընթացքում, այդ ցուցմունքը իրավաբանորեն անհնար է հրապարակել և գնահատել: Բանն այն է՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 330-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում սահմանված է, որ եթե անձը մահացել է կամ կորցրել է հաղորդակցվելու ունակությունը, ապա նրա՝ մինչդատական վարույթում տրված ցուցմունքը դատարանում կարող է հրապարակվել, եթե մինչդատական վարույթում ծանր հիվանդության հիմքով տվյալ անձի ցուցմունքի դեպոնացման անհրաժեշտությունը ողջամտորեն բացակայել է: Վերը նշված օրինակում, մինչդատական վարույթի ընթացքում ՀՀ սահմաններից դուրս գտնվող անձին

տեսակապի միջոցով հարցաքննելու պահին առկա է եղել ցուցմունքը՝ ծանր հիվանդության հիմքով դեպոնացնելու անհրաժեշտության մասին տվյալներ: Եթե տեսակապի միջոցով հարցաքննությունը չզուգակցվի ցուցմունքի դեպոնացման ինստիտուտի հետ, ապա անձի մահվան դեպքում նրա՝ տեսակապի միջոցով կատարված հարցաքննությամբ ստացված ցուցմունքը դատարանում չի կարող հրապարակվել:

Ընթացակարգի կազմակերպման առումով՝ տեսակապի միջոցով հարցաքննության և ցուցմունքի դեպոնացման միաժամանակյա կիրառությունը նույնպես հնարավոր է, քանի որ երկու դեպքում էլ նախատեսված են գործողությունները տեսաձայնագրելու մասին կարգավորումներ:

2.3. Տեսակապի միջոցով դատական հարցաքննության անհրաժեշտությունը և դեպոնացված ցուցմունքը հրապարակելու հնարավորությունը

Եթե մինչդատական վարույթում անձի ցուցմունքը, օրենսգրքի պահանջներին համապատասխան, դեպոնացվել է, ապա ցուցմունքը, ինչպես նաև դրան կցված հավելվածները (տեսաձայնագրությունները) կարող են հրապարակվել դատարանում (ՀՀ քր. դատ. օր.-ի 330-րդ հոդվածի 1-ին մաս):

Դեպոնացված ցուցմունքը մինչև հրապարակելը դատավորը պետք է պարզի, թե արդյոք դատարանում հնարավոր է հարցաքննել այն անձին, ում ցուցմունքը դեպոնացվել է³: Օրինակ՝ եթե ցուցմունքը դեպոնացվել է այն պատճառաբանությամբ, որ վկան կարող է մեկնել ՀՀ-ից, ապա հիմնական դատախոսների ժամանակ, եթե պարզվեց, որ վկան չի վերադարձել Հայաստանի Հանրապետություն, ա-

կիրառվեն ՀՀ քր. դատ. օր.-ի ընդհանուր դրույթները: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 309-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված է, որ դեպոնացման ընթացքում դատարանն ապահովում է օրենսգրքով սահմանված՝ հարցաքննության ընթացակարգի պահպանումը: Դատական հարցաքննության ընդհանուր կարգը սահմանված է ՀՀ քր. դատ. օր.-ի 10-րդ բաժնում գետեղված 326-րդ հոդվածով:

³ Նախկինում ևս նշել ենք, որ եթե վկայի ցուցմունքը նախաքննության ընթացքում դեպոնացվել է այն հիմքով, որ նա, օրինակ՝ կարող է մեկնել տվյալ պետության տարածքից, ապա ցուցմունքի դատական դեպոնացումը դատավորին չի ազատում հետագայում՝ արդարադատություն իրականացնելու ընթացքում, վկային դատարան հրավիրելու պարտականությունից: Դատավորը, գործը քննելիս, պետք է պարզի, թե արդյոք վկան չի վերադարձել տվյալ պետություն, եթե նույնիսկ չի վերադարձել, ապա պարտավոր է միջազգային հարցման շրջանակներում միջոցներ ձեռնարկել նրան դատաքննության ընթացքում հարցաքննելու ուղղությամբ (օրինակ՝ տեսակապի միջոցով): Այս մասին տես Դամբարյան Ա. Ս. Судебное депонирование показаний: старый процессуальный институт под новым названием // Судебная власть и уголовный процесс. 2018. № 2. էջ 196:

պա դատարանը պետք է քննարկի Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող վկային տեսակապի միջոցով հարցաքննելու հնարավորությունը (ՀՀ քր. դատ. օր.-ի 327-րդ հոդված): Ասվածն ունի ինչպես ֆորմալ-իրավաբանական, այնպես էլ էութենական հիմնավորումներ:

Նախ՝ Օրենսդիրը սահմանել է, որ անձի՝ նախկինում տված ցուցմունքը (այդ թվում՝ դեպոնացված՝ Ա.Ղ.) կարող է հրապարակվել միայն դատարանում նրա հարցաքննության անհնարինությունը հաստատելուց հետո (ՀՀ քր. դատ. օր.-ի 330-րդ հոդվածի 3-րդ մաս): Այս ֆորմալ հիմնավորման հիմքում Օրենսդիրը միգուցե դրել է էութենական պատճառաբանությունները:

Երկրորդ՝ եթե ելնում ենք այն ենթադրությունից, որ մինչդատական վարույթի ընթացքում ցուցմունքը դեպոնացրել է մի դատավոր, սակայն դատաքննություն իրականացնում է մեկ այլ դատավոր, ապա դատական վարույթի անմիջականության պայմանի հետևողական իրականացումը պահանջում է, որ մեղադրանքը քննող դատավորը ձեռնարկի բոլոր միջոցները ցուցմունք տալու գործընթացն կազմակերպելու և ցուցմունքներն իր կողմից անմիջապես (թեկուզ՝ տեսակապի միջոցով) ընկալելու ուղղությամբ:

Երրորդ՝ ի տարբերություն մինչդատական վարույթում ցուցմունքի դեպոնացման, մեղա-

դրանքի քննության (հիմնական դատալսումների) ընթացքում անձի հարցաքննությունը (անկախ ցուցմունքի դեպոնացված լինելու հանգամանքի) հնարավորություն կտա կողմերին առավել արդյունավետ իրականացնելու իրենց հակընդդեմ հարցման իրավունքը, քանի որ մինչդատական վարույթի ավարտին նրանք արդեն տիրապետում են գործի ամբողջ նյութերին:

Եթե հիմնական դատալսումների ընթացքում անձին, ում ցուցմունքները նախկինում դեպոնացվել են, հնարավոր է եղել հարցաքննել անմիջապես նիստերի դահլիճում կամ տեսակապի միջոցով, ապա վերանում է ՀՀ քր. դատ. օր.-ի 330-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին հիմքով դեպոնացված ցուցմունքը հրապարակելու անհարժեշտությունը:

Մինչդատական վարույթում դեպոնացված ցուցմունքը կարող է դատարանում հրապարակվել, եթե առկա է էական հակասություն՝ դատարանում և նախկինում տրված (այդ թվում՝ դեպոնացված՝ հեղ.) ցուցմունքների միջև (ՀՀ քր. դատ. օր.-ի 330-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ):

Եթե ՀՀ սահմաններից դուրս գտնվող վկայի գտնվելու վայրի մասին տեղեկությունները բացակայում են կամ նա այլ կերպ հասանելի չէ տեսակապով հարցաքննությունը կազմակերպելու համար, ապա դատարանը հրապարակում է դեպոնացված ցուցմունքը:



ԳԵՎՈՐԳ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

Արդարադատության ակադեմիայի ռեկտորի խորհրդակալ,
Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

**ԱՐԳԵԼԱՆՔԻ ՏԱԿ ԳՏԵՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԱՊՕՐԻՆԻ
ԱՐԱՐՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ՝ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ**

1. Ներածություն

Գործնականում երբեմն արգելանքի տակ գտնվող գույքի նկատմամբ օրենքով արգելված արարք է կատարվում: Նման արարքի համար պատասխանատվություն է նախատեսում Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք): Իհարկե, նշված արարքը նորույթ չէ, դրա համար պատասխանատվություն սահմանված էր նաև նախկին քրեական օրենքում: Սակայն Օրենսգրքի 509-րդ հոդվածում քննարկվող հանցանքի առանձին հատկանիշներ կարգավորված են նորովի, առավել մանրամասն, ուստի անհրաժեշտություն է առաջացել մեկնաբանել այդ կարգավորումները: Այս հանգամանքով է պայմանավորված սույն հետազոտության նորույթն ու արդիականությունը:

Նշվածից ելնելով՝ հետազոտության նպատակն է ներկայացնել արգելանքի տակ գտնվող գույքի նկատմամբ օրենքով արգելված արարք կատարելու քրեաիրավական նկարագիրը և մեկնաբանումը՝ ըստ Օրենսգրքի կարգավորումների:

Հետազոտությունն իրականացվել է տրամաբանական, իրավահամեմատական և համակարգային վերլուծության մեթոդների գործադրմամբ:

2. Հիմնական հետազոտություն

Օրենսգրքի 509-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում քաղաքացիական կամ վարչական գործով կամ վարչական վարույթով կամ քրեական, քաղաքացիական կամ վարչական գործով կամ վարույթով դրանց վարույթի ցանկացած փուլում արգելանքի տակ վերցված գույքի նկատմամբ ապօրինի արարք կատարելու համար:

Անմիջական օբյեկտը դատարանի, քննչա-

կան կամ վարչական մարմինների նորմալ գործունեության, գույքն արգելանքի վերցնելու վերաբերյալ ակտերի կատարման ապահովման հասարակական հարաբերություններն են:

Հանցագործության առարկան արգելանքի վերցված գույքն է: Հողվածի դիսպոզիցիայից բխում է, որ գույքը կարող է արգելանքի վերցվել դատական կարգով՝ քաղաքացիական կամ վարչական գործով, այնպես էլ վարչական կարգով՝ վարչական վարույթում կամ քրեական, քաղաքացիական կամ վարչական գործով կամ վարույթով դրանց վարույթի ցանկացած փուլում:

Օբյեկտիվ կողմից քննարկվող հանցանքը դրսևորվում է նշված գույքի նկատմամբ գործողությամբ կամ անգործությամբ ապօրինի արարք կատարելով: Ապօրինի նշանակում է, որ արարքը կատարվել է առանց իրավական հիմքի:

Հողվածում թվարկվում են արարքի կատարման **եղանակները**.

1) Գույքի մեկուսացվածությունը կամ նույնականացումն ապահովող և իրավասու անձի կողմից դրված կնիքը կամ կողպեքը ոչնչացնելով, վնասելով կամ այլ կերպ չեզոքացնելով:

Ոչնչացնել նշանակում է գույքը լրիվ անպիտան վիճակի հասցնել, իսկ վնասելը՝ գույքը մասնակի անպիտան վիճակի հասցնելն է: Այլ կերպ չեզոքացնելը, օրինակ, կնիքը հեռացնելն է, առանց վնասելու կողպեքը բացելը:

2) Գույքը յուրացնելով, օտարելով, թաքցնելով, ոչնչացնելով, վնասելով, փոխելով, ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելով, այլ կերպ տնօրինելով կամ ապօրինի օգտագործելով այն անձի կողմից, որին այդ գույքը պաշտոնապես վստահված է եղել, ինչպես նաև գույքի սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի կողմից,

● ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ № 132 2022

եթե նրանք տեղյակ են եղել գույքի արգելանքի մասին:

Այս եղանակն ենթադրում է հետևյալ գործողությունները.

- ոչնչացնելը,
- վնասելը,
- փոխելը՝ այլ գույքով փոխարինելը,
- յուրացնելը՝ իրեն վստահված գույքի նկատմամբ լիազորություններն օգտագործելով ուրիշի գույքն ապօրինի, անհատույց իրենը կամ ուրիշինը դարձնելը,
- օտարելը՝ վաճառելը, փոխանակելը, գրավ դնելը, նվիրելը,
- թաքցնելը՝ առանց համապատասխան մարմնի թույլտվության գույքն այլ վայր տեղափոխելը կամ այլ անձանց ի պահ տալը:
- ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելը՝ առանց համապատասխան մարմնի թույլտվության անօրինական, առանց գույքը թաքցնելու մտադրության այն ի պահ տալ,
- այլ կերպ տնօրինելը, օրինակ՝ իր արտադրության մեջ օգտագործելը և այլն,
- ապօրինի օգտագործելը, օրինակ՝ հողմասի բերքը հավաքելը և այլն¹:

Ընդ որում, անձը պետք է **տեղյակ լիներ** գույքի արգելանքի մասին:

3) Գույքի պահպանման պարտականությունը չկատարելով այն անձի կողմից, որի վրա դրված է եղել նման պարտականություն:

Սա նշանակում է իրեն ի պահ հանձնված գույքի պահպանության կատարման հարցում անգործության դրսևորում:

4) Վարկատու կազմակերպության ծառայողի կողմից կալանքի տակ գտնվող դրամական միջոցներով բանկային գործառնություններ իրականացնելով:

Սա կարող է դրսևորվել, օրինակ, կալանքի տակ գտնվող գույքը որպես վարկ տալով:

5) Գույքի բռնագրավման վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կատարումից այլ ապօրինի եղանակով խուսափելով:

Սա կարող է դրսևորվել, օրինակ, հարկադիր կատարողին գույքի ոչնչացման կամ կորստի մասին սուտ տեղեկություններ հաղորդելով, գույքը նրան հանձնելուց հրաժարվելով և այլն²:

Հանցագործության սուբյեկտը հատուկ է: Որպես այդպիսին կարող է հանդես գալ այն անձը, որին այդ գույքը պաշտոնապես վստահված է եղել, գույքի սեփականատերը կամ այլ տիրապետողը, գույքի պահպանման պարտականությունը կրող անձը, վարկատու կազմակերպության ծառայողը:

Սուբյեկտիվ կողմից Օրենսգրքի 509-րդ հոդվածով նախատեսված արարքը կարող է դրսևորվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ: Ուղղակի դիտավորությունն առկա է այն դեպքում, երբ, օրինակ, գույքի սեփականատերը հրաժարվում է գույքը հանձնել հարկադիր կատարողին, որպեսզի խուսափի գույքի բռնագրավման վերաբերյալ դատական ակտը կատարելուց: Իսկ այն դեպքում, երբ, օրինակ, սեփականատերն առանց համապատասխան մարմնի թույլտվության, անօրինական, առանց գույքը թաքցնելու մտադրության այն ի պահ է տալիս, առկա է անուղղակի դիտավորություն:

Քննարկվող հարցի շուրջ Օրենսգրքի և նախկին քրեական օրենսգրքի **կարգավորումների տարբերությունը** հանգում է հետևյալին. նախկին օրենսգրքի 345-րդ հոդվածը պատասխանատվություն էր սահմանում 1-ին մասով՝ արգելանքի տակ գտնվող կամ բռնագրավման ենթակա գույքը վատնելու, օտարելու, թաքցնելու կամ ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելու այն անձի կողմից, ում այդ գույքը վստահված է եղել, ինչպես նաև վարկատու կազմակերպության ծառայողի կողմից կալանքի տակ գտնվող դրամական միջոցներով (ավանդներով) բանկային գործառնություններ իրականացնելու համար, իսկ 2-րդ մասով՝ դատարանի դատավճռով բռնագրավման ենթակա գույքը թաքցնելու կամ յուրացնելու, ինչպես նաև գույքի բռնագրավման վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կատարումից այլ ձևով

¹ Տե՛ս Уголовное право. Особенная часть (Чучаев А.И., 2019) //https://be5.biz/pravo/u032/17.html#6:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (չորրորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով). /Երևանի պետ. համալս. – Եր.: ԵՊՀ հրատ., 2009, էջ 973:

խուսափելու համար: Ակնհայտ է, որ հանցանքի կատարման եղանակներն Օրենսգրքում առավել մանրամասն են կարգավորված: Նախկին կարգավորման մեջ շեշտված է «բռնագրավման ենթակա գույքը» արտահայտությունը, որը բացակայում է ներկա կարգավորումներում, ինչը, ըստ էության, ներառվում է «արգելանքի տակ գտնող գույք» հասկացության մեջ և հատուկ շեշտադրելն իմաստազուրկ է: Մասնավորապես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ արգելանքը կիրառվում է պարտապանի գույքը բռնագրավելու մասին դատարանի դատավճիռը կատարելու դեպքում:

3. Եզրակացություն

Արգելանքի տակ գտնվող գույքի նկատ-

մամբ ապօրինի արարք կատարելը՝ որպես հանցանք, նորույթ չէ, դրա համար պատասխանատվություն նախատեսված էր նաև նախկին քրեական օրենքում: Սակայն Օրենսգրքի 509-րդ հոդվածում նշված արարքի առանձին հատկանիշներ կարգավորված են նորովի, առավել մանրամասն: Սույն հետազոտությամբ մեկնաբանվում են այդ կարգավորումները: Հետազոտության արդյունքները, տեսական նշանակությունից զատ, կարծում ենք, ունեն նաև գործնական նշանակություն: Դրանք կարող են ուղեցույց հանդիսանալ հարկադիր կատարման ծառայության աշխատակիցների, ինչպես նաև խնդրո առարկա արարքին իրավաբանական գնահատական տվող և դրա համար պատասխանատվության միջոցներ կիրառող մարմինների համար՝ իրենց առօրյա գործունեության մեջ:



ԱՆՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ

ԵՊՀ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

**ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՈՐՈՇ
ՅԻՄՆԱԿՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ**

Ժամանակակից իրավական համակարգն անձի իրավունքների ոչ միայն իրացման, այլև դրանք պաշտպանելու իրավական հնարավորությունն ապահովող երևույթ է: Հարկ է նաև չմոռանալ, որ օրենսդրությամբ անձին վերապահված, սակայն պաշտպանության ձևերով չապահովված իրավունքը հոչակագրային է¹: Քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլ բնույթի միջոցների կողքին իրավական միջոցներն են, որ կոչված են ապահովելու անհրաժեշտ պայմանները անձանց սուբյեկտիվ իրավունքների իրականացման համար: Այս համատեքստում քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանությունը կարևոր դերակատարում ունի մասնավոր իրավունքում: Այս ուսումնասիրությունը վեր է հանում իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտի կատարելագործման անհրաժեշտությունը, ինչպես նաև օրենսդրության առանձին ինստիտուտներում իրավունքի ինքնապաշտպանության տարրեր պարունակող նորմերի հիմնախնդիրները: Քաղաքացիական իրավունքում ինքնապաշտպանության օրենսդրական ոչ ամբողջական կարգավորումները հանգեցնում են քաղաքացիաիրավական ինստիտուտների միջև ոչ հստակ և ոչ միանշանակ տարանջատումների: Այս հանգամանքի վրա ազդեցություն ունեն նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝

- իրավունքի ինստիտուտների բնորոշումների և կիրառման շրջանակների ամրագրման անհստակությունը,
- իրավունքի ինստիտուտների փոխհարաբերակցության և առաձևահատկությունների վեր հանման բացակայությունը և այլն:

Կարծում ենք, որ պատճառներից մեկը իրավունքի ինքնապաշտպանության բնորոշման օրենսդրական բացակայությունն է, որը հնարավորություն չի ընձեռում ամբողջությամբ ընկալել վերոգրյալ ինստիտուտի իրավական էությունը: Տեսաբանները շատ տարբեր ցուցիչներ են առանձնացրել ինքնապաշտպանության իրավահարաբերությունների նույնականացման համար: Գրիբանովի, Ուսենկոյի, Ոյասենցովի տարանջատած ցուցիչները նույնանում են²: Նրանց կողմից առանձնացրած հիմնական մոտեցումներից առաջինը իրավահարաբերությունների տարանջատումն է, որոնց խախտումները վերացնելու կամ կանխելու ուղղությամբ ձեռնարկված գործողությունները կարող են համարվել ինքնապաշտպանություն: Ըստ այդմ, իրավահարաբերության սուբյեկտի կողմից ձեռնարկված գործողություններն իր խախտված իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելուն ուղղված կարող են դիտարկվել ինքնապաշտպանություն միայն ոչ պայմանագրային հարաբերությունների դեպքում (դեյլիտային պարտավորությունների շրջանակներում³): Իրավագիտության մեջ տարածված երկրորդ տեսակետի համաձայն՝ ինքնապաշտպանությունը թույլատրելի է միայն արտապայմանագրային իրավահարաբերությունների դեպքում: Իսկ մնացյալ հնարավոր բոլոր խախտումների դեպքում, որոնք կապված են պայմանագրային պարտավորությունների կատարման ընթացքի հետ, օրենսդրությունը նախատեսել է այլ ինստիտուտներ, որոնք գործառույթային տեսանկյունից միտված են ինքնապաշտպանության հետ նույնական գործառույթների իրականացմանը⁴ (օրինակ՝ պահում, որը ինք-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 132, 2022

¹ Առավել մանրամասն տե՛ս Գրիբանով В.П., Пределы осуществления и защита гражданских прав, монограф., М., 2001 թ., 170 էջ:
² Տե՛ս Գրիբանով В. П., Рясенцев В. А., Кораблев М. С., Осуществление и защита гражданских прав, 1986 թ., М., էջ 265:
³ Տե՛ս Գրիբանով В. П., Пределы осуществления и защита гражданских прав, 2001 թ., էջ 47-48:
⁴ Առավել մանրամասն տե՛ս Селезнев М., Самозащита гражданских прав, монография, 1995 թ., էջ 35-40:

նապաշտպանական ֆունկցիա կատարող պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է), սակայն հստակ ամրագրված են Քաղաքացիական օրենսգրքում:

Քաղաքացիական իրավունքի տեսության շրջանակներում իրավունքի ինքնապաշտպանության համար առաջարկվող բնորոշումների պակաս չկա: Տեսաբան Վասիլևան իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտը համարում է քաղաքացիաիրավական հարաբերությունների ընթացքում իրավունքի խախտման կանխարգելման, վերացման ուղղված գործողությունների ամբողջություն⁵: Բնորոշումներ են ներկայացրել նաև Գրիբանովը, Միկչիսը, Ստրոկաչը և այլք⁶: Ընդհանրացնելով տեսաբանների կողմից բանաձևած իրավունքի ինքնապաշտպանության հասկացությունները՝ առաջարկում ենք իրավունքի ինքնապաշտպանության հետևյալ հասկացության օրենսդրական ամրագրումը. **քաղաքացին իրավունք ունի օրենքով չարգելված բոլոր եղանակներով ապահովել իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը՝ պահպանելով արարքի համաչափության պայմանները: Պայմանագրային պարտավորությունների առկայության դեպքում, իրավունքների ինքնապաշտպանությունը իրականացվում է պարտավորաիրավական կարգավորումների շրջանակներում:**

Կարծում ենք, որ առաջարկվող բնորոշումը կլուծի՝

- քաղաքացիական հարաբերությունների սուբյեկտների իրավունքի ինքնապաշտպանության հիմնախնդիրը,
- կասեցնում է արարքի համաչափության պայմանը,
- կհստակեցնի քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակը իրավունքի ինքնապաշտպանության կիրառման դեպքում:

Սույն առաջարկը կլուծի մի շարք տեսական և գործնական խնդիրներ: Մասնավորա-

պես, կվերանա օրենսդրական ձևակերպումների անհստակությունը, կիսալուծումները, արդյունքում կապահովվի ինստիտուտի կիրառման հնարավորությունը քաղաքացիական իրավա-հարաբերությունների ընթացքում: Մինչ այս քաղաքացիական իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտի ոչ բավարար կիրարկումը և դատական նախադեպերի իսպառ բացակայությունը մեծապես պայմանավորում ենք օրենսդրական կարգավորումների անկատարությամբ:

Քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության համար բնութագրական են ոչ միայն միակողմանի և փաստացի կատարվող գործողությունները, այլ նաև դրանց արդյունքում առաջացած հետևանքները: Քաղաքացիական իրավունքի սուբյեկտները բախվում են վնասի ինստիտուտին: Անկախ այն հանգամանքից՝ տվյալ դեպքում վնասը վրա է հասել որևէ ինստիտուտի, այդ թվում իրավունքների ինքնապաշտպանության կիրառման սահմանների պահպանմամբ, թե անցմամբ, միևնույն է, դրա վերաբերյալ անհրաժեշտ է իրավական գնահատական: Այս հանգամանքով պայմանավորված՝ անհրաժեշտ ենք համարել վեր հանել իրավունքների ինքնապաշտպանության եղանակները, որոնք ենթարկվել են նաև օրենսդրական կարգավորման:

Դիասենցովը, քննարկման առարկա դարձնելով անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության վիճակում կատարված գործողությունները, դրանք նույնացնում է ինքնապաշտպանության ընթացքում ձեռնարկված փաստացի գործողությունների հետ⁷: Ստոյակինը գտնում է, որ ինքնապաշտպանության միջոցներ չեն կարող համարվել անհրաժեշտ պաշտպանությունն ու ծայրահեղ անհրաժեշտությունը⁸: Այսպիսով, անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտը փաստացի կատարված գործողությունների արդյունքում առաջացած վնասի հատուցումը բացառող օրինական հիմք է ստեղծում: Այն չի կարգավորում վնասի հատուցման

⁵ Առավել մասնրամասն տե՛ս Васильева Л.С. О формах защиты и самозащиты гражданских прав, научная статья, “Юридическая наука” 2017թ., №6, էջ 113-119:

⁶ Առավել մասնրամասն տե՛ս Грибанов В. П., Пределы осуществления и защита гражданских прав, 2001 թ., էջ 47-48, Микшис Д.В., Способы самозащиты гражданских прав, статья, 2019թ., էջ 9-10, Строчак К. Е., Осуществление права самозащиты, монограф. 2005 թ., էջ 55:

⁷ Տե՛ս Рясенцов В. А., Представительство по советскому гражданскому праву, моногр., 1992 թ., էջ 110-114:

⁸ Տե՛ս Стоякин Г. Я., Понятие защиты гражданских прав, статья, Свердловск, 1973 թ., էջ 30-35:

հետ կապված որևէ դրվագ և չի կարող դիտարկվել դեյլիկտային հարաբերությունների կոնտեքստում: Ավելին, անհրաժեշտ պաշտպանության կիրառումը չի կարող դիտարկվել որպես դեյլիկտային պարտավորությունների առաջացման պայման: Ընդհակառակը, այն դիտարկվում է որպես վնասի հատուցումը բացառող հանգամանք: Այն իրավագործ անձի համար ծառայում է որպես ինքնուրույն օրենսդրական երաշխիք իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համատեքստում: Ներկայիս ամրագրումը տարրընկալումների տեղիք է տալիս անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտը շաղկապելով դեյլիկտային պարտավորությունների և վնասի հատուցման հետ: Կարծում ենք, այս հանգամանքը չի համապատասխանում ինստիտուտի էությանը, որի հետևանքով բացառվում է վերջինիս իրավակիրառելիությունը: Անհրաժեշտ պաշտպանությունը պետք է օրենսդրության շրջանակներում դիտարկվի որպես իրավունքի ինքնապաշտպանության եղանակ՝ իր վրա կրելով մայրցամաքային իրավունքում ընդունված «self-defense» ինստիտուտի բեռը:

«Քաղաքացիական օրենսգրքում անհրաժեշտ պաշտպանության քաղաքացիաիրավական նորմերը շարադրված են շատ անորոշ և դրանց մեկնաբանությունը տարակարծությունների տեղիք է տալիս, իսկ հստակության բացակայությունը հանգեցնում է իրավունքի այլ ճյուղերին հղումների կատարմանը: Առավել հաճախ հղում է կատարվում քրեաիրավական հասկացության բնութագրիչներին: Այս հանգամանքը չի խթանում քաղաքացիաիրավական հասկացությունների բուն էության բացահայտմանը և խոչընդոտներ է ստեղծում դրա քաղաքացիաիրավական ճիշտ ընկալումների ձևավորման համար, իսկ որպես անխուսափելի հետևանք առաջացնում է այս ինստիտուտների պրակտիկ կիրառության անհնարինությունը: Հաշվի առնելով քաղաքացիաիրավական առանձնահատկությունները և դիտարկելով քաղաքացիաիրավական հարաբերությունների զարգացումը որպես նախապայման, առաջարկում ենք հետևյալ իրավակարգավորման ներդրումը:

ա) Քաղաքացիական իրավունքների խախտում չի համարվում այն արարքը, որը կատարվել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում, այսինքն՝ անձի կյանքը, առողջությունը, իրավունքները, ազատությունները, իրավագործի շահերը, հասարակության կամ պետության շահերը հակաօրինական ոտնձգությունից կամ դրա իրական սպառնալիքից՝ ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանելը, եթե թույլ չի տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում:

բ) Անհրաժեշտ պաշտպանության վիճակում պատճառված վնասը ենթակա չէ հատուցման, եթե չեն գերազանցվել դրա սահմանները: Անհրաժեշտ պաշտպանության սահմանների գերազանցում է համարվում այնպիսի գործողությունների իրականացումը, որոնք ակնհայտ չեն համապատասխանում հակաօրինական ոտնձգության բնույթին և վտանգավորությանը:

Իրավունքի ինքնապաշտպանությունը որպես պաշտպանության ձևի փոխհարաբերակցությունը «Քաղաքացիական օրենսգրքի» որոշ ինստիտուտների հետ, որոնք առաջին հայացքից պահպանում են կարգավորման նպատակների և գործողությունների համընկումը անհրաժեշտ է հստակեցնել: Օրինակ՝ ներխուժման և պահման ինստիտուտների վերաբերյալ զուգահեռները իրավունքի ինքնապաշտպանության հետ: Իրավունքի ինքնապաշտպանության համատեքստում քննարկման համար հիմնավորում է այն հանգամանքը, որ առկա հնարավորություն է նաև ներխուժման (այն է ֆիզիկական գործողության կատարմամբ) իրականացնել ինքնապաշտպանություն: Անհրաժեշտ է հստակեցնել, որ Քաղաքացիական օրենսգրքում ամրագրված ներխուժումը տարածվում է իրավունքի ինքնապաշտպանության վրա այն սահմանափակելու իմաստով:

Իրավունքների ինքնապաշտպանության միջոցների դասակարգումը տվել են տարբեր իրավաբաններ տարբեր շրջանակներում⁹:

Սակայն, հաշվի առնելով մեր ուսումնասի-

⁹ Որոշ տեսաբանների իրավունքների ինքնապաշտպանության միջոցները տարանջատվում են երեք հիմնական տեսակների՝ օպերատիվ ներգործության միջոցներ, փաստացի կատարվող գործողություններ, ներխուժում և պաշտպանական բնույթի գործողություններ (Грибанов В. П., Ем В. С., Карпов М. С., Рясенцо В. А., Усольцева С. В.)

րությունների ընթացքում կատարած որոշ եզրահանգումներ, մենք իրավունքների ինքնապաշտպանության միջոցները տարանջատում ենք՝

1. փաստացի կատարվող գործողությունների, որոնք ունեն իրավական սահմաններ և
2. օրենսդրական ամրագրում ստացած իրավական ինստիտուտների:

ՀՀ օրենսդրության համաձայն, ներխուժումը, որպես փաստացի կատարվող գործողություն անթույլատրելի է, բացառությամբ օրենքով թույլատրված հիմքերի: Այսինքն, օրենքում ուղղակի թույլտվության բացակայությունը վկայում է ներխուժման ոչ իրավաչափ վարքագծի մասին՝ հիմք ընդունելով դրույթի իմպերատիվությունը: Ըստ էության, ներխուժումը չի կարող մասնավոր իրավունքի շրջանակներում համարվել օրինաչափ վարքագիծ: Հետևաբար, որպես իրավունքների ինքնապաշտպանության միջոց այն դիտարկելը ևս հնարավոր չէ: Սակայն դա չի նշանակում, որ ներխուժումը իրավախախտման կանխման կամ վերացման համար չի կարող կիրառվել իրավունքների ինքնապաշտպանության իրավական գործիքակազմը: **Ուստի քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանություն դիտարկում ենք ոչ թե ներխուժումը, այլ դրա դեմ պայքարելու սեփականատիրոջ իրավունքը** (օրինակ՝ 203-րդ հոդվածի 6-րդ մաս):

Նմանօրինակ մեկ այլ ինստիտուտ է պահումը: Պահումը իրավաչափ է համարվում միայն թվարկված հիմքերի առկայության դեպքում; Այդ հիմքերն են՝

- գույքի համար վճարելու պարտավորությունը,
- պարտատիրոջ ծախսերը և մյուս վնասները հատուցելու պարտավորությունը,
- գույքի համար վճարելու կամ դրա վրա կատարված ծախսերը և այլ վնասերը հատուցելու հետ կապված պարտավորությունը,
- պայմանագրով նախատեսված այլ դեպքեր:

Անհրաժեշտ է տարանջատել պահումը, որպես օպերատիվ ներգործության միջոց և իրավունքի ինքնապաշտպանության ընթացքում պահմանը բնորոշ փաստացի ձեռնարկված գործողությունից: Պահման նպատակը պարտավորաիրավական ներգործության տեսանկյունից ուղղված է պարտավորությունների պաշտպանության դրսևորում այն ուղղված է իրավունքի պաշտպանությանը:

Գտնում ենք, որ պահում ներգործության միջոցի քաղաքացիաիրավական կարգավորումները չեն կարող տարածվել իրավունքների ինքնապաշտպանության ընթացքում փաստացի իրականացվում գործողությունների նկատմամբ: **Այսպիսով, պահում ներգործության միջոցի կարգավորումը տարածվում է պարտավորաիրավական նորմերի վրա, իսկ պահման փաստացի գործողությամբ դրսևորված իրավունքների ինքնապաշտպանության իրավաչափության որոշումը անհրաժեշտ է իրականացնել իրավունքի ինքնապաշտպանության ընդհանուր նորմի հիման վրա:**

Իրավունքի ամրագրումը բնավ բավարար չէ դրա ողջ ծավալով կիրարկումն ապահովելու համար: Սեփականության իրավունքի իրավազորությունների ապահովումը մեծապես կանխված է դրանց իրականացման համար նախատեսված երաշխիքներից: Իրացման երաշխիքներից է հանդիսանում նաև պաշտպանության ձևերից իրավունքների ինքնապաշտպանությունը: Սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների պաշտպանությունը վերտառությամբ գլխում նախատեսված են առնվազն երկու իրավունքների ինքնապաշտպանության միջոցներ: Դրանք ամրագրված են Քաղաքացիական օրենսգրքի 274-րդ և 277-րդ հոդվածներում: Սակայն դրանց իրացման համար մեխանիզմները բացակայում են:

Առկա երկու հոդվածները անհրաժեշտ է լրացնել հետևյալ բովանդակությամբ: Սեփականատերն այդ մասին պետք է տեղյակ պահի ենթադրյալ իրավախախտին: Առաջարկում

և այլք): Որոշ տեսաբաններ տարանջատում են՝ անհրաժեշտ պաշտպանություն, ծայրահեղ անհրաժեշտություն և փաստացի կատարվող գործողություններ (Стойкин Г. Я., Ведяхин В. М., Шубина Т. Б. и այլք): Տեսաբանների մեկ այլ խումբ տարանջատում են՝ պաշտպանական բնույթի գործողություններ, փաստացի գործողություններ և օպերատիվ ներգործության միջոցներ (Басин Ю. Г., Диденко А. Г., Стаунинг Э.Л., Веретникова С. Н. и այլն):

ենք օրենսդրությամբ սահմանել իրավունքի իրացման հնարավորությունը, կիրառելով իրավունքների ինքնապաշտպանության գործիքակազմը: Առաջարկում ենք ներդնել նախապահանջի այն է իրավախախտին կատարված իրավախախտման մասին ծանուցելու անհրաժեշտությամբ: Գտնում ենք, այս հանգամանքը կօգնի նաև բեռնաթափել դատական համակարգերը, սեփականության իրավունքի խախտման հայցերով:

Մարդու սուբյեկտիվ իրավունքն է պաշտպանելու սեփական իրավունքներն ու օրինական շահերը¹⁰: Իրավունքների ինքնապաշտպանության առավել ընդգրկուն ընկալումը հանգում է նրան, որ օրենսդրությամբ անձին տրվում է իրավասություն ներգործելու սեփական իրավունքի խախտումներին, ավելին դրանք կանխելու կամ վերացնելու: Դրանցից յուրաքանչյուրում առկա են առանձնահատկություններ պատմականորեն՝ կապված ազգային իրավական մշակույթի, սովորույթային իրավունքի, իրավամտաժողովրդի մակարդակի և այլ գործոնների հետ: Ազդեցություն են ունենում նաև սոցիալ-տնտեսական, քաղաքական և այլ հանգամանքները: Յուրաքանչյուր ներպետական իրավական համակարգ վերոնշյալ գործոններից ելնելով ձևավորում է իր առանձնահատկություններն ու բնորոշ գծերը, որոնք իրենց արտացոլումն են ստանում նաև մասնավոր իրավունքում:

Իրավագիտությանը հայտնի են իրավունքի ինքնապաշտպանության իրավական երաշխիքն ամրագրելու երկու հիմնական մոտեցում: Առաջին մոտեցումը՝ ինստիտուտը օրենսդրության ընդհանուր դրույթներում ամրագրվելով հնարավորություն է ընձեռում իրավասու անձանց կամարտահայտությամբ, առանց իրավահարաբերության սահմանափակումների օգտվել իրավունքի ինքնապաշտպանությունից: Երկրորդ մոտեցման հիմքում ընկած է իրավունքի ինքնապաշտպանության երաշխավորումն առանձին քաղաքացիաիրավական ինստիտուտ-

ների շրջանակներում: Մասնավորապես, իրավունք ինստիտուտի ամրագրմանը զուգահեռ, ամրագրվում են պաշտպանության միջոցներ, այդ թվում իրավունքի ինքնապաշտպանության օրինաչափ դրսևորումները:

Մեկ այլ խնդիր է հանդիսանում այն, որ մեր ներպետական օրենսդրությունը չի դրսևորում միատեսակ մոտեցում իրավունքների ինքնապաշտպանության կարգավորումների համար: Օրինակ՝ 2017 թվականին ներմուծված հարևանային իրավունքի դեպքում օրենսդիրն ընտրել է առանձին ինստիտուտների կարգավորման կանոնը: Հարևանային իրավունքը ներպետական օրենսդրությունում կարգավորման տեսանկյունից համեմատաբար նոր ինստիտուտ է¹¹: Հարևանային իրավունքի շրջանակներում կարգավորվող հասարակական հարաբերությունները քաղաքացիական օրենսգրքում ամրագրվել են 2017թ. հոկտեմբերի 25-ին կատարված լրացումների արդյունքում: Հարևանային իրավունքի ինստիտուտի ներդրման հիմնական նպատակը եղել է հարևանային հարաբերությունների բնագավառում առկա հարաբերությունների իրավական բնույթ հաղորդելը, որն էլ իր հերթին հստակ կկարգավորեր առկա բազմաթիվ վեճերը, անորոշ իրավիճակներն ու խախտումները Քաղաքացիական օրենսգրքի շրջանակներում¹²: Սակայն մինչ այդ Քաղաքացիական օրենսգրքում առկա ինստիտուտներն այդպիսի կարգավորումներով չեն առանձնանում: Սույն ուսումնասիրության շրջանակներում վեր է հանվել հայրենական իրավական համակարգում առկա հետևյալ խնդիրը: ՀՀ Քաղաքացիական օրենսդրության մշակման քաղաքականությունից բացակայում է թե՛ առաջին, թե՛ երկրորդ մոտեցումը: Դա հանգեցնում է տեսական և գործնական խնդիրների: Կիրառվող և վերաբերելի դրույթների և գործողությունների գնահատման տեսանկյունից՝ ընդհուպ մինչև իրավաչափ վարքագիծը ոչ իրավաչափից տարանջատելու և վնասի արդարացի փոխհատուցման հանգամանքները: ՀՀ Քա-

¹⁰ Տե՛ս <https://www.hg.org/legal-articles/self-defense-laws-40093> Հղումը հասանելի է 21.08.2020թ.-ի դրությամբ:
¹¹ Տե՛ս «Քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» 2017 թ.-ի հոկտեմբերի 25-ի ՀՕ-156-Ն Հայաստանի Հանրապետության օրենքը <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=117116>: Հղումը հասանելի է 05.07.2021թ.-ի դրությամբ:
¹² Տե՛ս <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=8743&Reading=0>: Հղումը հասանելի է 05.07.2021թ.-ի դրությամբ:

ղաքացիական օրենսդրության իրավունքի պաշտպանության նորմերի տրամաբանությունը անհրաժեշտ է միասնականացնել, որպեսզի հնարավոր լինի խուսափել նմանօրինակ խնդիրներից:

Ամփոփելով վերոգրյալը գտնում ենք, որ հաշվի առնելով ՀՀ օրենսդրության կառուցվածքի և իրավական տրամաբանության առանձնահատկությունները, օրենսդրական զար-

գացման համար անհրաժեշտ է ընտրել ընդհանուր կարգավորման սկզբունքը, ինչը թույլ կտա սույն հետազոտության շրջանակներում կատարված ընդհանրացումները և առաջարկները ծառայեցնել ՀՀ քաղաքացիական իրավունքում առկա իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտի հետ կապված մի շարք տեսական և գործնական խնդիրների լուծմանը:



ՆԱՀԱՊԵՏ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀՀ փոխվարչապետ Հ. Մաթևոսյանի գրասենյակի մասնագետ

ԱՆՉԱՓԱՅԱՍՆԵՐԻ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՓԱՍՏԱՑԻ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ԿԱՄ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Ժառանգության ինստիտուտն ունի պատմական բավական խորը արմատներ, դրա մասին կան բազմաթիվ հիշատակումներ Աստվածաշնչում: Ժառանգման հիմնական աստվածաշնչյան կանոնը սահմանված է Թվեր գրքի 27-րդ գլխում¹: Չնայած հազարամյակներ տևած ձևավորմանը՝ ժառանգության ինստիտուտում շարունակում են մնալ խնդրահարույց հարցեր և չկարգավորված կամ թերի կարգավորված հարաբերություններ: Նոտարները, դատարանների նման օժտված լինելով ժառանգությունը փաստացի տիրապետման կամ կառավարման հիմքով ընդունելու իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հաստատելու իրավասությամբ, գործնականում խուսափում են անգործունակների և անչափահասների կողմից ժառանգությունը նշված հիմքով ընդունելու փաստերը հաստատելուց: Հիմնական պատճառը, կարծում ենք, այս հարցի շուրջ դատական պրակտիկայի սակավությունն է: Վճռաբեկ դատարանն էլ անդրադարձ չի կատարել նշված խնդրին: Հայկական գրականության մեջ տեսական ուսումնասիրություններ ևս առկա չեն: Աշխատանքը նպատակ է հետապնդում աջակցել նոտարական և դատական պրակտիկայի ձևավորմանը:

Ժառանգության ընդունումը ժառանգատուի այն իրավաբանական գործողությունն է, որով արտահայտվում է ժառանգատուի իրավահաջորդը լինելու նրա համաձայնությունը²: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի³ (այսուհետ՝ Օրենսգիրք) 1226-րդ հոդվածն առանձնացնում է ժառանգության ըն-

դունման երկու եղանակ: Առաջինը ժառանգության ընդունումն է՝ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով: Երկրորդ եղանակը ժառանգության ընդունումն է ժառանգի կողմից ժառանգական գույքի փաստացի տիրապետման ու կառավարման միջոցով: Օրենսգիրքը սահմանում է փաստացի տիրապետման ու կառավարման միջոցով ժառանգության ընդունմանն ուղղված գործողությունների որոշակի շրջանակ, սակայն չի սահմանափակում դրանք: Քանի որ Օրենսգիրքը չի սահմանափակում այն գործողությունների շրջանակը, որոնք կարող են վկայել փաստացի տիրապետման և կառավարման մասին, հաճախ պրակտիկայում բարդ է լինում որոշել, թե արդյոք ժառանգի կողմից իրականացված գործողությունները բավարար են ժառանգությունը ընդունված համարելու համար: Անչափահասների և անգործունակների կողմից փաստացի տիրապետման միջոցով ժառանգության ընդունումը ուղղակի կապի մեջ է այն գործողությունների բնույթի հետ, որոնք հավաստում են նրանց կողմից ժառանգության ընդունումը: Ուստի, այդ գործողություններին անհրաժեշտ ենք համարում ավելի մանրամասն անդրադառնալ: Վճռաբեկ դատարանը մի քանի որոշումներում անդրադարձել է այդ գործողությունների շրջանակին: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ժառանգական գույքի փաստացի տիրապետելու հանգամանքը կարող է ապացուցվել ՀՀ քաղաքացիական դատավարության

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 132 2022

¹ Տեն, Richard H. Hiers, Transfer of Property by Inheritance and Bequest in Biblical Law and Tradition, 10 J. L. & Religion 121 (1993), էջ 121:
² Տեն, Բարսեղյան Տ., Ղարախանյան Գ., Հայկյանց Ա., Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական իրավունք (Երրորդ մաս) (2-րդ հրատարակություն՝ լրացումներով և փոփոխություններով): - Երևանի պետ. համալս. - Եր.: ԵՊՀ հրատ., 2009, էջ 367:
³ Ընդունվել է 05.05.1998թ. (ՀՀՊՏ 1998.08.10/17(50)):

օրենսգրքի⁴ 47-րդ հոդվածով նախատեսված ապացույցների տեսակներով, ընդ որում, գույքի տիրապետման կամ կառավարման ապացույց կարող է հանդիսանալ նաև բնակարանային շահագործման մարմինների, համատիրությունների, բնակարանային-շինարարական կոոպերատիվների, տեղական ինքնակառավարման մարմինների և օրենսդրությամբ համապատասխան փաստաթուղթ տալու իրավունք ունեցող այլ մարմինների կողմից տրված տեղեկանքը կամ այլ ապացույցներ, որոնք ուղղակիորեն հաստատում են այն, որ ժառանգը փաստացի տիրապետմամբ ընդունել է ժառանգությունը⁵: Մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ըստ օրենքի ժառանգման դեպքում ժառանգատուի մահվանից հետո վեցամսյա ժամկետում ժառանգի կողմից ժառանգված գույքի փաստացի տիրապետումն ու կառավարումն արդեն իսկ գիտակցված, ակտիվ գործողություններ են, որոնք նպատակաուղղված են ժառանգության ընդունմանը: Եթե ժառանգը, գիտակցելով, որ գույքը պատկանել է ժառանգատուին, վերջինիս մահվանից հետո տիրապետում և կառավարում է այդ գույքը, ըստ էության գիտակցաբար կատարում է ակտիվ գործողություններ, իսկ նման գործողությունների կատարումն օրենսդիրը համարում է ժառանգության ընդունման եղանակներից մեկը: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ գործով հիմնավորված է ժառանգատուի մահվանից հետո ժառանգված գույքի փաստացի տիրապետման և կառավարման հանգամանքը, ըստ օրենքի ժառանգությունը ընդունած ժառանգ ճանաչելու համար այլևս անհրաժեշտություն չկա ապացուցելու այլ ակտիվ, գիտակցված գործողությունների կատարման վերաբերյալ փաստեր⁶: Այսպիսով, որպեսզի գործողությունները վկայեն ժառանգության ընդունման մասին, պետք է առկա լինեն գործողության կամային և առարկայական բաղադրիչները: Գործողության առարկայական բաղադրիչը ենթադրում է, որ գործողությունը պետք է առարկայական լինի և բնույթով, և արտա-

հայտման ձևով: Օրինակ՝ հողը մշակելը, որպես հողամասը փաստացի տիրապետման միջոցով ժառանգություն ընդունելու գործողության տեսակ, պետք է առարկայական տեսք ստանա, այսինքն՝ հողը մշակելու միտք ունենալը բավարար չէ, իսկ առարկայական արտահայտումն էլ պետք է դրսևորվի այնպիսի ձևով, որ հնարավոր լինի դա ապացուցել քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, օրինակ՝ հողամասի համար նախատեսված վճարները մուծելը: Կամային բաղադրիչը պետք է դրսևորվի կամքի միասնությամբ, ազատ կամահայտնությամբ և ժառանգի գործողություններում նրա կամքը և նպատակը պետք է վկայեն ժառանգությունն ընդունելու ժառանգի ուղղակի ցանկության մասին:

Ինչ ուղղակի կապ է առկա անչափահասների և անգործունակների կողմից փաստացի տիրապետման միջոցով ժառանգության ընդունման և դրան ուղղված գործողությունների բնույթի միջև: Ժառանգության ընդունումը միակողմ գործարք է: Ինչպես ցանկացած գործարքի դեպքում, այնպես էլ ժառանգությունն ընդունելու համար այն ընդունող անձը՝ ժառանգը, պետք է օժտված լինի որոշակի գործունակությամբ:

Ռուսաստանի լուսավորության նախարարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 07-7890 «Մեթոդական առաջարկությունների մասին» նամակում նշվում է, որ եթե ժառանգն անչափահաս է, ապա ժառանգության ընդունման գործարքը կատարվում է ՌԴ քաղաքացիական օրենսգրքի⁷ (այսուհետ նաև՝ ՌԴ ՔՕ) 26-րդ և 28-րդ հոդվածների համաձայն: Ընդ որում, կարևոր է ժառանգության ընդունման կարգը, այսինքն՝ ժառանգության ընդունման գործարքի կատարման ձևը: Այսպես՝ ժառանգությունը փաստացի ընդունել իր բոլոր իրավական հետևանքներով կարող է նաև փոքրահասակ քաղաքացին: Համաձայն ՌԴ ՔՕ 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի՝ փոքրահասակներն իրավունք ունեն կնքել այնպիսի գոր-

⁴ Ընդունվել է 17.06.1998թ. (ՀՀՊՏ 1998.09.09/20(53), չի գործում:
⁵ Տե՛ս, թիվ 3-938(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.06.2007 թվականի որոշումը:
⁶ Տե՛ս, թիվ ԱՐԱԴ2/0420/02/11 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 04.10.2013թ. որոշումը:
⁷ Ընդունվել է ՌԴ Պետական Դումայի կողմից 1994 թվականի հոկտեմբերի 21-ին:

ծարքներ, օրինակ՝ ուղղված եկամտի անհատույց ստացմանը, որոնք չեն պահանջում նոտարական վավերացում կամ պետական գրանցում: Քանի որ ժառանգության փաստացի ընդունումը, օրինակ՝ անչափահասի բնակությունը բնակելի տարածքում, որը ժառանգատուի (ծնողի) սեփականությունն է, համարվում է ժառանգության ընդունմանն ուղղված գործարքի կատարում, հետևաբար փաստացի գործողությունները, որոնք միաժամանակ ունեն նաև իրավաբանական նշանակություն (բնակելի տարածքի տիրապետումը, օգտագործումը) բավարար են համարվում երեխայի կողմից ժառանգության ընդունման և վեճի դեպքում ժառանգական իրավունքները նրանը ճանաչելու համար: Այս դեպքում նոտարի կողմից ժառանգության իրավունքի վկայագիր չտալը կամ ժառանգական գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում չիրականացնելն իրավական արժեք չեն ունենա, քանի որ ժառանգությունը համարվում է փաստացի ընդունված: Այսպիսով, անչափահասները, այդ թվում նաև փոքրահասակները, առանց իրենց ծնողների, որդեգրողների, խնամակալի համաձայնության կարող են ընդունել ժառանգությունը՝ կատարելով ժառանգության փաստացի ընդունումը մատնանշող գործողություններ, որոնք ապացույց կլինեն ժառանգական գույքի վերաբերյալ վեճի դեպքում: Միևնույն ժամանակ, պետք է նկատի ունենալ, որ ժառանգության փաստացի ընդունումը մատնանշող գործողությունների կատարումը կախված է անձի գործունակության ծավալից: Փոքրահասակը, ժառանգությունը տիրապետելով, (օրինակ՝ ապրելով ժառանգատուի բնակելի տարածքում), կարող է փաստացի ընդունել այն, սակայն հազիվ թե կարող է կրել ժառանգական գույքի պահպանման ծախսերը: Եվ հակառակը՝ 14 տարին լրացած անչափահասը,

ունենալով սեփական եկամուտը, կարող է կրել ժառանգական գույքի պահպանման ծախսերը, մարել ժառանգատուի պարտքեր, քայլեր ձեռնարկել գույքի պահպանության համար: Անչափահասները փաստացի կարող են ժառանգություն ստանալ ՌԴ ՔՕ 1153-րդ հոդվածի 2-րդ կետում նշված այն գործողությունների միջոցով, որոնք իրենք լիազորված են ինքնուրույն իրագործելու, հենց այս դեպքում են երեխաներն ինքնուրույն իրականացնում ժառանգությունն ընդունելու գործարքը: Մնացած դեպքերում փոքրահասակների անունից իրավաբանական գործողությունների միջոցով ժառանգության ընդունումն իրականացնում են իրենց օրինական ներկայացուցիչները, իսկ եթե խոսքը գնում է 14 տարին լրացած անչափահասների մասին՝ իրենք իրենց օրինական ներկայացուցիչների համաձայնությամբ: Օրինական ներկայացուցիչ կողմից ժառանգության ընդունման համար լիազորագիր չի պահանջվում⁸: Ավելին ՌԴ Գերագույն դատարանի 2013թ.-ի 4-րդ քառորդի ամփոփագրում նշվում է, որ օրինական ներկայացուցիչ անգործությունը, որը հանգեցրել է փոքրահասակ համարվող երեխայի կողմից ժառանգությունն ընդունելու ժամկետը վերականգնելու հայցով դատարան դիմելու ժամկետի բացթողմանը, համարվում է հարգելի պատճառ այդ հիմքով դատարան դիմելու ժամկետի վերականգնման համար⁹:

Ներկայացնենք օրինակներ նաև ՀՀ դատական պրակտիկայից: Երկու անչափահաս երեխաների մայրը դիմել է դատարան, իրեն և իր երեխաներին ամուսնու մահից հետո փաստացի տիրապետման և կառավարման հիմքով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջով: Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանը վճռով¹⁰ գտել է, որ երեխաների մայրը փաստացի տիրապետելով և կառավարելով ամուսնու ժառանգական զանգ-

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 132 2022

⁸ Տե՛ս, «Письмо» Минпросвещения России от 23.12.2021 N 07-7890 “О методических рекомендациях” (вместе с “Методическими рекомендациями по вопросам выдачи органами опеки и попечительства предварительных разрешений на осуществление имущественных прав ребенка”), http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_412381/ (հասանելի է 21.07.2022):

⁹ Տե՛ս, Определение судебной коллегии ВС РФ N 66-КГ13-8 в Обзоре судебной практики Верховного Суда РФ за четвертый квартал 2013 г. (утв. Президиумом Верховного Суда РФ 4 июня 2014 г.), http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_163923/#dst100299 (հասանելի է 21.07.2022):

¹⁰ Տե՛ս, թիվ ՏԴ2/0156/02/13 քաղաքացիական գործով Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 10.10.2013թ. վճիռը:

վածի մեջ մտնող գույքը, հանդես է եկել որպես երեխաների օրինական ներկայացուցիչ և նա ժառանգությունն ընդունել է ոչ միայն իր, այլ նաև երեխաների անունից: Նմանատիպ վճիռ¹¹ է կայացրել նաև Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը: Մայրը, որպես անչափահաս որդու օրինական ներկայացուցիչ դիմել է դատարան ի թիվս այլնի, պահանջելով նաև, որ ամուսնու մահից հետո իր որդուն հասանելի ժառանգական գույքի իր կողմից փաստացի տիրապետման և կառավարման հիմքով իր որդին ճանաչվի ժառանգությունն ընդունած ժառանգ: Դատարանը գտել է, որ հայցվորի կողմից ապացուցվել է սահմանված փաստը, մասնավորապես՝ ժառանգատուի մահվանից հետո վեցամսյա ժամկետում ժառանգը փաստացի տիրապետել է ժառանգական գույքը: Հետևաբար՝ փաստացի տիրապետման հիմքով՝ մահացածի որդուն պետք է ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ:

Օրենսգիրքը անչափահասներին բաժանում է երկու խմբի՝ փոքրահասակների ու 14-18 տարեկան անչափահասների: Այսպիսով, ինչ իրավիճակներ կարող են առաջանալ անչափահասների և անգործունակների կողմից փաստացի տիրապետման միջոցով ժառանգության ընդունման ժամանակ: Նախ արձանագրենք, որ մեր կողմից ստորև նշված իրավիճակները վերաբերում են այն դեպքերին, երբ փաստացի տիրապետմանն ուղղված գործողությունները Օրենսգրքի 289-րդ հոդվածի իմաստով համարվում են գործարքներ, ուղղված են ժառանգության ընդունմանը և ունեն իրավաբանական նշանակություն: Ըստ Օրենսգրքի 289-րդ հոդվածի՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարեցնելուն: Հնարավոր են հետևյալ խումբ իրավիճակները՝

ա) երբ փաստացի տիրապետմանն ուղղված գործողությունները իրականացվում են՝ փոքրահասակի դեպքում խնամակալի, ծնողների կամ որդեգրողների, 14-18 տարեկան ան-

չափահասի դեպքում հոգաբարձուի, ծնողների կամ որդեգրողների կողմից կամ անչափահասի կողմից նրանց գրավոր համաձայնությամբ, իսկ անգործունակի դեպքում խնամակալի կողմից,

բ) երբ փաստացի տիրապետմանն ուղղված գործողությունները իրականացնում են փոքրահասակը, 14-18 տարեկան անչափահասը և նրանք օժտված են նման գործողություններ կատարելու գործունակությամբ,

գ) երբ փաստացի տիրապետմանն ուղղված գործողությունները իրականացնում են փոքրահասակը, 14-18 տարեկան անչափահասը, անգործունակը և նրանք օժտված չեն նման գործողություններ կատարելու գործունակությամբ:

Պարզելու համար, թե ինչպես կարող է փաստացի տիրապետման միջոցով ժառանգությունը ընդունվել անչափահասի և անգործունակի կողմից, նախ անհրաժեշտ է վերհանել վերջիններիս գործունակության ծավալը, որը սահմանված է Օրենսգրքով:

Նախ անդրադառնանք փոքրահասակներին: Նրանց գործունակության ծավալը սահմանվում է Օրենսգրքի 29-րդ հոդվածում:

ա) Փաստացի տիրապետմանն ու կառավարմանն ուղղված գործողությունները իրականացվում են փոքրահասակի ծնողի, որդեգրողի կամ խնամակալի կողմից, հետևաբար ժառանգությունը պետք է համարվի փոքրահասակի կողմից փաստացի տիրապետման միջոցով ընդունված, քանի որ դա ուղղակիորեն բխում է Օրենսգրքի 29-րդ հոդվածից: Եթե օրինական ներկայացուցիչն էլ ունի բաժին այդ ժառանգությունից, օրինակ՝ երեխայի հոր մահից հետո մայրը և երեխան շարունակում են ապրել հորը պատկանող տանը, և մայրը իրականացնում է փաստացի տիրապետմանն ուղղված գործողություններ, ապա կարծում եմ, որ պետք է շարժվել այն կանխավարկածով, որ ժառանգությունն ընդունված է թե՛ մոր, թե՛ երեխայի կողմից, քանի որ մայրն այդ դեպքում ունի պարտականություն ընդունելու երեխային հասանելի ժառանգությունը, և գործնականում անհնար է որոշել, թե մոր կամքը ուղղված էր

¹¹ Տե՛ս, թիվ ՇԴ/0026/02/18 քաղաքացիական գործով Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 16.01.2018թ. վճիռը:

միայն ժառանգության իր բաժնի ընդունմանը, թե նաև երեխայի: Ավելին եթե փոքրահասակի օրինական ներկայացուցիչների կողմից չի պահպանվի ժառանգության ընդունման 6-ամսյա ժամկետը, փոքրահասակը պետք է հնարավորություն ունենա հետագայում Օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն դիմելու դատարան իր օրինական ներկայացուցիչի կողմից բաց թողնված ժամկետը վերականգնելու նպատակով: Իսկ դատարանը պարտավոր է վերականգնել այդ ժամկետը, հակառակ դեպքում կստացվի, որ փոքրահասակ ժառանգը անարդարացիորեն գրկվում է ժառանգությունից:

բ) Փոքրահասակը՝ վեցից մինչև տասնչորս տարեկանը, անձամբ է իրականացնում փաստացի տիրապետմանն ուղղված գործողությունները և օժտված է դրանք իրականացնելու գործունակությամբ, այդ դեպքում ժառանգությունը պետք է համարվի փաստացի տիրապետման միջոցով նրա կողմից ընդունված: Չնայած փոքրահասակի գործունակության ծավալը շատ նեղ է, այնուամենայնիվ վեցից մինչև տասնչորս տարեկան անձինք կարող են անհատույց օգուտներ ստանալուն ուղղված գործարքների միջոցով, որոնցից է օրինակ՝ որոշակի վճարներ ստանալը, ընդունել ժառանգությունը: Այսինքն՝ տվյալ դեպքում, որպեսզի ժառանգությունը համարվի ընդունված փոքրահասակի կողմից իր սեփական գործողությունների միջոցով, այդ գործողությունները պետք է մտնեն նրա գործունակության ծավալի մեջ: Իսկ ինչ վերաբերում է այնպիսի գույքին, որը ենթակա է պետական գրանցման, տվյալ դեպքում դրա պետական գրանցումը չիրականացնելը խոչընդոտ չի կարող լինել ժառանգությունը ընդունելու համար: Քանի որ Օրենսգրքի 1225-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում, որ ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին պատկանող, անկախ այդ գույքի նկատմամբ ժառանգի իրավունքի պետական գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է գրանցման:

գ) Փոքրահասակը անձամբ է իրականացնում փաստացի տիրապետմանն ուղղված գործողությունները, բայց դրանք իրականացնելու գործունակությամբ օժտված չէ: Օրինակ փոքրահասակը մարում է ժառանգատուի պարտ-

քերը: Այս դեպքում Օրենսգրքի 309-րդ հոդվածը սահմանում է, որ տասնչորս տարեկան չդարձած անչափահասի (փոքրահասակի) կնքած գործարքն առոչինչ է: Այսինքն՝ փոքրահասակի կնքած այն բոլոր գործարքները, որոնք սահմանված չեն Օրենսգրքի 29-րդ հոդվածի երկրորդ մասով, առոչինչ են: Իսկ առոչինչ գործարքի հիման վրա հնարավոր չի լինի ընդունել ժառանգությունը: Այս դեպքում միայն մի եղանակով հնարավոր կլինի իրավաբանական նշանակություն տալ փոքրահասակի գործողություններին, եթե Օրենսգրքի 309-րդ հոդվածի համաձայն, փոքրահասակի շահերից ելնելով, ի շահ փոքրահասակի կնքված գործարքը ծնողների, որդեգրողների կամ խնամակալի պահանջով դատարանը վավեր ճանաչի: Ըստ էության, եթե տվյալ գործարքը ուղղված է փոքրահասակի կողմից փաստացի տիրապետման միջոցով ժառանգության ընդունմանը, ուրեմն կարելի է ասել, որ այն կնքվել է ի շահ փոքրահասակի, բացառությամբ այն դեպքի, երբ միաժամանակ ժառանգվում է նաև այդ չափ պարտք: Այսինքն՝ տվյալ դեպքում, եթե փոքրահասակը օժտված չի լինի գործարքը իրականացնելու գործունակությամբ, նրա կողմից ժառանգությունը փաստացի տիրապետման հիմքով այդ գործարքի հիման վրա ընդունված կհամարվի, եթե նրա օրինական ներկայացուցիչները դիմեն դատարան և դատարանը վավեր ճանաչի այդ գործարքը, հակառակ դեպքում հնարավոր չի լինի առոչինչ գործարքի հիման վրա ժառանգությունը համարել ընդունված:

Անդրադառնանք 14-18 տարեկան անչափահասների կողմից փաստացի տիրապետման միջոցով ժառանգության ընդունման ժամանակ առաջացող հնարավոր իրավիճակներին:

ա) 14-18 տարեկան անչափահասների կողմից փաստացի տիրապետման միջոցով ժառանգության ընդունումն իրականացվում է նույն կերպ, ինչպես փոքրահասակներինը, եթե ժառանգության ընդունմանն ուղղված գործարքները կնքում են նրանց օրինական ներկայացուցիչները: Այդ դեպքում ժառանգությունը համարվում է փաստացի տիրապետման միջոցով ընդունված տվյալ անչափահասի կողմից, ում օրինական ներկայացուցիչը իրականացրել է ժառանգության ընդունմանն ուղղված գործո-

ղությունները: Օրենսգրքի 30-րդ հոդվածի համաձայն՝ տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասները կարող են գործարքներ կնքել իրենց օրինական ներկայացուցիչների՝ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ կետում նշված գործարքների: Այդպիսի անչափահասի կնքած գործարքը վավեր է նաև նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի՝ հետագայում տված գրավոր հավանության դեպքում: Բայց տվյալ դեպքում 14-18 տարեկան անչափահասները արդեն հնարավորություն ունեն սեփական գործողությունների միջոցով ընդունել ժառանգությունը, եթե ստանան իրենց օրինական ներկայացուցիչների համաձայնությունը: Այսինքն՝ 14-18 տարեկան անչափահասները կարող են անձամբ կնքել ժառանգությանն ընդունմանն ուղղված գործարքներ, սակայն իրենց օրինական ներկայացուցիչների գրավոր համաձայնությամբ կամ հետագա համաձայնությամբ, այդ դեպքում ժառանգությունը կհամարվի նրանց կողմից փաստացի ընդունված:

բ) 14-18 տարեկան անչափահասները անձամբ են իրականացնում ժառանգության ընդունմանն ուղղված գործարքները և օժտված են դրանք իրականացնելու գործունակությամբ: Նրանց գործունակության ծավալը սահմանվում է Օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասում: Այս դեպքում, երբ նրանք կնքում են Օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործարքներ ուղղված ժառանգության ընդունմանը, ժառանգությունը պետք է փաստացի տիրապետման հիմքով համարվի նրանց կողմից ընդունված: Օրինակ՝ նրանք իրենց աշխատավարձը տնօրինելով՝ իրենց հաշվին կատարում են գույքը պահպանելու ծախսեր: Այն դեպքում, երբ 16 տարին լրացած անչափահասը Օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն կճանաչվի լրիվ գործունակ, նա կարող է ընդունել ժառանգությունը առանց որևէ սահմանափակման, ցանկացած գործարքի հիման վրա, որը կվկայի նրա կողմից տվյալ գույքի փաստացի տիրապետման ու կառավարման մասին: Իսկ եթե անչափահասը փաստացի տիրապետման հիմքով ընդունել է ժառանգությունը, ապա, կարծում ենք, որ իրավաբանական նշանակություն ունեցող այդ փաստը հաստատելու որոշման

համար ինքնուրույն նոտարին դիմում կարող է տալ:

գ) 14-18 տարեկան անչափահասները իրականացնում են ժառանգության ընդունմանն ուղղված գործարքներ, սակայն օժտված չեն այդ գործարքների համար անհրաժեշտ գործունակությամբ և չեն ստացել իրենց օրինական ներկայացուցիչների համաձայնությունը Օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան: Այս դեպքում ըստ Օրենսգրքի 310-րդ հոդվածի 1-ին մասի՝ այդպիսի գործարքը 14-18 տարեկան անչափահասի ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի հայցով դատարանը կարող է անվավեր ճանաչել: Եթե նման գործարքն անվավեր է ճանաչվել, համապատասխանաբար կիրառվում են սույն օրենսգրքի 307 հոդվածի 1-ին կետի երկրորդ և երրորդ պարբերություններով նախատեսված կանոնները:

Հետևաբար այսպիսի գործարքներով 14-18 տարեկան անչափահասները ըստ էության կարող են ընդունել ժառանգությունը, ելնելով այն կանխավարկածից, որ դա ի շահ իրենց է, և նրանց օրինական ներկայացուցիչները չեն դիմի դատարան դրանք անվավեր ճանաչելու պահանջով: Հակառակ պարագայում, եթե նրանց օրինական ներկայացուցիչները դիմեն դատարան և անվավեր ճանաչեն այդ գործարքները, այդ գործարքների հիման վրա հնարավոր չի լինի ընդունել ժառանգությունը:

Օրենսգրքի 31-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացին, որը հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, կարող է դատարանով անգործունակ ճանաչվել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Նրա նկատմամբ սահմանվում է խնամակալություն: Անգործունակ ճանաչված քաղաքացու անունից գործարքներ է կնքում նրա խնամակալը: Անգործունակների համար սահմանված է, որ նրանց անունից բոլոր գործարքները կնքում են խնամակալները, այդ թվում՝ նաև փաստացի տիրապետման միջոցով ժառանգությանն ընդունմանը ուղղված: Այսպիսով, որպես ընդհանուր կանոն անգործունակները ժառանգությունը կարող են ընդունել միայն խնամակալի գոր-

ծողությունների միջոցով: Իսկ այն դեպքում, երբ անգործունակը կկնքի ժառանգության ընդունմանն ուղղված գործարք, այն Օրենսգրքի 307-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն կհամարվի առոչինչ: Օրենսգրքի 307-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հոգեկան խանգարման հետևանքով անգործունակ ճանաչված քաղաքացու շահերից ելնելով՝ նրա կնքած գործարքը խնամակալի պահանջով դատարանը կարող է վավեր ճանաչել, եթե այն կնքվել է ի շահ այդ քաղաքացու: Այսպիսով, այդպիսի գործարքը կարող է վավեր համարվել և դառնալ անգործունակի կողմից ժառանգության ընդունման հիմք, միայն այն դեպքում, եթե այն դատարանը վավեր ճանաչի:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք նշել, որ անչափահասների և անգործունակների օրինական ներկայացուցիչների կատարած գործողությունները, որոնք հավաստում են ժառանգության փաստացի տիրապետման և կառավարման մասին, որպես ընդհանուր կանոն, հիմք են անչափահասների և անգործունակների կողմից, ինչպես ըստ կտակի, այնպես էլ ըստ օրենքի ժառանգության ընդունման: Այն դեպքում, երբ ժառանգ է ն ծնողը, ն երեխան, որպեսզի ժառանգությունը համարվի երեխայի կողմից ընդունված, ծնողի կամքն ու գործողությունները պետք է ուղղված լինեն հենց երեխային հասանելիք ժառանգությունը ընդունելուն: Եթե գործողությունները փոխկապակցված են և դժվար է որոշել, թե դրանք, ում ժառանգության ընդունմանն են ուղղված, ապա

պետք է հաշվի առնել ծնողի կամքը: Այսինքն՝ ծնողի կամքը ուղղված է եղել իրեն, թե իր երեխային հասանելիք ժառանգությունը ընդունելուն ու ըստ այդ որոշել, թե ով է ընդունել ժառանգությունը: Եթե նույնիսկ հնարավոր չլինի որոշել, թե ծնողի կամքը ինչին է ուղղված եղել, ապա կարծում ենք, որ իրավակիրառ պրակտիկայում պետք է շարժվել այն կանխավարկածով, որ այն նաև ուղղված է եղել երեխայի կողմից ժառանգության ընդունմանը՝ ելնելով երեխայի լավագույն շահերից: Ի վերջո, եթե ծնողը բաց թողնի ժամկետը ու չկատարի գործողություններ՝ ուղղված երեխային հասանելիք ժառանգության ընդունմանը, արդեն նշել ենք, որ երեխան, չափահաս դառնալով, կարող է վերականգնել ժառանգությունը ընդունելու համար բաց թողնված ժամկետը: Բացի այդ, մի շարք դեպքերում, որոնք մեր կողմից հանգամանորեն թվարկվեցին աշխատանքում, հենց անչափահասների և անգործունակների սեփական գործողությունները, առանց օրինական ներկայացուցիչների համաձայնության, կարող են հիմք հանդիսանալ նրանց կողմից փաստացի տիրապետման միջոցով ժառանգության ընդունման, և այդ դեպքում ժառանգության իրավունքի վկայագիր չունենալը կամ պետական գրանցման ենթակա գույքի պետական գրանցում չիրականացնելը, անչափահասի և անգործունակի կողմից փաստացի տիրապետման միջոցով ժառանգության ընդունման վրա ոչ մի իրավական հետևանք չեն կարող ունենալ:



ԱՆՈՒՇ ՄՈՎԱՄԻՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքային ծառայությունը հանրային ծառայության տեսակ է, որի ձևավորումը կապված է տեղական ինքնակառավարման կայացման և զարգացման գործընթացի հետ: Համայնքային ծառայությանը հատուկ են ինչպես բոլոր տեսակի ծառայողական գործունեությանը բնորոշ հատկանիշներ, այնպես էլ, տեղական ինքնակառավարման առանձնահատկությամբ պայմանավորված, յուրահատուկ հատկանիշներ¹:

Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարումը սահմանադրորեն ամրագրվեց 1995թ. հուլիսի 5-ին հանրաքվեով ընդունված Սահմանադրությամբ, որը պայմանավորված էր ինչպես Հայաստանում սոցիալ-տնտեսական համակարգի հաստատումով, այնպես էլ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններով: Սակայն պետք է արձանագրենք, որ տեղական ինքնակառավարման ինքնուրույն համակարգի, այդ թվում՝ համայնքային ծառայության համակարգի գործնական ներդրում մեր երկրում փաստացի տեղի չունեցավ, քանի որ ոչ սահմանադրական կարգի հիմունքներում, ոչ Սահմանադրության այլ գլուխներում տեղական ինքնակառավարումը չստացավ առանձին սահմանադրական ինստիտուտի կարգավիճակ: Սահմանադրական այդ բացը լրացվեց 2005թ. նոյեմբերի 27-ի սահմանադրական բարեփոխումներով և հետագայում նույն բովանդակությամբ ամրագրվեց նաև 2015 թվականի դեկտեմբերի 6-ի բարեփոխումներով: Այսպես՝ Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ *Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովրդին իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահ-*

մանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով, իսկ 9-րդ հոդվածով սահմանված է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է տեղական ինքնակառավարումը՝ որպես ժողովրդավարության էական հիմքերից մեկը:

Տեղական ինքնակառավարման իրավունքի բովանդակությունն ամրագրված է Սահմանադրության 179-րդ հոդվածում, որի համաձայն՝ *տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է՝ համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը:*

Այսինքն՝ Սահմանադրությունը, տեղական ինքնակառավարումը սահմանելով որպես սահմանադրական կարգի հիմունք, ճանաչում և երաշխավորում է տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպարարական առանձնացումը հանրային իշխանության մարմիններից, ինչը ինքնին ենթադրում է, որ տեղական ինքնակառավարման մարմինները գործում են ինքնուրույն, իրենց լիազորությունների սահմաններում անկախ են, ընդգրկված չեն պետական կառավարման համակարգի մարմիններում և պատասխանատու են առաջին հերթին համայնքի բնակչության առջև:

Տեղական ինքնակառավարման ձևավորման և զարգացման, համայնքային ծառայության ներդրման գործում առանձնահատուկ նշանակություն ունեն Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերը: Այդ միջազգային պայմանագրերից հատկանշական է Տեղական ինքնակառավար-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության մունիցիպալ իրավունք, ուսումնական ձեռնարկ, (ընդ. խմբ. Գ. Դանիելյանի), Երևան, «Հայրապետ», 2015, էջ 290:

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 132 2022

ման մասին եվրոպական խարտիան², որը Սահմանադրությունից հետո հաջորդ կարևորագույն փաստաթուղթն է, որով ապահովվում են տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության ներդրման, կայացման և զարգացման երաշխիքները: Մասնավորապես՝ Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների աշխատանքային պայմանները պետք է լինեն այնպիսին, որ հնարավոր լինի ապահովել բարձր որակավորում ունեցող կադրերի ընտրությունը՝ հիմնված փորձի և բանիմացության սկզբունքների վրա: Դրա համար անհրաժեշտ է ապահովել մասնագիտական որակավորման, վարձակալության և ծառայողական առաջխաղացման համապատասխան պայմաններ: Այսպիսով՝ Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիան, տեղական ինքնակառավարումը կապելով տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույն և պատասխանատու գործունեության իրավունքի հետ, առաջին հերթին մատնանշում է տեղական մարմինների դերը տեղական ինքնակառավարման իրականացման գործում: Սակայն դրա հետ մեկտեղ եվրոպական խարտիան սահմանում է, որ այդ իրավունքն իրականացվում է ոչ միայն ինքնակառավարման ընտրովի մարմինների կողմից, այլև տեղական ինքնակառավարման գործառույթների իրականացմանը քաղաքացիների ուղղակի մասնակցության ձևերի միջոցով³: Ճանաչելով բնակչության տեղական ինքնակառավարում իրականացնելու իրավունքը՝ պետությունը ճանաչում և երաշխավորում է տեղական ինքնակառավարման ինքնուրույնությունը նրա լիազորության սահմաններում և պարտականություն է ստանձնում անհրաժեշտ պայմաններ ստեղծել տվյալ իրավունքի կիրառման համար⁴:

Հարկ է նշել, որ Սահմանադրության և վա-

վերացրած միջազգային պայմանագրերի հիման վրա (Հայաստանի Հանրապետությունը Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիան ստորագրել է 2001 թվականի մայիսի 11-ին և վավերացրել է 2002 թվականի հունվարի 25-ին) Հայաստանում ընդունվել են մի շարք օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր, որոնք մանրամասն կարգավորում են ոչ միայն տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպման և գործունեության հետ կապված հարցերը, այլ նաև համայնքային ծառայության կազմակերպման և իրականացման հիմնահարցերը: Այսպես՝ 2002 թվականի մայիսի 7-ին Ազգային ժողովն ընդունեց «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքը⁵, իսկ 2004 թվականի դեկտեմբերի 14-ին՝ «Համայնքային ծառայության մասին» օրենքը⁶: «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով կարգավորվում են տեղական ինքնակառավարման սկզբունքները, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, դրանց իրավական, տնտեսական, ֆինանսական հիմքերն ու երաշխիքները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները, իսկ «Համայնքային ծառայության մասին» օրենքով կարգավորվում են համայնքային ծառայության պաշտոնների և դասային աստիճանների դասակարգման, համայնքային ծառայության պաշտոնի նշանակման, ատեստավորման և վերապատրաստման, կադրերի ռեզերվի, համայնքային ծառայողների իրավական վիճակի, համայնքային ծառայության կազմակերպման և ղեկավարման, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ:

Այսպիսով՝ 2004 թ. դեկտեմբերի 14-ին «Համայնքային ծառայության մասին» օրենքը հիմք դրեց ոչ միայն տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունն ապահովող, մասնագիտական ու կառավարչական հմտություններով օժտված կայուն աշխատա-

² <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=20822>, մուտք 01.09.2022թ.

³ Տե՛ս Հարությունյան Արմեն, Հայաստանի Հանրապետության մունիցիպալ իրավունք, Երևան, «Պետական ծառայություն», 2004, էջ 86:

⁴ Տե՛ս Տեղական ինքնակառավարման հիմունքներ, ուսումնական ձեռնարկ, (ընդ. խմբ. Է. Օրդյանի), Երևան, «Պետական ծառայություն», 2000, էջ 52:

⁵ Տե՛ս ՀՀՊՏ 2002.06.21/21(196)

⁶ Տե՛ս ՀՀՊՏ 2005.01.26/7(379)

կազմերի ձևավորման, այլև՝ ընդհանրապես հանրային ծառայության ոլորտում կառուցակարգերի ու մեթոդների միասնականացման⁷:

Այսինքն՝ 2004 թվականի դեկտեմբերի 14-ի «Համայնքային ծառայության մասին» ՀՕ-43-Ն օրենքի ընդունմամբ դե յուրե 2005 թվականից Հայաստանի Հանրապետությունում ներդրվեց համայնքային ծառայությունը՝ որպես հանրային ծառայության առանձին և ինքնուրույն տեսակ:

«Համայնքային ծառայություն» հասկացության իրավական սահմանումը թեև ամրագրված էր թե՛ «Քաղաքացիական ծառայության մասին» 2001 թվականի ՀՕ-272, թե՛ «Համայնքային ծառայության մասին» 2004 թվականի ՀՕ-43-Ն օրենքներով, այնուամենայնիվ, «Հանրային ծառայության մասին» 2011 թվականի ՀՕ-172-Ն օրենքի ընդունմամբ վերը նշված օրենքներում համայնքային ծառայության հասկացությունն սահմանող հոդվածները ուժը կորցրած ճանաչվեցին և «Հանրային ծառայության մասին» (հետագայում նաև 2018 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին») օրենքով սահմանվեց համայնքային ծառայության հասկացության իրավական բովանդակությունը: Այսպես՝ «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի ՀՕ-206-Ն օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *համայնքային ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենքներով և համապատասխան ավագանու որոշումներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների իրականացմանը:*

Համայնքային ծառայության էությունը բացահայտելու նպատակով փորձենք ուսումնասիրել տարբեր երկրներում համայնքային ծառայության համակարգը և համայնքային ծառայությանը բնորոշ առանձնահատկությունները: Այսպես՝

Համայնքային ծառայությունը Ռուսաստանում. Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության⁸ համաձայն՝ տեղական ինքնակա-

ռավարման մարմինները չեն մտնում պետական համակարգի մարմինների մեջ, տեղական ինքնակառավարման մարմիններում գործում է համայնքային ծառայությունը, հետևաբար համայնքային ծառայությունը չի մտնում պետական ծառայության համակարգի մեջ և պահանջում է առանձին իրավական կարգավորում: Ռուսաստանի Դաշնությունում համայնքային ծառայությունը կարգավորվում է «Համայնքային ծառայության մասին» 2007 թվականի մարտի 2-ի N 25-Փ3⁹ դաշնային օրենքով: Ռուսաստանում տեղական ինքնակառավարման մարմիններում բոլոր պաշտոնները բաժանվում են երկու խմբի՝ համայնքային պաշտոններ (տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի պատգամավորներ, ընտրովի պաշտոնատար անձինք, համայնքների ընտրական հանձնաժողովների անդամներ) և համայնքային ծառայության պաշտոնները: Համայնքային ծառայության պաշտոնները բաժանվում են հինգ խմբի՝ 1. բարձրագույն պաշտոններ, 2. գլխավոր պաշտոններ, 3. առաջատար պաշտոններ, 4. ավագ պաշտոններ, 5. կրտսեր պաշտոններ: «Համայնքային ծառայության մասին» օրենքով ամրագրված է նաև, որ համայնքային ծառայության պաշտոն կարող են զբաղեցնել 18 տարին լրացած քաղաքացիները, ովքեր տիրապետում են Ռուսաստանի Դաշնության պետական լեզվին և բավարարում են համայնքային ծառայության պաշտոնները զբաղեցնելու համար սահմանված որակավորման պահանջները: Հարկ է նկատել, որ Ռուսաստանում նույնպես համայնքային ծառայության պաշտոնները զբաղեցվում են մրցութային հիմունքներով, որի արդյունքում ընտրված թեկնածուներից մեկը նշանակվում է համայնքային ծառայության պաշտոնին՝ նրա հետ կնքելով անժամկետ պայմանագիր: Արդեն համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողների համապատասխանությունը իրենց զբաղեցրած պաշտոններին որոշվում է ատեստավորման միջոցով, որն անցկացվում է երեք տարին մեկ անգամ, և ատեստավորումը չանցնե-

⁷ Տե՛ս Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, (Յու. Սուվարյան և ուրիշներ), Երևան, «Տնտեսագետ», 2014, էջ 115:

⁸ <http://www.constitution.ru>, մուտք 01.09.2022 թ.:

⁹ Տե՛ս Федеральный закон о муниципальной службе в Российской Федерации, 02.03.2007 г., N 25-ФЗ.

լու դեպքում համայնքային ծառայողներն ազատվում են զբաղեցրած պաշտոններից: Ռուսաստանի համայնքային ծառայությանը բնորոշ առանձնահատկություններից է նպատակային վերապատրաստումը: Համայնքային ծառայության բարձր որակավորում ունեցող անձնակազմ ձևավորելու համար տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացու միջև կնքվում է նպատակային վերապատրաստման պայմանագիր՝ ուսման ավարտից հետո համայնքային ծառայությունը տեղական ինքնակառավարման մարմնի կողմից նշված տարածքում և սահմանված ժամկետում իրականացնելու պարտավորությամբ:

Համայնքային ծառայությունը Գերմանիայում. Գերմանիայում տեղական ինքնակառավարման ձևավորման իրավական հիմք է հանդիսացել 1808 թվականի ֆոն Շտեյնի կողմից սահմանված քաղաքների պրուսական կանոնադրությունը¹⁰: Կանոնադրության համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր էին տեղական գործերը լուծել ոչ միայն իրենց անունից, այլև պետության հանձնարարությամբ: Այն ենթադրում էր համայնքային ինքնակառավարման համակարգի զարգացում, քաղաքային ներկայացուցչական մարմնի հետ միասին կազմավորվում էր կոլեգիալ գործադիր մարմին՝ մագիստրատ: Մագիստրատը գլխավորում էր բուրգոմիստրը, որը միաժամանակ իշխանության ներկայացուցչական մարմնի նախագահն էր: Գերմանիայի տեղական ինքնակառավարման մարմիններում համայնքային ծառայության մեջ են գտնվում ընտրովի պաշտոնյաները և պայմանագրային պաշտոնյաները: Ընդ որում, ընտրովի պաշտոնյաները կարող են լինել հաստիքային պաշտոնյաներ կամ արտահաստիքային պաշտոնյաներ: Արտահաստիքային պաշտոնյաներին անվանում են նաև պատվավոր պաշտոնյաներ և պատվավոր պաշտոնյաներն իրենց ծառայողական պարտականությունների կատարման հետ մեկտեղ կարող են զբաղվել նաև այլ գործունեությամբ, մինչդեռ հաստիքային ընտրովի պաշտոնյաները և պայմանագրային պաշտոնյաները չեն կարող զբաղվել այլ գործունեու-

թյամբ: Գերմանիայում տեղական ինքնակառավարման մարմինների քաղաքացիական ծառայողների վերապատրաստումն իրականացնում են մասնագիտացված հատուկ կենտրոններում, ինչպիսիք են՝ «Գերմանիայի քաղաքային ասոցիացիա», «Գերմանիայի համայնքների ասոցիացիա» և Հանրային կառավարման դպրոցը: Համայնքային ծառայության մեջ գտնվող անձը կարող է հրաժարվել ընտրովի պաշտոնից՝ տարիքային, մասնագիտական, ընտանեկան պայմաններով կամ առողջական վիճակով պայմանավորված, ինչպես նաև համայնքային խորհրդում տասը տարի ընտրովի պաշտոնում աշխատելու հիմքով: Այստեղ հատկանշական է այն, որ համայնքային խորհուրդն է վերջնական որոշում կայացնում այդ պատճառների կարևորության աստիճանի վերաբերյալ, որի հիման վրա քաղաքացին դադարեցնում է պատվավոր պարտականությունների կատարումը, իսկ այդ պատվավոր պարտականությունները կատարելուց չհիմնավորված հրաժարվելու դեպքում համայնքային խորհուրդը կարող է քաղաքացուն տուգանել:

Համայնքային ծառայությունը Ֆրանսիայում. Ֆրանսիայի կառավարության ենթակայության տակ գործում է 26 տարածաշրջան, իսկ այդ 26 տարածաշրջաններում՝ 100 դեպարտամենտ¹¹: Տարածաշրջաններում և դեպարտամենտներում կառավարությունը նշանակում է պրեֆեկտներ, ովքեր համարվում են հանրային ծառայողներ և ներկայացնում են պետությունը այդ տարածաշրջանում կամ դեպարտամենտում: 1984 թվականին տեղական ինքնակառավարման մարմինների հանրային ծառայության օրենսդրության մեջ կատարվեցին մի շարք բարեփոխումներ, որոնց արդյունքում տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատող հանրային ծառայողների համար նույնպես սահմանվեցին այն բարենպաստ պայմանները, իրավունքներն ու պարտականությունները, ինչը սահմանված էր պետական կառավարման համակարգում: Այդ բարեփոխումներից հատկանշական է այն, որ հանրային ծառայողները տեսականորեն ընտրվում են մրցութային քննության միջոցով՝ հավասար

¹⁰ Տե՛ս <https://www.oecd.org/governance/budgeting/1902398.pdf>, մուսք 01.09.2022 թ.:

¹¹ Տե՛ս <https://www.oecd.org/gov/budgeting/1902425.pdf>, մուսք 01.09.2022 թ.:

հնարավորությունների հիման վրա և գնահատվում են անկախ հանձնաժողովի կողմից: Մրցույթի արդյունքներով հաջողակ թեկնածուները գրանցվում են կադրերի ռեզերվում և ի տարբերություն պետական համակարգի հանրային ծառայողների՝ տեղական ինքնակառավարման մարմիններում այդ թեկնածուները չեն կարող անմիջապես ընդունվել աշխատանքի, այլ համապատասխան պաշտոնների նշանակվում են կադրերի ռեզերվում գրանցված և պահանջվող աշխատանքային փորձ ունեցող անձինք: Արդեն աշխատանքի ընդունված հանրային ծառայողների վերապատրաստումն իրականացնում են «Առաջխաղացման կառավարման միավորներ» և «Քաղաքացիական ծառայողների ազգային կենտրոն» միջոցապարտամենտային հասարակական կազմակերպությունները, որոնք հիմնականում կազմված են տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներից: Եթե հանրային ծառայողն ազատվում է իր զբաղեցրած պաշտոնից կամ նրա պաշտոնը կրճատվում է, ապա նրան հատուցում է տրամադրում տարածաշրջանային կառավարման մարմինը՝ մինչև նոր աշխատանք գտնելը:

Տեղական ինքնակառավարումը ԱՄՆ-ում.

Ամերիկայի Միացյալ Նահանգներն ունի աշխարհի ամենաբարդ և բազմազան տեղական կառավարումը, քանի որ այն ունի ձևի և գործառույթի հսկայական տարբերություններ ոչ միայն պետությունից պետություն, այլև նահանգների ներսում: Ամերիկայի Միացյալ Նահանգները բաժանված է 50 նահանգների, որոնցից յուրաքանչյուրը ունի իր սահմանադրությունը և էական ինքնավարություն իրենց գործերի կառավարման հարցում՝ պայմանով, որ պահպանեն մարդկանց իրավունքներն ու օրինական շահերը՝ համաձայն ԱՄՆ Սահմանադրության: Տեղական ինքնակառավարումն իրականացվում է չորս մակարդակների միջոցով՝ շրջանային կառավարություններ, քաղաքային կառավարություններ, համայնքային կառավարություններ և հատուկ շրջաններ¹²:

Պետք է նշել, որ շրջանային կառավարու-

թյունները տեղական ինքնակառավարման մարմիններ են, որոնք լիազորված են պետական օրենքներով և նահանգի սահմանադրությամբ և կարող են պարունակել մի շարք քաղաքներ, ավաններ, գյուղեր: Քաղաքային կառավարությունները կազմակերպված տեղական ինքնակառավարման մարմիններ են, որոնք լիազորված են 20 հյուսիսարևելյան և միջինարևմտյան նահանգների սահմանադրություններով և կանոնադրությամբ, և ստեղծվել են որոշակի տարածքի համար ընդհանուր կառավարում ապահովելու նպատակով: Համայնքային կառավարությունները կազմակերպված տեղական ինքնակառավարման մարմիններ են, որոնք լիազորված են նահանգների սահմանադրությամբ և օրենքներով, և ստեղծվել են որոշակի տարածքի՝ քաղաքի, գյուղի կամ թաղամասի ընդհանուր կառավարում ապահովելու նպատակով: Հատուկ շրջանները անկախ, հատուկ նշանակության կառավարական միավորներ են, որոնք գոյություն ունեն տեղական ինքնակառավարման մարմիններից առանձին, այդ հատուկ շրջանները ձևավորվում են մեկ գործառույթ (օրինակ՝ բուսական և կենդանական աշխարհի պահպանում) կամ հարակից գործառույթների ամբողջություն կատարելու համար: Վերոգրյալի հաշվառմամբ պարզ է դառնում, որ ԱՄՆ-ում համայնքային ծառայություն, որպես այդպիսին, չի գործում:

Համայնքային ծառայությունը Ղազախստանում.

Ղազախստանի Սահմանադրության¹³ համաձայն՝ տեղական ինքնակառավարումն իրականացվում է բնակչության կողմից ուղակիորեն, ինչպես նաև մասլիխաթների և տեղական ինքնակառավարման այլ մարմինների միջոցով: Ղազախստանում տեղական ինքնակառավարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Ղազախստանի Հանրապետությունում տեղական պետական կառավարման և ինքնակառավարման մասին» օրենքով¹⁴: Ղազախստանի օրենսդրությամբ համայնքային ծառայություն, որպես հանրային ծառայության տեսակ, նախատեսված չէ, տեղական ինքնակառավարման մարմինների գոր-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 132 2022

¹² https://en.wikipedia.org/wiki/Local_government_in_the_United_States#Municipal_governments, մուտք 01.09.2022 թ.:
¹³ Стѝ Конституция Республики Казахстан, 30.08.1995:
¹⁴ Стѝ Закон О местном государственном управлении и самоуправлении в Республике Казахстан, 23.01.2001 г., N 148-II:

ծառայություններն իրականացնում են մասլիխաթները և ակիմաթները, նրանց գործունեությունը կարգավորվում է պետական ծառայության մասին օրենսդրությամբ, իսկ տեղական ինքնակառավարման մարմինները դիտարկվում են որպես պետական կառավարման մարմիններ: Մասլիխաթը տեղական ներկայացուցչական մարմին է, որն արտահայտում է բնակչության կամքը և Ղազախստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան սահմանում է դրա իրականացման համար անհրաժեշտ միջոցները ու վերահսկում դրանց իրականացումը: Ակիմաթը տեղական գործադիր մարմին է, որն իր իրավասության սահմաններում իրականացնում է տեղական պետական կառավարում և ինքնակառավարում համապատասխան տարածքում: Մասլիխաթի գործունեությունը ապահովում է մասլիխաթի աշխատակազմը, իսկ ակիմաթների՝ ակիմաթի աշխատակազմը: Մասլիխաթի և ակիմաթի աշխատակազմերը պետական հիմնարկներ են, որոնց աշխատողները պետական ծառայողներ են, նրանց գործունեությունը կարգավորվում է պետական ծառայության մասին Ղազախստանի օրենսդրությամբ, վարձատրվում են տեղական բյուջեից և մասլիխաթի կամ ակիմաթի լիազորությունների դադարեցման դեպքում պետական ծառայողները շարունակում են իրենց գործունեությունը: Մասլիխաթի կամ ակիմաթի պետական ծառայողներին պաշտոնի նշանակում, պաշտոնից ազատում, արձակուրդ և խրախուսում տրամադրում և աշխատանքային հարաբերությունների հետ կապված հարցերը լուծում է մասլիխաթի քարտուղարը, իսկ ակիմաթի աշխատակազմում՝ աշխատակազմի ղեկավարը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով առանձին երկրների փորձը համայնքային ծառայության կազմակերպման և իրավական կարգավորման ոլորտում՝ կարող ենք արձանագրել, որ յուրաքանչյուր երկրում համայնքային ծառայությունը, տեղական ինքնակառավարման առանձնահատկություններով պայմանավորված, ունի յուրահատուկ հատկանիշներ և առանձնակի նշանակություն: Հարկ է նշել նաև, որ համայնքային

ծառայությունն իր նշանակությամբ կարելի է դիտարկել որպես հանրային, իրավական, սոցիալական, էթիկական և կազմակերպական-կառավարչական ինստիտուտ¹⁵: Այսպես՝ Համայնքային ծառայությունը *հանրային* ինստիտուտ է, քանի որ իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմիններին Սահմանադրությամբ և օրենքով վերապահված խնդիրներ ու գործառույթներ, ֆինանսավորվում է պետական և համայնքային բյուջեներից և ծառայում է հանրային շահին: Պետք է արձանագրել, որ հենց այս հատկանիշով համայնքային ծառայությունը հանդես է գալիս որպես հանրային ծառայության բաղադրատարր:

Որպես *իրավական* ինստիտուտ՝ համայնքային ծառայությունը կարգավորում է համայնքային ծառայության պաշտոնների և դասային աստիճանների դասակարգման, պաշտոնի նշանակման, ատեստավորման ու վերապատրաստման, կադրերի ռեզերվի, համայնքային ծառայողների իրավական վիճակի, կազմակերպման և ղեկավարման հետ կապված հարաբերությունները: Համայնքային ծառայության հետ կապված հարցերը կարգավորվում են Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, «Հանրային ծառայության մասին», «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքներով և իրավական այլ ակտերով:

Որպես *սոցիալական* ինստիտուտ՝ համայնքային ծառայությունը ներկայացվում է համակարգի խնդիրների և գործառույթների իրականացումն ապահովող քաղաքական ու հայեցողական պաշտոնների, համայնքային ծառայողների և քաղաքացիական աշխատողների սոցիալական կազմով և դրանց համար սահմանված սոցիալական երաշխիքներով, վարձատրության և խրախուսման կառուցակարգով:

Համայնքային ծառայությունը նաև *էթիկական* ինստիտուտ է: Այն պահանջում է, որպեսզի համայնքային ծառայողը պահպանի վարքագծի կանոնները, էթիկայի նորմերը, հարգի պետական խորհրդանիշները, պետական լեզուն, ղեկավարվի մարդասիրության և արդարության սկզբունքներով, բարոյական նորմե-

¹⁵ Տե՛ս Համայնքային ծառայության հիմունքներ, ուսումնական ձեռնարկ (տնտ. դոկ. պրոֆ. Է. Հ. Օրոյանի ընդհ. ղեկ. և խմբ.), Երևան, Օր-Դար, 2009, էջ 17:

րով, հարգի մարդու արժանապատվությունը՝ անկախ նրա ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, հայացքներից, սոցիալական ծագումից, գույքայնի այլ դրությունից:

Որպես կազմակերպական-կառավարչական ինստիտուտ՝ համայնքային ծառայության խնդիրն է ապահովել համայնքային ծառայության համակարգի բնականոն գործունեությունը: Այս առումով համայնքային ծառայության ղեկավարման և կազմակերպման մարմիններն են՝ Կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը) և համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը:

Ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս եզրահանգել նաև, որ համայնքային ծառայության հետ կապված հարաբերությունները կարելի է դասակարգել երկու խմբի՝ արտաքին և ներքին¹⁶: Արտաքին հարաբերությունների շարքին են դասվում համայնքային ծառայողների կողմից իրենց ծառայողական պարտականությունների կատարումը: Այդ հարաբերությունների հիմնական տարբերակիչ հատկանիշն այն է, որ համայնքային ծառայողը դրանցում հանդես է գալիս ոչ թե իր, այլ տեղական ինքնակառավարման մարմնի անունից՝ որպես վերջինիս ներկայացուցիչ և գործում է այդ մարմնի շահերից ելնելով՝ ապահովելով տեղական ինքնակառավարման մարմնի իրավասությունից բխող համապատասխան գործառույթների կատարումը: Ներքին հարաբերությունները կապված են հիմնականում համայնքային ծառայողներին ծառայության ըն-

դունելու, ծառայություն անցնելու, սոցիալական երաշխիքների ապահովման, խրախուսման, կարգապահական պատասխանատվության ենթարկելու, ատեստավորման, վերապատրաստման, ինչպես նաև ծառայությունից օրենքով սահմանված կարգով ազատվելու հետ: Ներքին հարաբերություններն առաջանում են հիմնականում տեղական ինքնակառավարման մարմնի և համայնքային ծառայողի միջև, և այս հարաբերությունների հիմնական տարբերակիչ հատկանիշն այն է, որ այս պարագայում համայնքային ծառայողն արդեն հանդես է գալիս իր անունից և գործում է՝ ելնելով անձնական շահերից:

Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ կարող ենք արձանագրել, որ համայնքային ծառայության ձևավորումը հիմնականում կապված է տեղական ինքնակառավարման ինստիտուտի ձևավորման, կայացման և զարգացման հետ, տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունները իրականացվում են համայնքային ծառայության միջոցով, որին ներհատուկ են ինչպես պետական ծառայությանը բնորոշ հատկանիշներ, այնպես էլ յուրահատուկ հատկանիշներ: Համայնքային ծառայությունը նույնպես մասնագիտական գործունեություն է՝ ուղղված օրենքներով և ավագանու որոշումներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների իրականացմանը, ֆինանսավորվում է համայնքային բյուջեի հաշվին և ծառայում է հանրային շահին, որով պայմանավորված էլ հանդիսանում է հանրային ծառայության առանձին և ինքնուրույն տեսակ:



¹⁶ Стѝи Бондаренко М.В., Правовое регулирование труда муниципальных служащих, Обнинск, Институт муниципального управления, 2001, стр. 83.

ԼԻԱՆԱ ՄԱԼԽԱՍՅԱՆ

Իրավ.գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի դոկտորանտ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գլխավորը, ինչի վրա կառուցվում է պետության հատկանիշների դինամիկ շարքը՝ դրանք այն հատկանիշներն են, որոնցից ձևավորվում է պետության տեսական մոդելը: Հենց դա է հանդիսանում «պետություն» հասկացության սահմանման հիմքը: Սակայն այդ հատկանիշներից ոչ բոլորը կարող են անվերապահորեն ընդունվել: Դրանցից մի մասի կիրառումը պետության նկատմամբ կասկածելի է, մնացածները պահանջում են հստակեցում՝ հաշվի առնելով ներպետական օրենսդրության ներկայիս իրավիճակը, միջազգային իրավունքը, պետական շինարարության պրակտիկան ու միջպետական փոխհարաբերությունները, ինչպես նաև՝ այն գլոբալիզացիոն գործընթացները, որոնք էական ազդեցություն են գործում ժամանակակից աշխարհում պետության վիճակի վրա:

Անկախ հասարակական-տնտեսական ֆորմացիայի տեսակից, քաղաքականության բնույթից, մշակույթի, ժողովրդավարության և այլնի զարգացման մակարդակից, պետությունը՝ դա հատուկ քաղաքական կազմակերպություն է, սոցիալական ինստիտուտ, հրապարակային իրավական հաստատություն, որը հասարակության մեջ գործում է պետության շահերից ելնելով: Պետությունը, լինելով հասարակության մի մասը, չի ծուլվում դրա հետ, թեպետ մի շարք դեպքերում, մասնավորապես, միջպետական փոխհարաբերությունների ընթացքում, ասոցացվում է հասարակության հետ, քանի որ ներկայացնում է տվյալ հասարակությունը իր պետական տարածքից դուրս: Սակայն պետք չէ մոռանալ այն հանգամանքը, որ պետությունը միշտ հարաբերականորեն ինքնուրույն է հասարակությունից: Այն առաջին հերթին արտա-

հայտում է հրապարակային շահերը և իրականացնում իշխանությունը՝ նպատակ ունենալով պաշտպանել ու ապահովել տվյալ շահերի իրագործումը: Դիտարկելով պետության հատկանիշների վերաբերյալ հարցը կարելի է առանձնացնել պետության հատկանիշներ սահմանող հետևյալ խմբերը.

- ա) հատկանիշներ, որոնք տարբերում են պետությունը՝ նախապետական հասարակությունից,
- բ) հատկանիշներ, որոնք տարբերում են պետությունը այլ սոցիալական և քաղաքական կառույցներից (կուսակցությունից, արհմիություններից, եկեղեցուց և այլն).
- գ) հատկանիշներ, որոնք տարբերում են պետությունը միջազգային իրավունքի այլ սուբյեկտներից:

Պետության պարտադիր հատկանիշներից է ինքնավարությունն (սուվերենությունը), որը վճռորոշ նշանակություն ունի ցանկացած պետության կյանքի ու գործունեության համար՝ այն, առանց ինչի պետությունը չի կարող գոյություն ունենալ¹: Ինչպես գրել էր Բ.Ս. Էբլեևը, «ողջ ժամանակակից ժողովրդավարությունը, այդ թվում՝ դրա նախնական մոդելը, որն ամրագրված է Սահմանադրության մեջ, հիմնվում է ժողովրդական ինքնավարության գաղափարի վրա»²: Այս գաղափարից ելնելով, ժողովուրդն ինքն իրավունք ունի որոշել իր իշխանության կիրառման ոլորտները:

Ժողովուրդն առանձնացնում է ինքնավարության որոշակի ծավալն ու իր իրավունքների մի մասը «հանձնում է» պետությանը, ինչի արդյունքում վերջինս դառնում է սուվերեն և իրականացնում է իշխանությունը ժողովրդի անու-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 132 2022

¹ Стів Мамонов В. В. Государственный суверенитет и территориальная целостность- главные принципы современной российской государственности //Гос. И право. 2004. N 4: էջ 5:
² Стів Эблеев Б. С. Диалектика индивидуального и коллективного в организации социума и ее отражение в Конституции (К методологии исследования) // Гос. И право. 2004. N 2. էջ 11:

նից, ժողովրդի նկատմամբ ու ժողովրդի շահերից ելնելով³:

Ինքնավարությունը՝ գիտական բազմաթիվ սահմանումներից մեկի համաձայն, իրենից ներկայացնում է իշխանության գերակայությունը, միասնությունը, ինքնավարությունն ու անկախությունը: Տվյալ եզրույթը, որն առաջին անգամ օգտագործվել է ֆրանսիացի մտածող Ժ. Բոդենի աշխատության մեջ, ծնվել է իբրև իշխանության հատկություն, որն իրականացվում է դրա հստակ կրիչի կողմից, այլ ոչ թե իբրև պետության հատկություն⁴: Պետության՝ իբրև միապետի կամ այլ կառավարիչների անձից վերացարկված իրավունքի ինքնուրույն սուբյեկտի մասին պատկերացումների առաջացման հետ միաժամանակ, ինչպես նաև՝ դրանում ապրող ժողովրդի ամբողջականությունից, ինքնավարության մեջ սկսեցին տեսնել ոչ թե բուն պետական իշխանությունը, այլ՝ դրա առանձնահատուկ հատկությունները, որոնք կապված են իշխանություն կրողի կերպարի հետ:

Վերլուծելով պետական ինքնավարության մասին ձևավորված պատկերացումները ու այդ հասկացության վերաբերյալ տարբեր պետաիրավական դպրոցների կողմից մշակված սահմանումները⁵, չի կարելի անտեսել այն գաղափարը, որ պետական ինքնավարության ընդհանուր իմաստն ու բովանդակությունը գերակշռող մեծամասնության դեպքերում, չնայած տվյալ հարցում նշանավոր տարրընթերցումների, մի կողմից, վերջին հաշվով հանգեցվում են երկրի ներսում պետական իշխանության գերակայությանը՝ դրա սահմաններում գոյություն ունեցող մնացած բոլոր սոցիալական իշխանությունների նկատմամբ, քաղաքացիների տարբեր միավորումների նկատմամբ, ինչպես նաև՝ բուն քաղաքացիների նկատմամբ, իսկ մյուս կողմից՝ նույնացվում են երկրից դուրս պետական իշխանության անկախության հետ՝ այլ ինքնա-

վար պետական իշխանությունների հետ հարաբերություններում: Ընդ որում պետական իշխանության՝ իբրև սոցիալական իշխանության տարատեսակներից մեկի գերակայության ասելով, հասկացվում է այնպիսի իշխանություն, որն անառարկելի առաջնահերթություն ունի հասարակության մեջ գոյություն ունեցող սոցիալական իշխանությունների նկատմամբ: Գերագույն իշխանության գործողությունները, ընդգծում էր Գ. Գրոցին, չեն ենթարկվում ոչ մի այլ իշխանության «և չեն կարող չեղարկվել օտար իշխանության կողմից՝ դրա հայեցողությամբ»⁶: Գերագույն իշխանության «ընդհանուր կրողը» պետությունն է, իսկ «բուն իմաստով իշխանության կրողը»՝ «կամ մի անձը, կամ մի քանի անձինք՝ այս կամ այն ժողովրդի օրենքներին կամ շահերին համապատասխան»⁷:

Պետության անկախությունը մեկնաբանվում է իբրև դրա ամբողջական ինքնուրույնություն՝ իր ոչ միայն ներքին, այլև՝ արտաքին խնդիրների լուծման, արտաքին քաղաքականության ձևավորման ու իրականացման գործում և իրավահավասար է այլ ինքնավար պետությունների հետ հարաբերությունների սահմանման մեջ: Պետական ինքնավարությունը դա կարողություն է «իրավաբանորեն չկապված պետական իշխանության արտաքին ուժերի հետ՝ բացառիկ ինքորոշմանը, ուստի և ինքնասահմանափակմանը իրավակարգի սահմանման ճանապարհով, որի հիման վրա պետության գործունեությունը միայն ձեռք է բերում իրավական բնութագրին պատշաճ բնույթ»⁸:

Հարջորդ հատկանիշը դա բնակչությունն է: Այս հատկանիշը հիմնական կամ երկրորդական համարելու վերաբերյալ հետազոտողների մոտեցումներ կիսվում են: Վ. Ե. Չիրկինի մոտեցման համաձայն «առանձին հեղինակներ, ովքեր պնդում են, որ բնակչությունը պետք է դիտարկվի իբրև պետության սահմանող, ինքնուրույն հատկանիշ⁹, հանդիսանում է չհիմնա-

³ Стів Эблеев Б. С. Диалектика индивидуального и коллективного в организации социума и ее отражение в Конституции (К методологии исследования) // Гос. И право. 2004. N 2. Էջ 11:

⁴ Стів Boden J. Ouvres Philosophiques /Ed. P. Messnard. Paris, 1951; Boden J. Les six livres de la republique. Paris, 1986:

⁵ Стів Шевцов В.С Национальный суверенитет. Проблемы теории и методологи. М., 1948.

⁶ Стів Гроций Г. О праве войны и мира //История политических и правовых учений. Христоматия /Сост. В. Ячевский. Воронеж, 2000: էջ 345:

⁷ Նույն տեղում, էջ 345:

⁸ Еллинек Г. Նշված աշխ. էջ 352:

⁹ Стів Чиркин В. Е. Современное государство. М., 2001: էջ 93:

վորված, քանի որ տվյալ դեպքում փաստացիորեն հավասարվում են պետությունն ու քաղաքացիական հասարակությունը իրավասությունների շրջանակով¹⁰: Պետության հասկացության մեջ այնպիսի հատկանիշի ներառման ավանդույթը, ինչպիսին է բնակչությունը, կապված է միջազգային իրավունքի ուսմունքի ու որոշակի միջազգային պայմանագրերի հետ: Մասնավորապես, 1993թ.-ի պետությունների իրավունքների ու պարտականությունների մասին Միջամերիկյան համաձայնագրի 1-ին հոդվածը պարունակում է «մշտական բնակչություն»¹¹ հատկանիշը: Սակայն դժվար է պատկերացնել մի կազմակերպություն, որն իրականացնում է իշխանություն հասարակությունից ու բնակչությունից դուրս կամ առանց դրա: Այո, պետությունը՝ հասարակության մի մասն է և անբաժանելի է դրանից, սակայն այդ մասը դրա հետ ամբողջական միասնություն չէ, թեպետ և ներկայացնում է այն և գործում է դրա անունից:

Բնակչության՝ իբրև պետության հատկանիշի ընկալմանը, նպաստում է այն գաղափարի ամրագրումը, որը պարունակվում է բազմաթիվ սահմանադրություններում: Մասնավորապես ՌԴ Սահմանադրության հոդված 3-րդի համաձայն իշխանության աղբյուրը ժողովուրդն է: Իշխանության աղբյուրը (ժողովուրդը) և դրա սուբյեկտը (պետությունը) սերտորեն փոխկապակցված են, սակայն դա հիմքեր չի տալիս դրանք նույնական ճանաչելու համար, քանի որ Սահմանադրության նշված հոդվածում նաև գրված է, որ ժողովուրդն իրականացնում է իր իշխանությունն, ինչպես ինքնուրույնաբար, այնպես էլ՝ պետական իշխանության մարմինների միջոցով:

Որոշակի փոփոխությունների է ենթարկվել պետության այնպիսի հատկանիշը, ինչպիսին է բնակչության հետ կապը քաղաքացիության միջոցով: Ընդ որում միշտ չէ, որ ռացիոնալ բացատրության է ենթարկվում «բնակչություն-քաղաքացիություն» կայուն կառույցը: Օրինակ՝ ինչպիսին է ոչ քաղաքացիության ինստիտուտը Բալթյան երկրներում, երբ ոչ քաղաքա-

ցիները կազմում են բնակչության մոտ կեսը, կամ այն իրավիճակները, երբ մեկ ինքնավար պետությանը ձևականորեն պատկանող տարածքում փաստացիորեն գոյություն ունի մեկ այլ պետություն, որի բնակչության հիմնական մասը հանդիսանում է երրորդ պետության քաղաքացիները (Աբխազիա, Մերձ-Դնեպր, Հարավային Օսիա և այլն):

Մեր կարծիքով պետության հասկացության մեջ բնակչություն տերմինը չներառելը չի բացառում կապը պետության ու երկրի բնակչության միջև, որում պետությունն իրականացնում է իր իշխանությունը, և այդ կապը կրում է քաղաքական-իրավական բնույթ և անխզելիորեն կապված է քաղաքացիության ինստիտուտի հետ: Սակայն դրա հետ մեկտեղ, ոչ ամբողջ բնակչությունն է այդպիսի քաղաքաիրավական կապի մեջ գտնվում պետության հետ, քանի որ երկրի տարածքում կարող են ապրել մարդիկ, ովքեր չեն հանդիսանում տվյալ պետության քաղաքացիներ: Ուստի պետության սահմանման մեջ կարելի է չներառել «բնակչություն» տերմինը, սակայն այդ երևույթը չհամարել՝ որպես պետությանը վերագրվող ինքնուրույն հատկանիշ՝ մեր կարծիքով ճիշտ չէ: Ինչպես վկայում է միջազգային փորձը, պետության կողմից (Բալթյան երկրներ) իր բնակչության զգալի մասը ոչ քաղաքացիների կատեգորիային դասելը չի խոչընդոտում այդպիսի պետության՝ համաշխարհային ընկերակցության լիիրավ մասնակից ճանաչելուն:

Պետության հատկանիշների դինամիկ շարքում առանձին տեղ է զբաղեցնում տարածքը: Ի տարբերություն նախորդի՝ տվյալ հատկանիշն էական է և ընդունելի շատ ավելի մեծ թվով հետազոտողների կողմից (Բախինի, Վ.Ե. Գուլիևի, Ա.Վ. Զինովյևի, Մ.Վ. Զոլոտարևայի, Գ.Վ. Իգնատենկոյի, Յու. Դ. Կազանցևի, Բ.Ս. Կրիլովի, Կ.Տ. Կուրաշվիլիի, Յու. Ի. Լեյբոյի, Վ.Ա. Լուկաշևայի, Ն.Ի. Մատուզովի, Մ.Ա. Մոզունովայի, Ա.Ա. Միշինի, Յա. Ա. Օստրովսկու, Գ.Բ. Ստարուշենկոյի, Ռ. Ա. Տուզմուհամետովի, Տ.Յա. Հաբրիևի, Ս.Վ. Չեռնիչենկոյի, Վ.Ե. Չիրկինի, Բ.Ս. Էբզելի և այլոց): Այն միշտ առկա է, քանի

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 94:

¹¹ Տե՛ս Романов В. А. Проблема основных прав и обязанностей государства, международный правопорядок и концепция мира в XX I в. //Правоведение. 2000: N 1: էջ 192:

որ ենթադրում է քաղաքական կազմակերպության գոյությունը, որը վերահսկում է սեփական տարածքային ոլորտն ու ցրված է դրանում: Տվյալ տարածքի սահմանների վրա տարածվում է տվյալ պետության բացառիկ իշխանությունը:

Գոյություն ունեն պետական տարածքի ընկալման նկատմամբ տարբեր մոտեցումներ: Ռուսաստանյան օրենսդրության մեջ արտացոլում է գտել այն տեսությունը, որն այն կապում է դրա բնակչության ու ինքնավարության հետ: ՌԴ Սահմանադրության հոդված 4-ի նորմերը պետության տարածքը կապում են ինքնավարության հետ (մաս 1), իսկ հաշվի առնելով ժողովրդի՝ իբրև ինքնավարության կրիչի մասին դրույթները, որոնք պարունակվում են Սահմանադրության մ. 1 հոդ. 3-ում՝ բնակչության հետ: Դրա հետ մեկտեղ մ. 2 հոդ. 4-ում ամրագրված է Ռուսաստանի Դաշնության ողջ տարածքում Սահմանադրության ու դաշնային օրենքների գերակայության մասին դրույթը, իսկ այդ հոդվածի մ. 3-ում ամրագրված է, որ Ռուսաստանյան պետությունն ապահովում է իր տարածքի ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը: Դա հանդիսանում է այն պետության ազդեցության արդյունքը, որը պետության տարածքը կապում է դրա բացառիկ իրավասության հետ¹²:

«Պետության տարածք» հասկացությունը սահմանելու ժամանակ հարկավոր է ի նկատի ունենալ այն դրույթները, որոնք անմիջականորեն վերաբերվում են ոչ միայն տարածքային ինքնավարության նորմատիվ ամրապնդման ու տարածության մեջ նորմատիվ-իրավական ակտերի գործողությանը, այլև՝ պետական իշխանության սահմանադրական կառույցին: Հաշվի առնելով ձևական իրավաբանական ու հասարակագիտական կողմերը՝ պետության տարածքը հարկավոր է սահմանել իբրև պետական իշխանության միասնության ու բաժանման տարածական ոլորտ, պետական մարմինների ու պետաիշխանական լիազորությունների ցրվածություն, որոնք ձևավորում են պետության ներքին իրավասությունը:

Այսպիսով, կարելի է առանձնացնել պետության հետևյալ հատկանիշները՝

1. պետությունը՝ ապաղաքական-իրավական կազմակերպություն է, որն իրականացնում է հասարակության կառավարումը.

2. պետությունը՝ դա մի կազմակերպություն է, որը հասարակությունը կառավարելու համար օգտագործում է հրապարակային իշխանություն, որը տարածվում է ողջ հասարակության ու դրանում գործող բոլոր կազմակերպությունների վրա, ինչն այդ հասարակական իշխանությանը հաղորդում է քաղաքական բնույթ.

3. պետությունը տարածքային կազմակերպություն է, ինչը դրսևորում է նրանում, որ պետության իշխանության տակ են ընկնում դրա տարածքում գտնվող բոլոր անձինք ու կազմակերպությունները, ինչպես նաև՝ նրանում, որ այդ իշխանությունը ցրված է որոշակի տարածքում.

4. պետությունը՝ ինքնավար, ինքնուրույն կազմակերպություն՝ երկրի ներսում ու միջազգային իրավունքի ու պայմանագրերի համընդհանուր ճանաչված սկզբունքների ու նորմերի շրջանակներում, որոնք կնքված են այլ պետությունների հետ.

5. պետությունը՝ իրավական կազմակերպություն է, որը հաստատում ու ապահովում է իրավակարգը հասարակության մեջ ստեղծելով իրավական նորմեր՝ հատուկ իրավաստեղծ մարմինների ու դատարանների միջոցով:

Հետևաբար, կարելի է ձևակերպել հետևյալ սահմանումը. Պետությունը՝ դա հատուկ-քաղաքական իրավական, ինքնավար, տարածքային կազմակերպություն է, որն իրագործում է հրապարակային իշխանությունն հասարակությունում՝ ներքին և արտաքին գործառույթների իրականացման համար և ապահովում է իրավակարգը դրանում:

Ամփոփելով վերոգրյալը, անհրաժեշտ է նշել, որ գլոբալիզացման պայմաններում պետության հատկանիշները չունեն բացարձակ բնույթ: Փոխվել է պետության ու անձի միջև փոխհարաբերությունների բնույթը: Նեղացվում է պետության իշխանական լիազորությունների կիրառման ոլորտը, իսկ հասարակության մեջ իշխանությունն այն բաժանում է տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Ձևակա-

¹² Տե՛ս Kelsen H. Introduction to the Problems of Legal Theory. A Translation of the First Edition of the Reine Rechtslehre or Pure Theory of Law. N. Y., 1997:

նորեն ունենալով գերագույն իշխանություն՝ պետությունը ստիպված է ենթարկվել համաշխարհային ընկերակցության պահանջներին, միջպետական միավորների մարմինների որոշումներին, ներքին ու արտաքին քաղաքականության իրագործման ժամանակ հաշվի նստել հասարակական կարծիքի ու միջազգային ընկերակցության այլ սուբյեկտների դիրքորոշումների հետ:

Ինչպես նշում էր Ս. Սթեյջը, նոր ձևավորվող աշխարհում «գլոբալ շուկան խալխում է ինքնավարության հիմքերը, նեղացնում ազգային պետությունների գործունեության ոլորտը, համաշխարհային շուկաների անդամ ուժերն այժմ ավելի հզոր են, քան պետությունները, որոնց իբրև թե պատկանում է գերագույն քաղաքական իշխանությունը»¹³: Պետության ինքնավարությունը կախվածության մեջ է գտնվում համաշխարհային առաջնորդ տերությունների գլոբալիստական ձգտումներից և դրանց հետևում կանգնած անդրազգային կորպորացիաներից, ինչը հաստատում են Հարավսլավիայի, Իրաքի, Աֆղանստանի իրադարձությունները, «թավշյա» և «գունավոր» հեղափոխությունները հետսոցիալիստական տարածքում¹⁴:

Գլոբալիզացիայի պայմաններում բնակչության իրավական կարգավիճակը բնութագրվում է շարժունակությամբ, արագ տեմպերով տարածում է գտնում երկքաղաքացիության ինստիտուտը:

Պետության հատկանիշների, մասնավորապես՝ տարածքային հատկանիշի վրա նույնպես ազդեցություն են գործում գլոբալիզացիոն գործընթացները: Պետական-իրավական ունիվերսալիզացիայի խորացման ու զարգացման վրա էապես ազդում է պետությունների տարածաշրջանային ինտեգրումը: Այս առումով հատկանշական են Եվրոպական ինտեգրման արդյունքները, միտումներն ու հեռանկարները¹⁵: Գլոբալիզացիայի պայմաններում «կորսվում է ազգային տարածքի բուն հասկացության ի-

մաստը, քանի որ միջազգային բեմի վրա գործող վերազգային կազմակերպությունների ու ֆինանսական արդյունաբերական խմբերի համար գոյություն չունեն պետական սահմաններ»¹⁶: Պետությունների տարածքի վրա ազդում են նաև ներպետական գործընթացները, օրինակ՝ ունիտար պետությունների վերափոխումը դաշնային պետությունների՝ օրինակ՝ Բելգիա կամ Խորհրդային Միության, Չեխոսլովակիայի Հարավսլավիայի փլուզումն և այլն: Պետության այնպիսի հատկանիշի հարաբերականությունը, ինչպիսին է տարածությունը, դրսևորում է նաև նրանում, որ պետական տարածքի մի մասը կարող է փոխանցվել մեկ այլ պետության՝ պատերազմների և ռազմական գործողությունների արդյունքում կամ մեկ պետության տարածքում կարող է գոյություն ունենալ մեկ այլ պետություն և այլն:

«Պետություն» երևույթի վերլուծության ժամանակ հարկավոր է հաշվի առնել, որ պետության հատկանիշները հանդիսանում են երևույթի սահմանային ընդհանրացված մոդելի տեսական կառույցի տարրերը, որը նույնական չէ իրական իրողությանը՝ հստակ պետությանը, և արդյոք ճիշտ է դրանց նկատմամբ կիրառել «պետություն» եզրույթը, քանի որ պետական-իրավական իրողությունը շատ ավելի բազմաշերտ է, քան տեսությունը, ինչպես նաև պետության հատկանիշների մոդելն ունակ չէ բացատրելու աշխարհի քաղաքական քարտեզի վրա գոյություն ունեցող բազմաթիվ երևույթները, ինչպիսիք են, օրինակ՝ չճանաչված պետությունների երևույթը կամ այն իրավիճակը, երբ մեկ ինքնավար պետության ղեկավարը՝ Մեծ Բրիտանիայի թագուհին, միաժամանակ հանդիսանում է մեկ այլ ինքնավար պետության՝ (Ավստրալիա, Նոր Զելանդիա, Կանադա) ղեկավարը: Տեսական սխեմայի մեջ չեն տեղավորվում նաև Եվրամիությունն ու Ռուսաստանի և Բելառուսի միութենական պետությունը:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 132 2022

¹³ Strange S. The retreat of the State. Cambridg, 1996: P. 4.

¹⁴ Տե՛ս Котляр В. С. Международное право и феномен цветных революций в странах СНГ //Гос. И право. 2007. N 5: էջ 71:

¹⁵ Տե՛ս Нерсесянц В. С. Процессы универсализации права и государства в глобализующемся мире //Гос. И право. 2005. N 5: էջ 38:

¹⁶ Червонюк В. И., Гойман-Калинский И. В. Согласование интересов как вид современных законодательных технологий //Гос. и право. 2004. N 8: էջ 30:

ՆՈՐԻԿ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Կոնսոլիդացված, չկոնսոլիդացված և կոմ-բինացված սահմանադրությունները ունեն տար-բեր կառուցվածք: Չկոնսոլիդացված (չկոդիֆի-կացված) սահմանադրությունները, ամենից ա-ռաջ, բաղկացած են տարբեր հիմնական օ-րենքներից, իսկ վերջիններս երբեմն բաժան-վում են գլուխների, երբեմն հատվածների և բաժինների, որոնք ունեն ենթավերնագրեր կամ ուղղակի նշվում են թվային համարակալմամբ: Հաճախ նման հիմնական օրենքները բաժան-վում են անմիջական հոդվածների կամ պարագրաֆների: Առավել բարդ է կոմբինացված սահմանադրության կազմությունը, որը բաղ-կացած է տարբեր բնույթի ակտերից: Տվյալ դեպքում բարդ է խոսել նման սահմանադրու-թյունների ներքին կառուցվածքի որևէ միաս-նության վերաբերյալ: Անհրաժեշտ արտաքին համակարգավորվածությամբ (հատապես կո-բինացված սահմանադրությունը) դրանք չեն տիրապետում, չնայած *ներքին կառուցվածքը*՝ սահմանադրական կարգավորման համար հա-սարակական հարաբերությունների որոշակի խմբերի ընտրությունը, սահմանադրական-իրա-վական ինստիտուտների բովանդակային փոխկապվածությունը առկա է նաև տվյալ դեպ-քերում: Նման փոխկապվածությունը, և հետևա-բար, արտաքին կառուցվածքը (սահմանադրա-կան կարգավորման համար հասարակական հարաբերությունների ընտրության որոշակի ա-ռանձնահատկությունների դեպքում) առկա է նաև կոմբինացված սահմանադրություններում, չնայած նման կառուցվածքի արտաքին կազ-մությունը խիստ տարատեսակ է: Այդ իսկ պատ-ճառով կարելի է խոսել միայն կոնսոլիդացված սահմանադրության տեքստի արտաքին կա-ռուցվածքի, արտաքին համակարգի վերաբեր-յալ:

Ըստ իրենց կառուցվածքի (տարբեր հատ-վածների տեղակայման) կոնսոլիդացված սահ-մանադրությունները տարբեր են: ԱՄՆ սահ-մանադրությունն ունի յոթ խոշոր հոդվածներ, որոնք բաղկացած են բաժիններից և այլ առա-

վել փոքր հատվածներից: Քանի որ հոդվածե-րը խոշոր են, ապա սահմանադրությանը հղման ժամանակ անհրաժեշտ է նշել հոդվածը, բաժի-նը, պարբերությունը: Հետագայում ընդունված սահմանադրություններում հաստատվել է առա-վել հարմար կառուցվածք, բաժիններ, գլուխ-ներ և այլ հատվածներ հավելված են վերնագ-րերով, որոնք բնութագրում են կարգավորման այս կամ այն օբյեկտները: Ճշմարիտ է, նաև այ-սօր են ծագում սահմանադրություններ, որոնք չեն պարունակում մշտական վերնագրեր: Օրի-նակ, Դանիայի 1953թ. Սահմանադրությունը, նշված է միայն հատվածներով (I-IX), որոնք բա-ժանվում են հոդվածների («հոդվածների») ան-վանումներ չկան, առկա է միայն համարակա-լում): Սակայն, նման սահմանադրություններ ներկայումս կիրառվում են հազվադեպ: Ընդ-հանուր միտում է սահմանադրության հատված-ների հիմնական բովանդակության իմաստա-յին բացատրությունների գործնականի ընդար-ձակումը: Բազաթիվ նոր սահմանադրություն-ներում իմաստային նշումները տարածվում են հոդվածների խմբերի կամ նույնիսկ առանձին հոդվածների վրա (օրինակ, Գերմանիայի 1975թ., Պորտուգալիայի 1976թ., Իսպանիայի 1978թ. սահմանադրությունները): Սահմանադրության հստակ կառուցվածքը, ոչ միայն հատվածների, այլ նաև հոդվածների հստակ նշումը պարզեց-նում է սահմանադրությունների կիրառությու-նը, հատկապես սովորական քաղաքացիների համար, որոնց համար հեշտ է գտնել իրենց հե-տաքրքրող նյութը ըստ համապատասխան վեր-նագրերի և ենթավերնագրերի: Մյուս կողմից, սահմանադրության մասնատման ժամանակ անհ-րաժեշտ է խուսափել ավելորդ բարդեցումից, մասերի խիստ հատվածավորումից, ինչն էլ կարող է բարդեցնել սահմանադրությունների կիրառությունը: Շատ բարդ արտաքին կառուց-վածք ունի, օրինակ, Բրազիլիայի 1988թ. Սահ-մանադրությունը, որը պարունակում է բաժան-ման բազմաթիվ աստիճաններ (բաժիններ, գլուխներ, գլուխների ներսում հատվածներ,

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 132 2022

հողվածներ, լատինական թվերով և լատինական տառերով գրվող պարագրաֆներ, արաբական թվերով կետեր):

Ժամանակակից սահմանադրություններում հողվածները սովորաբար բաժանվում են մասերի: Առավել լավ է, որ և հողվածները, և մասերը նշված են արաբական թվերով: Հողվածները պետք է ունենան համատարած համարակալում սկզբից մինչև վերջ, հակառակ դեպքում (իսկ այդպես լինում է, չնայած հազվադեպ) բարդանում է կոնկրետ հողվածի որոնումները: Երբեմն, չնայած շատ հազվադեպ, հողվածերի փոխարեն առկա են պարագրաֆներ (օրինակ Հունգարիայի Սահմանադրությունը): Հավանաբար էական նշանակություն չունեն նշված սահմանադրության ոչ մեծ հատվածները որպես հողվածներ կամ որպես պարագրաֆներ: Դա կախված է ժողովրդի ավանդույթներից, սահմանադրության ստեղծողների ընտրությունից: Սակայն կարևոր է, որ հողվածները կամ հողվածների (պարագրաֆների) խմբերը ունենան իմաստային նշում: Եթե սահմանադրությունը բաժանված է պարագրաֆների, դրանց առավել լավ է տալ ենթավերնագրեր (պարագրաֆների հատվածների կամ պարբերությունների հետագա մասնատման հնարավորությունները պահպանվում են):

Սահմանադրության արտաքին կառուցվածքի, դրա գլուխների, հողվածների տրամաբանական հաջորդականության համար վճռորոշ նշանակություն ունի սահմանադրության ներքին կառուցվածքը՝ առավել ընդհանուր դրույթներից անցումը պակաս ընդհանուրներին, սահմանադրության բովանդակության, սահմանադրական-իրավական ինստիտուտների հաջորդականության և փոխկապվածության «ընդլայնումը»: Ներքին կառուցվածքը իր հերթին սահմանվում է սահմանադրության հայեցակարգային ընկալումներով: Եթե ելնենք նեղ մոտեցումներից (սահմանադրությունը կարգավորում է մարդկանց իրավունքները և խանության կառուցվածքը, կառավարման ձևը, ընտրական համակարգը) մենք կստանանք սահմանադրության ներքին, իսկ հետևաբար, նաև արտաքին կառուցվածք: Եթե կիրառվի առավել լայն մոտեցում, ներառվեն կարգավորման այլ ոլորտներ, սահմանադրության ներքին և արտաքին կառուցվածքները այլ կլինեն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ժամանակակից սահմանադրություններում կարգավորումը սկսվում է հասարակության և պետության հիմքերին (սահմանադրական կարգին) նվիրված առավել ընդհանուր նորմաներից, և հազվադեպ՝ մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակից: Վերջին մոտեցումը բնորոշ է, օրինակ, Նիդեռլանդների 1983թ. Սահմանադրությանը և ԳԴՀ 1949թ. Հինական օրենքին, սակայն կարևոր է հիշել, որ վերջին սահմանադրությունը գործածվել է ֆաշիզմի ջախջախումից հետո, երբ անհատի իրավունքների վերաբերյալ հարցը ձեռք էր բերել առանձնահատուկ նշանակություն: Որոշ այլ սահմանադրություններում (օրինակ, Ֆրանսիայի, Չեխիայի) մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի կարգավորումը առանձնացված են հատուկ սահմանադրական ակտերում (1789թ. Մարդու և քաղաքացու իրավունքների վերաբերյալ հռչակագիր, Ֆրանսիայի 1946թ. Սահմանադրության նախաբան, Չեխիայի 1992թ. Հիմնական իրավունքների և ազատությունների խարտիա): Դրանք ընդունվել են առավել վաղ ժամանակներում, քան սահմանադրության մնացալ տեքստը, սակայն ներքին կառուցվածքը (սահմանադրական-իրավական ինստիտուտների փոխկապվածությունը) առկա է նաև այս դեպքում: Նման փոխկապվածություն առկա է նաև կոմբինացված սահմանադրության մեջ, քանի որ դրա դոկտրինալ մեկնաբանությունների և գործնականի ուղիով սահմանվող կարգավորման օբյեկտը (այն այնքան ակնհաստ չէ, ինչպես կոնսոլիդացված սահմանադրության դեպքում և քիչ նկատելի, քան չկոնսոլիդացվածում) իր հիմքում հանդիսանում է ընդհանուր բոլոր սահմանադրությունների համար (ազգային առանձնահատկությունների և այլ պայմանների հաշվառմամբ): Ճշմարիտ է, սահմանադրական նորմերով օբյեկտի «ընդարձակման» (այդ թվում ժամակագրային) հաջորդականությունը չկոնսոլիդացված և հատկապես կոմբինացված սահմանադրությունների դեպքում խիստ բարդ է հաստատել: Ինչ վերաբերվում է կոնսոլիդացված սահմանադրություններին, սահմանադրական զարգացումների պրակտիկայի ընդհանրացման հիման վրա դրանց համար կարելի է հաստատել առավել նպատակահարմար ներքին կառուցվածք, դրա ինստի-

տուտների «ընդլայնում», դրա հատվածների (գլուխների, բաժինների) հաջորդականություն:

Մենք կարծում ենք, որ ամենաբարդ հարցերը, որոնք ծագում են տվյալ դեպքում, դա մարդու և քաղաքացու իրավունքների, տնտեսական հարաբերությունների և իշխանության կառուցակարգի վերաբերյալ հարցերի սահմանադրության մեջ կարգավորման հաջորդականությունն է: Մարդկանց հասարակական գիտակցության մեջ առավել հաստատվել է նրա վերաբերյալ դրույթները, որ առավելագույն արժեք հանդիսանում է ինքը մարդը: Դա ստացել է իր արտացոլումը նաև որոշ սահմանադրությունների նորմերում, այդ թվում ազգային Սահմանադրության 3-րդ հոդվածում:

Հատկապես մարդն է ձևավորում կոլեկտիվներ և հասարակություն, ստեղծում պետություն: Առանց մարդու այս ամենը գոյություն չէր ունեա: Թվում է տրամաբանական, որ սահմանադրությունները սկսեն մարդու, քաղաքացու և մարդու իրավունքներին (նկատենք նաև, պարտականություններին) նվիրված գլխից, իսկ սահմանադրության տրամաբանական սխեման կլինի հետևյալը, մարդ-կոլեկտիվ – պետություն – հասարակություն: Սակայն բացի ուղիղներից գոյություն ունեն նաև հակադարձ կապեր, որոնք երբեմն ունեն առավել մեծ նշանակություն, քան ուղիղները: Ինչպես հայտնի է, մարդու կարգավիճակը, մարդու և քաղաքացու իրավունքները և պարտականություններն անխզելի կապված են հասարակության և պետության հետ: Առանց հասարակության, կոլեկտիվի այդ իրավունքները չեն կարող գիտակցվել և իրականացվել: Ժամանակակից մարդն ապրում է պետականորեն կազակերպված հասարակության, այլ մարդկանց, կոլեկտիվների հետ սերտ փոխկապվածության մեջ, վերջիններիս նա պատկանում է ըստ տարբեր հիմքերի (արհմիությանը՝ որպես աշխատող, կուսակցությանը՝ որպես կուսակցության անդամ, գործատուների միավորմանը՝ որպես գործարար, կրոնական միավորումներին՝ որպես հավատացյալ և այլն):

Մյուս կողմից, այն ամենը, ինչ կատարվում է հասարակության մեջ, պետության տարբեր միջոցառումները վերջնական արդյունքում նախատեսված չեն հեռավոր աստղերի, այլ այս կամ այլ ձևով՝ մարդու համար: Ամենի վերջնա-

կան սպառողը (նույնիսկ տիեզերական շարժման)՝ մարդն է: Այդ իսկ պատճառով, հավանաբար, սահմանադրության սկզբում կարևոր է հակիրճ նշել մարդու որպես բարձրագույն արժեքի վերաբերյալ թեզը (ինչը կատարվել է ՀՀ Սահմանադրության մեջ), սակայն սահմանադրության բաժինները անհրաժեշտ չէ սկսել մարդու և քաղաքացու իրավունքներից: Այդ իրավունքներն ունեն կարևոր նշանակություն, սակայն դրանցով չի սպառվում մարդու որպես բարձրագույն արժեքի բնութագրությունը:

Ըստ մեր տեսանկյան կառուցվածքի (բաժինների և այլն) հաջորդականությունը պետք է հետևի դրա արտաքին կառուցվածքի տրամաբանությանը: Առանձացնենք չորս գլխավոր բաղադրիչներ, որոնց միջև փոխկապվածությունը կազմում է սահմանադրության հիմնական բովանդակությունը: Դա անհատն է (նա հանդես է գալիս որպես քաղաքացի և որպես մարդ), կոլեկտիվը, պետությունը և հասարակությունը: Դրանց փոխկապվածությունների հաջորդականությունը հանդիսանում է ոչ թե պատմական (սկզբում ծագել է մարդը, հետագայում մնացալը), այլ տրամաբանական: Ինչպես ասվել է, մարդու կարգավիճակը վերջնական արդյունքում սահմանվում է այն հասարակությամբ, որում վերջինս ապրում է, նրա շրջապատով, իսկ ժամանակակից պայմաններում (պետության ծագումից հետո) կոլեկտիվը և պետությունը հանդիսանում են հասարակության անբաժանելի բաղադրիչ հատված: Հետևաբար, ըստ մեր կարծիքի, սահմանադրության առաջին հատվածը (նախաբանից հետո, որում սովորաբար արտացոլվում է երկրի հիմնական ուղղությունները, ժողովրդի նպատակները) պետք է նվիրված լինի հասարակական կառուցվածքի հիմքերին: Դրանում կպարունակվեն մարդու, հասարակությունում կոլեկտիվի և պետության դերի վերաբերյալ հիշատակումներ: Աշխարհի երկրների մեծամասնության սահմանադրության մեջ մարդու և քաղաքացու իրավունքների (երբեմն նրանց նաև պարտականությունների) գլուխներին հաջորդում են հոդվածներ և այլն, որոնք ունեն առավել ընդհանուր բնույթ: Գոյություն ունեն նաև այլ անվանումներ «Նախաբան»՝ 1997թ. բուլղարական Սահմանադրության մեջ, «Ժողովուրդ»՝ 1937թ. իռլանդականում, «Պետական կառա-

վարման ձև»՝ 1975թ. հունականում և այլն, սակայն սովորաբար նման գլուխներում ևս ամրագրված են հասարակական և պետական կառուցվածքի առավել ընդհանուր սկզբունքները: Նմանատիպ է նաև ՀՀ Սահմանադրության կառուցվածքը, որը բաղկացած է նախաբանից, բուն բովանդակությունից (15 գլուխ) և եզրափակիչ և անցումային դրույթներից (գլուխ 16):

Եզրահանգում ենք, որ Հայաստանի Հանրապետության փոփոխված Սահմանադրության կառուցվածքը իր էությանմբ և բովանդակությամբ լիովին համապատասխանում է արդի սահմանադրականության հիմնարար դրույթներին ու պահանջներին:

Ուսումնասիրելով ՀՀ Սահմանադրության նախաբանը, հասկանում ենք, որ այն կանխորոշում է նրա առարկայական բովանդակությունը: Ընդհանրապես, Սահմանադրության նախաբանում նորմատիվ բնույթի և իրավաբանական ուժի առնչությամբ սահմանադրական իրավունքի գիտության մեջ ընդունված է, որ նախաբանի դրույթները իրավական նորմեր չեն, սակայն նորմատիվ նշանակություն ունեն Սահմանադրության մնացած դրույթների մեկնաբանման և կիրառման համար¹:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախաբանում ամրագրված են հայոց պետականության հաջորդականությունը և հիմնարար սկզբունքները, ազգային և համազգային նպատակները, ազգային և համազգային արժեքների նկատմամբ հայ ժողովրդի ընդգծված հավատարմությունը:

Ժամանակակից սահմանադրության և ՀՀ Սահմանադրության առաջին գլուխը նվիրված է սահմանադրական կարգի հիմունքներին, որում ամրագրված են պետական և հասարակական կյանքի կանոնակարգման հիմնարար, ելակետային դրույթները և սկզբունքները: Մասնավորապես, ամրագրված է հայոց պետականության ժողովրդավարական, սոցիալական և իրավական բնույթը, ժողովուրդը որպես իշխանության աղբյուր, մարդը որպես բարձրագույն արժեք և նրա անօտարելի արժանապատվությունը, իշխանությունների բաժանման սկզբունքը, իրավական նորմերի աստիճանակարգությունը, օրինականության սկզբունքը, ընտրա-

կան իրավունքի սկզբունքները, գաղափարական բազմակարծությունը և բազմակուսակցական համակարգը, պետական ինքնակառավարման և սեփականության երաշխավորումը, պետական լեզուն և խորհրդանիշները և հարակից այլ հարցերը:

ՀՀ սահմանադրության մյուս գլուխները (մինչև 15-րդ գլուխը) կարգավորում են պետական իշխանության և կառավարման մարմինների համակարգը, գործառության լիազորությունները:

Սահմանադրության 15-րդ հոդվածը նվիրված է սահմանադրության ընդունմանը, փոփոխման կարգին, հանրաքվեին, իսկ 16-րդ հոդվածը՝ պարունակում է եզրափակիչ և անցումային դրույթներ:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում կարելի է եզրակացնել, որ ժամանակակից սահմանադրություններում պետական մարմիններին նվիրված հատվածն առավել ծավալուն է: Նախկինում, երբ գերակայում էր սահմանադրական կարգավորման նկատմամբ նեղ մոտեցումը (պետական իշխանություն և անհատի իրավունքներ), սահմանադրության նման կառուցվածքը հասկանալի էր: Ժամանակակից պայմաններում, երբ գերակայում է սահմանադրության բովանդակության նկատմամբ այլ մոտեցում, այս հատվածը այդքան մանրամասն դարձնել նպատակահարմար չէ: Խորհրդարանին, պետության ղեկավարին, կառավարությանը վերաբերվող որոշ գործընթացային դրույթներ բնակչության լայն զանգվածների համար չեն հանդիսանում առանձնահատուկ կարևոր, դրանք քիչ են շոշափում վերջիններիս հետաքրքրությունները: Նրանց համար առավել կարևոր են դրույթները, որոնք վերաբերվում են ոչ թե պետական մարմինների կառուցվածքներին, դրանց գործունեության կարգին, այլ մարդու, կոլեկտիվի, պետության, հասարակության փոխկապվածությունները, մարդու դերը, հասարակական կառուցվածքի, պետության դերի սկզբունքային հարցերի լուծումները սահմանադրական մակարդակի կարգավորումներին: Կարծում ենք, որ սոցիալական համագործակցության, աշխատանքային հարաբերությունների, բաշխման (այդ թվում աշխատավարձի

¹ Տե՛ս Խաչատրյան Հ.Մ. Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը: Երևան, 1997, էջ 29:

հարցերը), հարկատվության, սեփականության, զինված ուժերի կազմակերպման, իրավակարգի սկզբունքները առավել կարևոր են սովորական քաղաքացու համար, քան խորհրդարանի գործունեության իրավակարգը կամ նախագահի պաշտոնավարության ժամկետները և այլն: Նախկինում, երբ ձևավորվող խորհրդարանները պայքարում էին թագավորական միապետության իշխանության դեմ, երբ ակտիվ պատգամավորներին թագավորական պահակախումբն ուղղում էր բանտեր անորոշ ժամանակներով, իսկ խորհրդարանը լուծարելը, սահմանադրությունում տարբեր ժամկետների և գործընթացների մանրամասն կարգավորումներն ունեին սկզբունքային նշանակություն՝ հանդիսանալով որոշակի երաշխիք խորհրդարանների և ազգային ներկայացուցիչների համար: Սահմանադրության բովանդակության համար առաջնային նշանակություն ունեն հատկապես նոր

հայեցակարգի խնդիրները ինչպիսիք են՝ ամենից առաջ որպես մարդու, կոլեկտիվի, պետության և հասարակության փոխկապվածությունը հաստատող, տնտեսական, սոցիալական, քաղաքական և հոգևոր գոյության հիմնական հարցերը: Իսկ պետության այս կամ այն մարմինների գործունեության վերաբերյալ մանրամասն հարցերը (այդպիսի նորմերը զբաղեցնում են սահմանադրության հիմնական հատվածը) կարելի է լուծել առանձին օրենքներով և կարգավորումներով, որոնք ուղղվում են անձանց համեմատական նեղ շրջանակների և անմիջական հարաբերություն չունեն բնակչության ճնշող մեծամասնության հետ:

Իհարկե, սահմանադրությունում պետք է ամրագրվեն միայն հիմնարար դրույթներ, որոնք անհարժեշտության դեպքում կկիրառվեն տարբեր օրենքներում և իրավական ակտերում:



ՎԱԶԻԿ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի, իրավունքի ինստիտուտի հայցորդ

ՈՐՈՇ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՊԱՌԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԵՎԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պետությունը հանդիսանալով հասարակության ամենակենսունակ ու արդյունավետ կեցության ձևը ունի այդ հասարակության կառավարման իրեն բնորոշ ձևերը, որի ուսումնասիրության մեկնարկը տրվել է փիլիսոփայության կողմից և մինչև այժմ քննարկվում է կաև այլ գիտություններում: Պառլամենտական կառավարումը իրավագիտության ուսումնասիրության արդիական թեմաներից է անկախ ՀՀ ներկայիս կառավարման ձևից, քանզի պառլամենտներից բացի չկա մեկ այլ պետական մարմին, որտեղ կարող են հնարավորինս ներդաշնակվել հասարակության տարբեր խավերի շահերը: Սույն աշխատանքի նպատակն է ցույց տալ կառավարման այդ ձևի առաջացման պատճառները և պառլամենտական կառավարումն ուսումնասիրել որպես գաղափարախոսություն՝ մի քանի նշանակալի օրինակներ մատնանշելով:

Ցանկացած պետությունում՝ ինի կապիտալիստական, թե սոցիալիստական, իշխանության հիմքը կազմող ճշմարտությունները չունեն վերմարդկային սկիզբ, նախախնամության տեսքով չեն երևան գալիս: դրանք ունեն մարդկային՝ բանական ծագում, որոնք ձևակերպվում և ամփոփվում են գաղափարախոսությունների, ուսուպիաների միջոցով: Պետությունը և հատկապես պետության կառավարման ձևը ևս գաղափարախոսությունների արդյունք են: Բայց ինչ է գաղափարախոսությունը, ինչպե՞ս և էրբ առաջացան պետության կառավարման ձևի վերաբերյալ գաղափարները մարդկային հասարակության մեջ ընդհանրապես և պառլամենտական կառավարման ձևի վերաբերյալ գաղափարները մասնավորապես:

«Գաղափարախոսություն» եզրույթը գիտական իմաստավորումը ժամանակակից քաղաքագիտության մեջ լուրջ տարածայնություններ

րի տեղիք է տալիս: Ներկա ժամանակներում այն ստացել է մի շարք բնութագրություններ և օգտագործվում է տարբեր սոցիալական երևույթների մատնանշման համար: Օտարալեզու գրականության մեջ այս եզրույթը հայտնի է որպես «ideology» կամ «идеология»: Նմա նարտահայտությունները կապված են հունարեն երկու բառերի հետ՝ idea և logos: Դրանցից առաջինը՝ idea-ն, նշանակում է միտք, հասկացություն կամ իմաստ: Երկրորդը՝ logosը, անտիկ փիլիսոփայության մեջ նշանակում էր խոսք, արտահայտություն կամ համընդհանուրորեն: Ժամանակի ընթացքում «logos» բառը ձեռք բերեց «գիտություն» իմաստը և ձևափոխված կերպով «logia» հաճախ օգտագործվում էր այս կամ այն գիտական ճյուղի անվանման համար: Գաղափարախոսությունը հայացքների, գաղափարների համակարգ է, որն արտահայտում է մեծ հասարակական խմբերի արմատական շահերը՝ ազգերի, դասերի, հասարակությունների, սոցիալական շարժումների: Արտահայտելով սոցիալական շահերը արժեքների, իդեալների և նորմատիվ պահանջների տեսքով, գաղափարախոսությունն իրականացնում է տվյալ սոցիալական հանրույթի ներկայացուցիչների համախմբման կարևոր գործառույթ, խրախուսում է համերաշխությունը և հենք է ծառայում քաղաքական ծրագրերի համար¹:

Խ. Օրտեգաի Գասետի դիտարկմամբ՝ մարդկային պատմության ընթացքը սերտորեն կապակցված է տվյալ ժամանակահատվածում հավատալիքների ազդեցության հզորության հետ: Ըստ նրա՝ մարդը համոզմունքների հավաքածու է և առանց որոշակի կենսական կողմնորոշիչների նա չի կարող գործել, ապրել և ընդհանրապես գոյատևել: Ըստ այդմ՝ նա գտնում է, որ «հենց համոզմունքներն են կառուցարկում մար-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 132 2022

¹ Ա.Փ Ենգոյան «Գաղափարախոսության հասկացությունը», քաղաքագիտական նյութեր, դասախոսություններ, Երևան 2014թ. էջ 3:

դուն, մարդն այն է, ինչ իր համոզմունքները»² Իսկ մարդն էլ այն սուբյեկտն էր, որն իր գաղափարներով արարել է մարդկության պատմության ամենամեծ համընդհանուր հայտնագործությունը՝ պետությունը, որի կատալեգործման համար դարից դար խորհել են ժամանակի հզոր փիլիսոփաները՝ անդրադառնալով նաև պետության կառավարման ձևին: Աներկբա է, որ պետությունների առաջացման հետ միասին առաջացան նաև պետության կառավարման ձևերը: Պետության առաջացման վերաբերյալ կան բազմաթիվ տեսություններ, սակայն պետության կառավարման ձևի առաջացման պատճառների վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ կոնկրետ ուսումնասիրությունները սակավ են: Եթե պետությունը բնորոշվում է որպես հասարակական զարգացման արդյունք՝ ծագելով մարդկային հասարակության հասունության որոշակի աստիճանում, դառնալով այդ հասարակության հիմնական կառավարող համակարգը,³ ապա պետության կառավարման ձևը կարելի է բնորոշել որպես այդ համակարգի կառավարման միակ միջոց, որը ի տարբերություն պետության առաջացման հաճախ եղել է ոչ թե էվոլյուցիոն այլ ռեվոլյուցիոն ճանապարհով: Անտիկ շրջանում պետության կառավարման ձևի վերաբերյալ գաղափարները չէին ընդգրկում առանձին աշխատությունների մեջ, այլ ներառված էին պետության վերաբերյալ գաղափարների մեջ, ինչպես օրինակ մ.թ.ա. 360 թ.ին արել է Պլատոնը: Նա իր՝ «Երկխոսություն նվիրված Իդեալական Պետություն» աշխատության մեջ իդեալական պետությունը բնութագրում է որպես գաղափարների իրականացում և գաղափարների աշխարհի առավելագույն հնարավոր մարմնացումը Պոլիսի (պետության) հասարակական քաղաքական կյանքում:⁴ Պլատոնը, անշուշտ, իրավացի էր, երբ գրում էր, որ աշխարհը բացարձակ մեկուսացված չէ գաղափարների աշխարհից: Ցանկացած մարդ ունի իր ներաշխարհը՝ գաղափարների վրա հիմնված:

Նա որոնում էր այնպիսի կառավարման ձև, որի նպատակը ոչ թե անհատական, խմբային, այլ հասարակական բոլոր անդամների բարեկեցությունն է, քանի որ աշխարհում «եզակին ներդաշնակ է ընդհանրականին, տիեզերականը՝ մարդկայինին» Ուստի անհատական բարիքը չի կարող վերջնանպատակ լինել:⁵ Ըստ Պլատոնի արդարությունը այն է, երբ յուրաքանչյուրը զբաղվում է իր գործով, ոչ ոք չի միջամտում ուրիշի գործին, բացի այդ արդարությունը պահանջում է համապատասխան հիարխիկ ենթակայություն: Իդեալական պետության մեջ Պլատոնը նշում է, որ պետության մեջ կա պետություն՝ հարուստների և աղքատների, այդ երկուսի մեջ էլ կա պետություն:⁶ Իդեալական պետությունը էությանմբ արիստոկրատական է, իդեալական պետության մեջ պետք է կառավարեն փիլիսոփաները, որոնց 35 տարին լրացել է և կառավարում են 15 տարի:⁷ Արիստոկրատական պետության կառուցվածքը այն է, երբ իշխողների մեջ առանձնացվում են մի քանիսը, իսկ երբ իշխողների մեջ առանձնանում է մեկը, ապա այդ կառավարումը դառնում է թագավորական: Թեոկրատական կառավարման համակարգում (այստեղ Պլատոնը պետության կառավարման ձևը նույնացնում է պետության վարչաձևի հետ) կարևոր են ռազմական հաջողությունները, օլիգարխիայում՝ հարստությունը, իսկ դեմոկրատիայում ազատությունը և հենց դա էլ կործանում է այդ կառավարման համակարգը: Յուրաքանչյուր կառավարման ձև մահանում է ներքին հակասությունների պատճառով, որն առկա է սեփական սկզբունքներում, դրա չարաշահման հետևանքով: Դեմոկրատիայի դեպքում հավասարությունը հավասարեցնում է անհավասարներին:⁸ Նա քննադատում է ժողովրդավարությունը և տալիս է դեմոկրատիային՝ որպես հարստացած դարբնի ծաղրական կերպեր, որը ճաղատ է և կարճահասակ, նոր է դուրս եկել բանտից, լվացվել լոգարանում, նոր վերարկու է ձեռք բերել և պատրաստվում է ամուսնանալ իր տիրոջ դստեր

² Ортега-и-Гассет Х. Избранные труды. М., 1997, с. 437:
³ Վ. Ն Խրոպանյով 1997թ. էջ 64
⁴ В.С. Нерсисянц История политических и правовых учений 2004г М. стр.57
⁵ В. Ф. Асмус Мыслители прошлого, Платон, изд. «Мысль», М., 1969 стр157
⁶ В.С. Нерсисянц История политических и правовых учений 2004г М. стр 60
⁷ А. Н. Чанышев, Философия древнего мира курс лекций М, 1981 стр 276
⁸ В.С. Нерсисянц История политических и правовых учений 2004г М. Стр 60

հետ՝ օգտվելով նրա աղքատությունից և անօգնական լինելուց, հաճախ հանդուգն է, խճճված և ազնիվ:⁹ Արիստոտելը ևս, պետությունը համարում էր մարդկանց համակեցության բարձրագույն ձև, իսկ լավագույնը, նրա դիտումով, պետական կառավարման այն ձևն է, որտեղ ազատությունը համատեղվում էր կարգին, իսկ արիությունը՝ մշակույթի հետ՝ «որտեղ բոլորը ղեկավարում են ամեն մեկին, իսկ ամենքը՝ բոլորին»:¹⁰ Արիստոտելը «Պոլիտիկա» աշխատության մեջ անդրադառնում է պետական կառավարման ձևերի հարցին՝ փորձելով բացատրել դրանց տիպերը, տարբերակիչ գծերը: Պետական կառույցը (politeia) առաջնահերթ բարձրագույն իշխանության և ընդհանրապես պետական պաշտոնների կազմակերպման ոլորտում կանոնակարգն է, բարձրագույն իշխանությունը ամենուրեք կապված է պետական կառավարման կարգի հետ (politeuma): Արիստոտելը, որպես մեկնաբանություն, բերում է այն օրինակ, որ դեմոկրատական երկրներում բարձրագույն իշխանությունը ժողովրդի ձեռքին է, իսկ օլիգարխիայում՝ հակառակը, ուստի պետական կարգը մենք դրանցում տարբեր կերպ ենք անվանում: Նույնն է նաև մնացյալի պարագայում: Նահարցել բարձրացնում թե «ինչ նպատակով է առաջացել պետությունը և որքան տեսակներ ունի իշխանությունը, որը ղեկավարում է մարդուն նրա հասարակական կյանքում: Ինչպես արդեն նշել ենք, ըստ Արիստոտելի՝ մարդը քաղաքական էակ է, ուստի անգամ այն մարդիկ, ովքեր փոխօգնության կարիք ամենևին չունեն, միևնույն է, ձգտում են համատեղ կենսագործունեության»:¹¹

Պետության ցանկացած ձևի դեպքում առկա է քաղաքացի հասկացության հստակ սահմանում, հիմքեր այս կամ այն քաղաքացիների խմբին որոշակի իրավունքներ վերապահելու: Քաղաքացի հասկացության, հետևաբար նաև պետության ձևի փոփոխության հետ փոփոխվում է նաև բուն պետությունը: Արիստոտելը առանձնացնում է պետության կառավարման ճիշտ և սխալ ձևեր, ճիշտ է կառավարման այն

ձևը, երբ կառավարողները ի նկատի են ունենում ընդհանուրի շահը, իսկ սխալի կառավարման դեպքում՝ իրենց մասնավոր շահը: Ամենաճիշտ կառավարման ձևը Արիստոտելը անվանում է պոլիտեա, որտեղ իշխում է մեծամասնությունը ի շահ ընդհանուրի: Մյուս կողմից հենց պոլիտեան հանդիսանում է օլիգարխիայի և դեմոկրատիայի խառնուրդ:¹²

Իհարկե սրանք դեռ գաղափարներ էին պետության և կառավարման ձևի վերաբերյալ, իսկ այդ գաղափարներին համահունչ պետություններ դեռևս ձևավորվան սաղմնային փուլում էին: Հետազոտողների մեծ մասի կարծիքով մինչև Ք.ա առաջին հազարամյակի կեսերը Հին Հունաստանում և Հռոմում ձևավորվել էին իշխանության այլ, սկզբունքորեն նոր՝ հիմքում ժողովրդավարական համակարգեր: Իրականացվեց իշխանությունների բաժանումը, դրանց կառուցվածքում առաջին անգամ առանձնացվեց որպես ինքնուրույն թև օրենսդիր շխանությունը (Չորս հարյուրի խորհուրդը՝ Սոլոնի օրոք, Հինգհարյուրի խորհուրդը՝ Կլիսթենեսի օրոք, Սենատը՝ հին Հռոմում):¹³ Անտիկ աշխարհում իշխանության օրենսդիր մարմինների հայտնվելը թելադրված էր հասարակության տնտեսական զարգացմամբ՝ արհեստների և առևտրի զարգացմամբ, ինչով մեծամասամբ զբաղվում էր հասարակ ժողովուրդը՝ դեմոսը, իսկ տոհմիկ ազնվականության արտոնությունները վերջնականորեն վերացան Կլիսթենեսի բարեփոխումների արդյունքում, ինչը ավարտին հասցրեց Աթենք ըուժեղ, ժողովրդավարական իշխանությունների բաժանմամբ պետություն վերածելու գործը, որտեղ առաջնայինությունը պատկանում էր ժողովրդական ժողովին:¹⁴ Սակայն իշխանությունների բաժանման սկզբունքը գործնականում իրագործելը դեռևս բավարար չէր պառլամենտարիզմի ծագման և զարգացման համար, բայց փաստորեն առաջացան կոլեգիալ կառավարման մարմնի վերաբերյալ ամբողջական և տվյալ ժամանակաշրջանի համար բավականին առաջադեմ գաղափարներ: Աստիճա-

⁹ А. Н. Чанышев, Философия древнего мира курс лекций М, 1981 стр 272
¹⁰ В.Ф. Асмус Мыслители прошлого, Платон, изд. «Мысль», М., 1969 стр 171
¹¹ Аристотель, Сочинения в четырех томах, Том 4, М., 1983, стр 455
¹² В.С. Нерсисянц История политических и правовых учений 2004г М. Стр 60
¹³ Амеллер М. Парламенты- М, 1967, с 71-72
¹⁴ Романов Р.М Истоки парламентаризма М.1988 с 38

նաբար Հին Հռոմի և անտիկ Հունաստանից հետո պառլամենտական կառավարման պահանջը սկսեց մեծանալ նաև այլ երկրներում: 1265 թ.ին Անգլիայում պետական իշխանության համար մղվող սոցիալ-քաղաքական պայքարի արդյունքում հրավիրվեց (Սիմոն դը Մոնֆորը) առաջին պառլամենտը: 1689թ-ին իրավունքների մասին օրենսգիրքը վերջնականորեն ճանաչեց պառլամենտը որպես պետական իշխանության պարբերաբար հրավիրվող մարմին: Իրավունքների մասին օրենսգիրքը ներկայացուցչական կառավարման երաշխիքներ սահմանելու նպատակով արգելեց թագավորին իր որոշումներով դադարեցնել օրենքների գործողությունը, օրենսդրությունից բացառություններ անել, կամայականորեն հարկեր սահմանել, ուժով սպառնալ պառլամենտին, միջամտել ընտրություններին և խախտել քննարկումների ազատությունը պառլամենտում: Պառլամենտը այս ձեռքբերումը հասավ հասարակական-քաղաքական պրոցեսների արդյունքում, սակայն օրենքների միջոցով դարձավ պետական իշխանության մշտական մարմին՝ իրականացնելով պետական իրավական քաղաքականությունը:¹⁵ Իրավաստեղծ գործունեության ընթացքում պառլամենտները հասան նրան, որ քաղաքականությունը սկսեց պայմանավորվել իրավունքի հիմնարար սկզբունքներով (օրինակ՝ իշխանության բարձրագույն մարմինների ընտրովի լինելու կարգը, այլ ոչ թե իրավունքն էր որոշվում քաղաքականությամբ: Մեր կարծիքով հենց քաղաքականության և իրավունքի հարաբերակցությամբ, նրանց առաջնային կամ երկրորդային լինելով էլ որոշվում է տվյալ պետության ժողովրդավար ու իրավական լինելը: Հենց օրինականությամբ պետք է վճռվի պետության կառավարման ձևը, այլ ոչ թե պետության կառավարման ձևից բխի օրինականությունը: Բուրժուական հեղափոխությունների, դրանց գաղափարական հայրերի (Թ. Հոբս, Ջ. Լոք, Շ. Մոնտեսքյո, Ժ, Ռուսո) շնորհիվ իրավաստեղծությունը դարձավ պետության կարևորագույն ֆունկցիաներից մեկը, իսկ պառլամենտը դարձավ ոչ միայն սոցիալական տար-

բեր խավերի հաշտեցնող մարմին, այլև հասարակության բոլոր անդամների համար սկսեց ընդունել վարքագծի համապարտադիր կանոններ: Պառլամենտարիզմի վերաբերյալ ժամանակակից գիտական ուսումնասիրությունների վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել պառլամենտարիզմի հասկացության վերաբերյալ երկու հիմնական մոտեցում: Առաջինի դեպքում այն դիտվում է որպես կառավարման ձև, իսկ երկրորդ դեպքում հենվելով տարածաքաղաքական վերլուծության վրա պառլամենտարիզմը դիտարկվում է պետական իշխանության կազմակերպման և գործառույթայինացման համակարգի տեսանկյունից, որի բազիսը պետք է հանդիսանա իշխանությունների տարանջատումը, հասարակական բոլոր խավերի շահերի հաշվի առնելը, բազմակուսակցականությունը, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների երաշխավորումը¹⁶:

Ինչպես դասակարգերի միջոցով տեղի ունեցավ պետության առաջացումը, այնպես էլ տեղի ունեցավ պետական իշխանության բաժանումը պետության կառավարման ձևերի միջոցով: Այստեղից կարելի է հանգել այն եզրակացության, որ պետության կառավարումը իշխանության բաշխման ձև էր՝ դասակարգերի և դասակարգերի ներկայացուցիչների միջոցով: Պետության կառավարման ձևը որոշվում է կախված այն հանգամանքից, թե հասարակական-քաղաքական զարգացման արդյունքում տվյալ պետությունում իշխանության եկող դասակարգերը ինչ պատմական ավանդույթներ և ինչ հասարակական աջակցություն ունեն:

Այսպես օրինակ, եթե միապետական կառավարման ձևի պարագայում միապետի հասարակական հենարանը առավելապես հարուստ ֆեոդալներն էին, ապա միապետության դեմ ընդվզողների ու հանրապետական կառավարման ձևի ջատագոռների հասարակական հենարանը հասարակության չունևոր կամ միջին խավն էր: Երբ 18-19-րդ դարերում Արևմտյան եվրոպայում միապետական կառավարման անկման տենդենց նկատվեց, սկսեցին անցնել հան-

¹⁵ Մ.Ա. Հարությունյան «Արևմտաեվրոպական ետխորհրդային պառլամենտարիզմը համեմատական հեռանկարում» 2020թ էջ 52

¹⁶ Парламентское право России: монография / А. И. Абрамова, В. А. Витушкин, Н. А. Власенко и др.; под ред. Т. Я. Хабриевой. М.: Издание Государственной Думы, 2013. С. 11.

րապետական կառավարման ձևին, նախագահների հասարակական հենարանը տարիների ընթացքում սկսվեց նմանվել միապետի արքունի շրջապատին հարիր ֆեոդալներին, որոնց փոխարինել էին հարուստ գործարարները:

Նախագահական կառավարման «հայրը» միապետական կառավարումն է, իսկ պառլամենտական կառավարման ձևը լինելով առավելապես միապետի կամ նախագահի իշխանությունը սահմանափակող չունի պատմական նմանօրինակ ավանդույթ, երիտասարդ է և բնականաբար հաճախ պարտվում է նախագահական կառավարման ձևին: Նախագահական երկրներում պառլամենտը կարծես հանդես է գալիս որպես հասարակ ժողովրդի ներկայացուցիչ իշխանության մեջ, քանի որ պատգամավորների մեջ ընդգրկվում են տեղական, համայնքային հեղինակություն ու ճանաչում ունեցող գործիչներ: Իսկ նախագահը կարծես ներկայացնում է հասարակության էլիտա հանդիսացող խավը, քանզի նախագահը սովորաբար ընտրվում են տարիներով հասարակական-քաղաքական գործունեությամբ զբաղվող ֆինանսապես ապահով մարդիկ: Եվ հենց ընտրությունների ընթացքում էլ տնտեսապես իշխող դասակարգը փորձում է ձեռք բերել (կամ պահպանել) նաև քաղաքական իշխանություն:

Թե՛ նախագահական, թե՛ պառլամենտական կառավարման ձևերը ձգտում էին ժողովրդավարության, ինչպես իրավացիորեն նշում է ավստրիացի փիլիսոփա Դենիս Մյուլլերը. «ներկայումս ժողովրդավարությունը բնորոշվում է որպես քաղաքական համակարգ, որտեղ հասարակության մի մասը մասնակցություն է ունենում կառավարության կողմից իրականացվող պրոցեսներին»¹⁷: Թե՛ նախագահական, թե՛ պառլամենտական կառավարման ձևերի պարագայում էլ հիմքում առկա էր դասակարգերի բախում: Այդ դասակարգերի մեկի գաղափարախոսությունն էլ մեր կարծիքով անվանվում է պառլամենտարիզմ: Պառլամենտարիզմը լինելով (նաև նախագահական կառավարման ձևը) գաղափարախոսություն, իրավական մտածելակերպի ձև, անհատականից վեր է ածվում հասարակական գաղափարախոսության, սակայն հասարակությունը երբեք միակերպ չի

մտածել, և չի կարող մտածել, ինչի արդյունքում էլ մեկ այլ կառավարման ձևի, այսինքն՝ մեկ այլ կառավարման գաղափարախոսության անցնելը խորթ ու դժվար է լինում: Պետության կառավարման գաղափարախոսությունը միջոց է իրականացնելու նաև ազգային գաղափարախոսությունը, իսկ կառավարման ձևի ընտրությունը կախված է տվյալ ժողովրդի պատմական կենսափորձից և իրավագիտակցության աստիճանից: Հանրապետական կառավարման դեպքում պառլամենտները հանդես են գալիս որպես հասարակության հայելի՝ պաշտպանելով հասարակական տարբեր խավերի տարբերույթ շահեր: Սովորաբար կառավարման ձևի փոփոխման պահանջը կամ առաջարկը գալիս է հասարակությունից, պառլամենտական կառավարումն էլ հաջորդում է նախագահական կամ միապետական կառավարման ձևին դիտվելով որպես առաջընթաց:

Ժամանակակից պետությունների պետական իշխանության անբաժան մաս են կազմում պառլամենտները, որոնք կազմված լինելով այս կամ այն կուսակցություններից, իրենց օրենսդրական գործունեության մեջ ներմուծում են նաև իրենց ներկուսակցական գաղափարախոսության ազդեցությունը, սակայն պառլամենտի գաղափարական ոլորտային ուղղվածությունը մեծ մասամբ մնում է անփոփոխ: Մեր կարծիքով, ներկայումս իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքով կառավարվող պետություններում, լինի դա պառլամենտական թե՛ նախագահական, պառլամենտական կառավարման ձևի գաղափարախոսական հիմքը հանդիսանում են տվյալ պառլամենտում առկա մշտական և ժամանակավոր հանձնաժողովներում նախաձեռնվող և ծավալվող քննարկումները որևէ օրենքի նախագծի շուրջ: Այսպես օրինակ՝ գիտության, կրթության, մշակույթի հանձնաժողովը կարծես հանդես է գալիս որպես այդ ոլորտներում ելակետային իրավական սկզբունքները նախանշող մարմին: Պառլամենտի մշտական հանձնաժողովները ցույց են տալիս այն ոլորտները, որոնց պետությունը առաջնային ուշադրություն է դարձնում: Իհարկե, այստեղ չպետք է մոռանալ, որ կառավարման ձևը դա իշխանության բաշխման ձև էր դասակարգերի

¹⁷ Мюллер Д. Разум, религия, демократия. М.: Мысль, 2015. С. 27.

միջև, հետևաբար պառլամենտում մեծամասնություն ունեցող քաղաքական ուժը իր գաղափարական պրիզմայով ևս անց է կացնում մշտական հանձնաժողովներում քննարկվող գաղափարները, իսկ գործադիր իշխանությունը հանդես է գալիս որպես այդ անմարմին գաղափարները մարմնավորող, իրագործող համակարգ: Պառլամենտական կառավարման ձևը չի կարող գոյություն ունենալ առանց գործադիր իշխանության, իսկ առանց պառլամենտի պետական կառավարում իրականացնելը ժամանակակից աշխարհում ստանում է հակաժողովրդավարական որակավորում:

Այսպիսով՝ պառլամենտական կառավարման գաղափարական հիմքը այն պայմաններն ու պատճառներն են, որոնց հիման վրա առաջացել է կառավարման այդ ձևը: Այն ծագել է դիալեկտիկական մոտիվներով՝ պայքարելով մեկ այլ կառավարման ձևի դեմ, որի արդյունքում ակնառու է դարձել պառլամենտական կառավարման ձևի առավելություններն ու թերությունները: Այստեղից կարելի անել այն դատողությունը, որ կառավարման այս ձևի գաղափարախոսության հասկացությունը հավերժ չէ, ենթակա է հաստատման և մերժման, սակայն կան արդեն իսկ տեղի ունեցած պատմաիրավական իրադարձություններ, որոնց հիման վրա էլ կատարել ենք սույն աշխատանքում առկա մտահանգումները: Որոնցից են՝ ա) պառլամենտական կառավարման գաղափարախոսական հիմքը իշխող դասակարգի հասարակական հենարանի (ներկայումս՝ ընտրագանգված) հավաքական կարծիքն է իրենց պետության կառավարման ձևի վերաբերյալ: Բ) պառլամենտի մշտական հանձնաժողովները պառլամենտական կառավարման ձևի գաղափարական հիմքը կազմող մարմիններ են:

Գ) առանց իրավաստեղծ ֆունկցիայի պառլամենտն չի կարող համարվել իշխանության մյուս ճյուղերին զսպող և հավասարակշռող մարմին, դ) քաղաքական իշխանության կողմից պառլամենտի մշտական և հիմնարար լիազորությունների անընդհատ փոփոխումը կհանգեցնի այդ ինստիտուտի անկայունության, քանզի պառլամենտական կառավարումը իրենից ենթադրում է պատեհժամայնություն, հաստա-

տունություն և երկարատևություն իր նպատակահարմարությունը ի ցույց դնելու համար: Ե) պառլամենտական կառավարման ձևի անցնելիս պետությունները անպայմանորեն պետք է ելնեն տվյալ պետության հասարակության սոցիալ-քաղաքական, հոգեբանական և մշակութային առանձնահատկություններից: Զ) Պառլամենտական կառավարման ձևի պարագայում ի տարբերություն նախագահական կառավարման ձևի կա նաև տերմինաբանության կիրառման և ընկալման խնդիր, քանզի մի դեպքում կիրառում ենք իշխանություն իրականացնող պետական մարմնի անվանումը մեկ այլ դեպքում պետական մարմնի ղեկավարի անվանումը՝ նախագահ - նախագահական, բայց պառլամենտը պառլամենտական, երբ նախագահական տերմինը կիրառելով հասկանում ենք մեկ պաշտոնատար անձ, իսկ պառլանետական եզրույթը կիրառելով չենք ընկալում միայն Ազգային ժողովի նախագահը կամ մի խումբ պատգամավորներ: Է) Պառլամենտական կառավարման ձևի երկրներում ավանդաբար պետության գլուխ համարվում է ոչ թե պառլամենտի ղեկավարը, այլ հանրապետության նախագահը, ընդ որում պառլամենտական կառավարման ձև հռչակած ՀՀ դեպքում Ազգային ժողովի նախագահը նույնիսկ չի մտնում Ազգային անվտանգության խորհրդի մշտական կազմի մեջ¹⁸: Ը) Պառլամենտական և վարչապետական կառավարման եզրույթների գաղափարական նույնացման և տարբերակման խնդիրն այսօր առկա նաև զարգացած պառլամենտական երկրներում, որն ունի առանձնակի ուսումնասիրության և հստակեցման անհրաժեշտություն: Թ) Ուսումնասիրության անհրաժեշտություն առկա է նաև պառլամենտական կառավարման ձևի պարագայում «կառավարում» հասկացության գաղափարական քննարկման ու կիրառման տեսանկյունից, քանզի ըստ էության կառավարումն իրականացնում է իշխանության գործադիր թևը, իսկ պառլամենտը ոչ թե կառավարում է այլ ընդունում է այդ կառավարումն իրականացնելու համար հիմնարար նորմատիվ իրավական ակտերը, այդպիսով կարգավորելով պետական կառավարումը:

¹⁸ Su https://www.seco.am/security_council/members?lang=hy

ՄԻՔԱՅԵԼ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

Վարչական դատարանի դատավոր

**ԻՐԱՎԱԶԱՓ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ
ՅԱՏՈՒՑՄԱՆ ՅԻՄՆԱԿՆԴԻՐՆԵՐԸ**

Աշխատության ուսումնասիրության առարկան հանրային իշխանության մարմինների օրինական գործողություններով պատճառված վնասի հատուցման հիմնախնդիրներն են, որոնք ներկայումս բավարար չափով հետազոտված չեն և անհարկի բարդություններ են ստեղծում գիտագործական հարթությամբ:

Պատճառված վնասի հատուցման պարտավորությունները դասվում են արտապայմանագրային պարտավորությունների շարքին, որոնք առաջանում են ոչ թե կողմերի համաձայնության, այլ օրենքի հրամայական նորմերով նախատեսված իրավաբանական փաստերի առաջացման, մասնավորապես՝ մեկ սուբյեկտի կողմից մյուսին վնաս պատճառելու հիման վրա: Այդ պարտավորությունները հիմնականում ուղղված են խախտված իրավունքի վերականգնմանը:

Իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հետ կապված պարտավորական հարաբերություններն ունեն որոշ հատկանիշներ, որոնք բնորոշ են նաև վնաս պատճառելու հետևանքով առաջացող քաղաքացիական կարգի հարաբերություններին:

Նախ՝ այս հարաբերությունները հաստատում են վնաս պատճառողի և վնաս կրած անձի միջև որոշակի իրավական կապի առկայությունը: Երկրորդ՝ օրինական գործողություններով վնաս պատճառելու պարտավորությունը միշտ հիմնված է մի կողմի (տուժողի) պահանջի իրավունքի և մյուս կողմի՝ որոշակի գործողություն կատարելու պարտավորության վրա: Երրորդ, այդ հարաբերությունները հարաբերական են, քանի որ որոշակի է համապատասխան վարքագծի պարտադրված մասնակիցների շրջանակը:

Վերը նշված ընդհանուր հատկանիշների հետ մեկտեղ, իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հարաբերություններն ունեն նաև առանձնահատկություններ,

որոնց համալիր բացահայտումն առանցքային նշանակություն ունի նաև միասնական և պատշաճ վարչարարության իրավունքի երաշխավորվածությամբ անհրաժեշտ պրակտիկա ձևավորելու տեսանկյունից:

Անդրադառնանք իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման ինստիտուտի առանձնահատկություններին առնչվող հիմնական հարցերին, մասնավորապես՝ դր գործողություններն են համարվում օրինական, ինչ ընթացակարգով է հատուցվելու իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասը, ո՞վ է պարտավորված լինելու հատուցել այն:

Նախ՝ վերլուծենք այն հարցը, թե ո՞ր վնասն է համարվում իրավաչափ կերպով պատճառված: Նկատի ունենալով, որ իրավաբանական գիտական գրականությունը չի բովանդակում օրինական գործողություններով վնաս պատճառելու հետևանքով պարտավորության սահմանումը, նպատակահարմար է բացահայտել և առանձնացնել այդ պարտավորությունների հիմնական հատկանիշները: Այս բացը լրացնելու համար գիտական գրականության մեջ մշակվում են գործողություններն օրինական դիտարկելու չափանիշներ: Այսպես, Մ.Յու. Տիխոմիրովը նշում է, որ գործողությունների օրինականությունը կայանում է հետևյալ պայմանների պահպանման մեջ.

1. վտանգի տակ գտնվող օրինական իրավունքների կամ շահերի պաշտպանությունը չի կարող իրականացվել առանց վնաս պատճառելու.
2. պաշտպանված իրավունքները կամ շահերը պետք է ավելի նշանակալի լինեն, քան խախտվածները.
3. վնաս պատճառողը պետք է ձեռնարկի բոլոր միջոցները՝ բացասական հետևանքները նվազագույնի հասցնելու համար¹:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 132, 2022

¹ Տե՛ս **Тихомиров М.Ю.** Возмещение вреда, причиненного жизни или здоровью: практическое пособие, М., Изд. Тихомирова М. Ю., 2013թ., էջեր 35-37:

Երկրորդ մոտեցման համաձայն՝ իրավական պատասխանատվությունը դիտարկվում է որպես դրական պարտականություն և հանդիսանում է պետության և հասարակության արձագանքն անձի կողմից կատարված սոցիալապես օգտակար օրինական արարքին (արժանիքներին)՝ իրավական խրախուսման տարբեր միջոցներ կիրառելու տեսքով: Ա.Ս.Շևչենկոն գրում է, որ օրինական գործողություններով վնաս պատճառելու հետևանքով առաջացած պարտավորությունները արտապայմանագրային պարտավորություններ են, կապված են դեղիկտային պարտավորությունների հետ, բայց դրանք առանձին տեսակ չեն, այլ իրենցից ներկայացնում են քաղաքացիական իրավունքի անկախ ենթահիստիտուտ: Իր հերթին, օրինական ճանապարհով պատճառված վնասը հատուցելու պարտավորությունը պատասխանատվության բնույթ չունի, այլ քաղաքացիական սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության միջոց է²:

Այս դիրքորոշումը պաշտպանում է նաև Ե.Ի. Գինցը, որն օրինական գործողություններով վնաս պատճառելու հետևանքով ծագած հարաբերությունները դիտարկում է որպես վնաս պատճառելու պարտավորությունների տեսակ, որը, որպես ընդհանուր կանոն, չպետք է հանգեցնի քաղաքացիական պատասխանատվության: Այս ենթադրությունը հիմնված է այն մեկնակետի վրա, որ օրինական գործողություններով վնաս պատճառելն օրենքով թույլատրված է, այսինքն՝ վնաս պատճառողը խախտում է այլ մարդկանց սուբյեկտիվ իրավունքները, բայց չի խախտում օբյեկտիվ իրավունքի նորմը: Հետևապես, օրինական գործողություններով պատճառված վնասը հատուցելու պարտավորությունը կհանդիսանա քաղաքացիական սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության միջոց³:

Յու.Կ. Տոլստոյը, բնորոշելով օրինական գործողություններով վնաս պատճառելուց բխող պարտավորությունների իրավական բնույթը, եզրակացնում է, որ օրինական գործողություն-

ներով պատճառված վնասը հատուցելու պարտավորությունը ոչ թե քաղաքացիական պատասխանատվության, այլ սոցիալական պաշտպանության միջոց է: Նշված եզրահանգումը բացատրվում է նրանով, որ քաղաքացիաիրավական պատասխանատվությունը, ինչպես ցանկացած իրավական պատասխանատվություն, կատարում է պատժիչ դեր՝ առաջացնելով որոշակի դժվարություններ, լրացուցիչ բեռ, իսկ սոցիալական պաշտպանության միջոցները հանդես են գալիս որպես փոխհատուցման և վերականգնողական բնույթի պաշտպանական իրավահարաբերություններ⁴:

Նշված տեսակետների համադրման արդյունքում առաջանում է հետևյալ հարցը. հնարավոր է սուբյեկտիվ իրավունք խախտել՝ առանց օբյեկտիվ իրավունքի խախտման: Այս հարցի հետ կապված գիտական դոկտրինում առկա են մի քանի դիրքորոշումներ:

Մի շարք հեղինակներ կարծիք են հայտնում, որ օրենքով չնախատեսված սուբյեկտիվ իրավունքի խախտման դեպքում պետք է խոսել արարքի օրինականության մասին, համապատասխանաբար, օրենքով ամրագրված սուբյեկտիվ իրավունքի խախտման դեպքում պետք է խոսել անօրինականության մասին: Ցանկացած քաղաքացիական իրավախախտում կարելի է բնորոշել որպես «իրավական նորմի խախտում», քանի որ.

1. օբյեկտիվ իրավունքի նորմով ամրագրված իրավական արգելքի խախտումը «իրավական նորմի խախտում է».
2. սուբյեկտիվ իրավունքի նորմերով ամրագրված իրավասու անձի հնարավորությունների ծավալի խախտումը («սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքի խախտում») նույնպես իրավական նորմի խախտում է, քանի որ դա իրավական նորմ է, որը նախատեսում է իրավասու անձի հնարավորությունների ծավալը⁵:

² Տե՛ս **Шевченко А.С.** Возмещение вреда, причиненного правомерным поведением, Владивосток, Изд-во Дальневост. ун-та, 1989թ. էջ 99:

³ Տե՛ս **Гинц Е.М.**, Деликтные обязательства вследствие правомерного причинения вреда: общее и особенное, Юридическая наука и практика: Вестник Нижегородской академии МВД России. Нижний Новгород, 2013թ., N 22, էջեր 3-4:

⁴ Տե՛ս **Сергеев А.П., Толстой Ю.К.**, Гражданское право: учебник 4-е изд., СПб.: Изд-во Проспект, 2004г., էջ 13:

⁵ Տե՛ս **Параскевова С.А.**, Что нарушает гражданское правонарушение? Юрист, М., Юрист, 2007г., N 5, էջ 47:

Ըստ Մ.Մ. Ազարկովի՝ ապօրինի արարքը միշտ օբյեկտիվ իրավունքի խախտում է: Օբյեկտիվ իրավունքի խախտումը, որը վնաս է պատճառել մեկին, կարող է առաջացնել այդ վնասը հատուցելու պարտավորություն, եթե միևնույն ժամանակ խախտվում է տուժողի սուբյեկտիվ իրավունքը կամ վնաս է պատճառվում այն շահերին, որոնց ուղղված է խախտված նորմը⁶: Այսինքն՝ հեղինակի դիրքորոշումը հանգում է նրան, որ գործողությունն անօրինական ճանաչելու համար միշտ անհրաժեշտ է խախտել օբյեկտիվ իրավունքի նորմը, և դա իր հերթին կհանգեցնի կոնկրետ անձի սուբյեկտիվ իրավունքի խախտման:

Է.Ա. Ֆլեյշիցը նշել է. «Ցանկացած արարքի անօրինականությունը կայանում է նրանում, որ այն հակասում է իրավունքին՝ բառի օբյեկտիվ իմաստով», հետագայում հստակեցնելով. «...հակասելով օբյեկտիվ իմաստով իրավունքին՝ այդ գործողությունները խախտում են նաև այն անձի իրավունքները, ում պատճառվում է վնասը»⁷: Իսկ Վ.Ա.Բելովը նշում է, որ «օրենքով պատճառված վնաս» հասկացությունը շատ նեղ է և ներառում է միայն օբյեկտիվ իրավունքի նորմի ուղղակի թույլտվությամբ պատճառված վնասը⁸:

Հակառակ տեսակետ ունի Ա.Դ. Վլասովան, ով խոսում է այն մասին, որ օբյեկտիվ իրավունքի նորմերը չխախտող, սակայն այլ անձանց սուբյեկտիվ իրավունքները խախտող արարքներով պատճառած վնասը չի կարող լեգիտիմ համարվել, քանի որ, նախ, կա այլ անձի գույքը կամ ինքնությունը վնասելու ընդհանուր արգելք, և երկրորդ՝ հնարավոր է օրենքով չնախատեսված քաղաքացիական սուբյեկտիվ իրավունքների խախտում⁹:

Իրավաբանական գրականության մեջ առկա տեսակետների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ իրավաչափ գործողություններով պատճառված վնասի առանձնահատկությունները բացահայտելիս՝ հեղինակ-

ների մեծամասնությունն օգտագործում են «իրավունքի խախտում» եզրույթը: Իրավաբանական գրականության և օրենսդրության մեջ, ինչպես նաև մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերում օգտագործվում են տարբեր եզրույթներ՝ «իրավունքի սահմանափակում», «իրավունքի նկատմամբ միջամտություն» և «իրավունքի խախտում»:

Իրավունքի սահմանափակումը կարող է լինել իրավաչափ, հետապնդել օրենքով նախատեսված նպատակ, լինել իրավունքը սահմանափակված անձի ոչ իրավաչափ վարքագծի հետևանք, հանդիսանալ պետական հարկադրանքի միջոց և այլն: «Խախտում» եզրույթը միշտ ուղեկցվում է վարքագծի պարտադիր կանոնները չպահպանելու հետ, այլ խոսքերով ասած, օրենսդրական պահանջների խախտման հետ: Ուստի իրավունքի խախտումը կարելի է բնորոշել որպես օբյեկտիվ իրավունքի նորմի պահանջների խախտում, որը հանգեցրել է անձի սուբյեկտիվ իրավունքների սահմանափակմանը: Նշված եզրահանգումը բխում է այն իրողությունից, որ ժողովրդավարական հասարակությունում իրավունքի սահմանափակումը կարող է հետապնդել իրավաչափ նպատակ, լինել պիտանի և անհրաժեշտ՝ հետապնդվող նպատակին հասնելու համար: Օրինակ, վարչական իրավախախտում թույլ տված անձի նկատմամբ վարչական պատասխանատվության միջոցի կիրառումը (տուգանքի նշանակումը) կարող է միջամտել սեփականության իրավունքին, այսինքն՝ օրենքով սահմանված կարգով միջամտել անձի գույքային իրավունքներին, սակայն այն հետապնդում է հետագայում իրավախախտումները կանխելու իրավաչափ նպատակ, և վարչական մարմնի այդպիսի լիազորությունները սահմանված են օրենքով: Ակնհայտ է, որ նշված դեպքում թեև առկա է իրավունքի սահմանափակում, որի հետևանքով անձը կարող է վնասներ կրել, սակայն խոսք չի կարող լինել օրինական ուժի մեջ

⁶ Տե՛ս **Агарков М.М.**, Обязательство по советскому гражданскому праву. М., Юрид. изд-во НКЮ СССР, 1940г., էջ 140:

⁷ Տե՛ս **Флейшиц Е.А.**, Обязательства вследствие причинения вреда и неосновательного обогащения, М., Госюридиздат, 1951г., էջ 30:

⁸ Տե՛ս **Белов В.А.** Гражданское право. Общая часть. Учебник. М., 2002г., էջ 513:

⁹ Տե՛ս **Власова А.Д.**, Гражданско-правовое регулирование обязательств вследствие причинения имущественного вреда жизни и здоровью гражданина источником повышенной опасности: Дис.на соиск. уч. степ. к.ю.н. Краснодар. 2004г. էջ 11:

մտած դատական ակտով անձի իրավունքի խախտման մասին, քանի դեռ սահմանված կարգով չի հաստատվել այդ ակտի՝ օրենքի պահանջների խախտմամբ ընդունված լինելու հանգամանքը: Այսպիսով, իրավաչափ գործողությունների հետևանքով իրավունքի նկատմամբ միջամտությունը կամ իրավունքի սահմանափակումը չի կարող դիտվել իրավունքի խախտում, եթե այն չի հակասում օրենսդրությանը, այլ կերպ՝ միայն իրավական նորմի խախտումը կարող է հանգեցնել իրավունքի խախտման, հետևապես իրավաչափ գործողությունների հետ կապված առավել նպատակահարմար է իրավունքի «սահմանափակում» կամ «միջամտություն» եզրույթների օգտագործումը:

Անդրադառնալով վարչական մարմինների գործունեությանը, անհրաժեշտ է նշել, որ պաշտոնատար անձանց լիազորությունների իրականացումը մտնում է նրանց ծառայողական պարտականությունների մեջ, դրանք ոչ միայն օրինական են, այլ նաև պարտադիր: Պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց որոշակի գործողություններ կատարելու լիազորություն սահմանելով՝ օրենսդիրը հետապնդում է առավել էական կորուստները կանխելու և սոցիալապես օգտակար հետևանքների հասնելու նպատակ, այսինքն՝ գործում է մասնավոր շահի նկատմամբ հանրային շահի գերակայության սկզբունքը: Այդ կապակցությամբ Վ. Գագենը նշում է, որ անհատների իրավունքները պետք է զիջվեն այնտեղ, որտեղ դա պահանջում է հանրային շահը: Միևնույն ժամանակ, հանրային կորպորացիան, որը անձի անհատական իրավունքին պարտադրում է զոհաբերություն, որն աներևակայելի է սովորական պայմաններում, պետք է փոխհատուցի այն, այլ խոսքերով՝ այն վերածի պարգևի¹⁰:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ վարչական մարմինների կողմից պատճառված վնասի՝ իրավունքների նկատմամբ միջամտության իրավաչափության հարցի որոշումն իրենից բարդություն չի ներկայացնում այն դեպքերում, երբ վնաս պատճառող գործողությունների վերաբերյալ առկա է օրենսդրական կարգավորում, որպիսի պայմաններում

անհրաժեշտ է բացահայտել, թե արդյոք իրավունքների նկատմամբ միջամտությունը եղել է օրենքով սահմանված կարգի պահպանմամբ, թե օրենքի պահանջների խախտմամբ: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում այն դեպքերը, երբ վնաս պատճառող գործողությունները կարգավորված չեն օրենքով, որպիսի դեպքերում հանրային իրավահարաբերություններում անհրաժեշտ է առաջնորդվել օրինականության սկզբունքով: Այսպես, ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Համանման կարգավորում նախատեսված է նաև Օրենքի 4-րդ հոդվածով, որի 2-րդ մասը սահմանում է, որ վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով: Նշվածից հետևում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու դրանց պաշտոնատար անձինք իրավասու չեն կատարելու օրենքով կամ այլ իրավական ակտերով չնախատեսված գործողություններ, նման գործողությունները դուրս են նրանց լիազորությունների շրջանակներից և հակասում են օրինականության սկզբունքին, այլ կերպ՝ անօրինական են: Միևնույն ժամանակ, օրենքով նախատեսված գործողություններով իրավունքների նկատմամբ միջամտության դեպքում, ինչպես արդեն նշվել է, խոսք չի կարող լինել իրավունքի խախտման, դրանով պայմանավորված՝ իրավունքի վերականգնման մասին: Այլ հարց է, որ օրենսդիրը, օրենքով նախատեսված որոշ դեպքերում իրավունքի սահմանափակման համար կարող է նախատեսել հատուցում ստանալու անձանց իրավունք: Որպես օրինակ կարող է ծառայել «Ահաբեկչության դեմ պայքարի մասին» օրենքը, որը սահմանում է. «Իրավաչափ են համարվում ահաբեկչության դեմ պայքարի գործողությունները կանոնակարգող նորմերի պահպանումով կատարված և Հայաստանի

¹⁰ Стн Гаген В. К вопросу об ответственности государства за действия должностных лиц//Вестник права. 1903թ. Октябрь. Кн. 8. էջ 36, <https://www.prlib.ru/item/323941>.

Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այն գործողությունները, որոնք կատարվել են ծառայողական պարտականությունների շրջանակներում կամ հասարակական պարտքը հատուցելիս և ուղղված են եղել քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը, ինչպես նաև հասարակական և պետական անվտանգությանը սպառնացող առավել նշանակալից վնասի կանխմանը, եթե տվյալ հանգամանքներում ծառայողական պարտականությունների կամ հասարակական պարտքի իրականացման այլ հնարավորություններ չեն ընձեռվել» (հոդված 18): Միևնույն ժամանակ նույն օրենքը սահմանում է, որ ահաբեկչական գործողության հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի փոխհատուցումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված չափերով և կարգով (հոդված 16):

Այսպիսով, վնասը համարվում է իրավաչափ կերպով պատճառված միայն այն դեպքում, երբ վնաս պատճառող գործողություններ կատարելու վարչական մարմնի լիազորությունն ուղղակիորեն նախատեսված է օրենքով:

Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ օրինական վնաս պատճառելն անհնար է անգործության տեսքով: Անգործությունը վերաբերում է պաշտոնատար անձի կողմից իր վրա դրված պարտականությունների կատարումից ձեռնպահ մնալուն, ինչն արդեն իսկ ոչ իրավաչափ է դարձնում այն, մինչդեռ՝ քննարկվող դեպքում վարչական մարմինները և դրանց պաշտոնատար անձինք, առաջնորդվելով հանրային շահերի նախապատվությամբ, նպատակաուղղված և գիտակցաբար կատարում են գործողություններ, որոնք վնասում են օրենքով պաշտպանված շահերին:

Անհրաժեշտ է բացահայտել նաև այն հարցը, թե ով է հանդիսանում իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հարաբերությունների սուբյեկտ, որպիսի հարցի վերաբերյալ օրենսդրական կարգավորումներում առկա են որոշակի հակասություններ: Այսպես, վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվություն կրող սուբ-

յեկտները սահմանված են Օրենքի 95-րդ հոդվածում, որի համաձայն, ոչ իրավաչափ վարչարարության, իսկ սույն բաժնով նախատեսված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասի համար պատասխանատվությունը կրում է Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան համայնքը: Միևնույն ժամանակ Օրենքի 109-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ իրավունքի այլ սուբյեկտներից հատուցում ստանալու հնարավորության դեպքում սույն օրենքի 95-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվություն կրողներից հատուցում չի կարող պահանջվել: Այսինքն՝ մի դեպքում օրենսդիրը իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պատասխանատու սուբյեկտ է դիտարկում միայն պետությանը կամ համայնքին, առանց որևէ բացառության, իսկ մյուս դեպքում խոսվում է իրավունքի այլ սուբյեկտներից հատուցում ստանալու հնարավորության մասին, որպիսի հնարավորության առկայության դեպքում պետությանը և համայնքին ազատում է վնասի հատուցման պարտականությունից: Միևնույն ժամանակ Օրենքը չի սահմանում այն հիմքերը և պայմանները, որոնց առկայության դեպքում իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման պատասխանատվությունը կարող է դրվել իրավունքի այլ սուբյեկտների վրա:

Այսպիսով, անհրաժեշտություն է առաջանում հստակեցնել իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման պարտականություն կրող սուբյեկտներին՝ իրավունքի այլ սուբյեկտների կողմից հատուցման պարտականություն սահմանելու դեպքում նախատեսելով դրա հիմքերը և պայմանները:

Իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումն իրականացվում է նույն եղանակով և հիմքերով, ինչպես ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասն է, որից բացառություն է կազմում միայն վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչված լինելու պայմանը: Այսինքն՝ իրավաչափ վարչարարության հետևանքով վնասի պատճառման փաստն արդեն իսկ բավարար է վար-

ջական մարմնին հատուցման պահանջ ներկայացնելու համար:

Անհրաժեշտ է անդրադառնալ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման էությանը և իրավական նշանակությանը: Օրինական ճանապարհով պատճառված վնասի հատուցման միջոցով հնարավոր չէ լուծել վնաս պատճառողի նկատմամբ ընդհանուր իրավական կանխարգելման և կարգապահական պատասխանատվության ներգործության խնդիրները, քանի որ վնաս պատճառողի պահվածքը, այս դեպքում, տեղին է: Եվ երկրորդ՝ հնարավոր չէ հետագայում կանխել նման վարքագծի դրսևորումն այն պատճառով, որ եթե կրկին ստեղծվի նման իրավիճակ, ապա վնասը նույնպես կլինի անխուսափելի (օրինական) և վնասը կրկին կպատճառվի. նման իրավիճակում վնաս պատճառած անձը չպետք է ենթարկվի դաստիարակչական ներգործության: Նշվածից հետևում է, որ փոխհատուցման գործառույթը միակն է, որն իրականացվում է իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պարտավորություններով: Միաժամանակ Սահմանադրության 1-ին հոդվածի հիման վրա պետության կողմից կիրառվում են սոցիալական պաշտպանության միջոցներ՝ իր քաղաքացիների համար արժանապատիվ կենսամակարդակ ապահովելու համար: Սոցիալական պաշտպանությունը բնորոշվում է որպես միջոցառումների համակարգ, որն ուղղված է սոցիալական ռիսկերից տուժած կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված քաղաքացիներին աջակցելուն: Սոցիալական պաշտպանությունը կարող է իրականացվել դրամական ձևով, բնամթերքի ձևով, ինչպես նաև սոցիալական պաշտպանության օբյեկտ հանդիսացող անձանց զանազան ծառայություններ մատուցելու միջոցով: Այն կարող է ունենալ ինչպես փոխհատուցումային, այնպես էլ նախազգուշական (կանխարգելիչ) բնույթ: Նշվածից հետևում է, որ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցմանն ավելի բնորոշ է սոցիալական պաշտպանության հատկանիշները, որոնք կարող են ներառել, օրինակ, պետության կողմից հակահաբեկչական գործողությունների հետևանքով

տուժածներին փոխհատուցման վճարումները: Նման վճարումների սոցիալական նշանակության մասին է խոսվում նաև Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի 2005 թվականի դեկտեմբերի 27-ի որոշման մեջ. «Պետությունն այս դեպքում ստանձնում է պատճառված վնասի հատուցելու պարտականություն որպես հասարակական շահերից ելնելով գործող, սոցիալական կապերի պահպանման, հասարակության պահպանման նպատակներ հետապնդող մարմին: Կազմակերպելով հատուցման համակարգ՝ պետությունը հանդես է գալիս ոչ թե որպես վնաս պատճառող (որը կպահանջի պատճառված վնասի ամբողջական փոխհատուցում) և ոչ թե որպես դելիկտային պարտավորություն կրող պարտապան, այլ որպես ընդհանուր շահեր արտահայտող պետական մարմին և որպես ընդհանուր շահերի համար ստեղծվող և ծախսվող բյուջեի կառավարիչ»¹¹: Այսպիսով, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանը նույնպես մատնանշում է քաղաքացիական իրավական պաշտպանության միջոցների և սոցիալական իրավական միջոցների տարբերությունը:

Գործող իրավակարգավորումների (Օրենքի 109-րդ հոդված) ուսումնասիրությունից հետևում է, որ օրենսդրությամբ կարգավորված են իրավաչափ վարչական ակտերով պատճառված վնասի հատուցման ընդհանուր կանոններ, սակայն կանոնակարգված չեն փաստացի հետևանքներ առաջացնող իրավաչափ գործողություններով (ռեալ ակտ) պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները, ինչը, սակայն, ամբողջ ծավալով չի երաշխավորում անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Ամփոփելով պետական մարմինների օրինական գործողություններով պատճառված վնասի հատուցման հարցի վերաբերյալ դատողությունները՝ կարելի է գալ հետևյալ եզրահանգումների. վարչական մարմիններն կարող են վնաս պատճառել քաղաքացիների և իրավաբանական անձանց օրինական շահերին միայն օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով նախատեսված լիազորությունների իրականացման շրջանակներում: Վարչական մարմիններ-

¹¹ Стн Определение Конституционного Суда РФ от 27 декабря 2005 года, № 523-О 36.

րի այդ լիազրությունները վերապահվում են, ի թիվս այլնի, նաև հանրային արժեքների պահպանման համար, որոնք էական նշանակություն ունեն են ինչպես ողջ հասարակության, այնպես էլ բնակչության որոշակի խմբերի համար: Այլ կերպ ասած, վնասը համարվում է օրինական ճանապարհով պատճառված, եթե օրենքում առկա է թույլատրող նորմ: Հարաբերությունների նեղ շրջանակ են կազմում այն դեպքերը, երբ պետական մարմինների կողմից իրավաչափ է համարվում վնաս պատճառելը: Այս նեղ շրջանակում էլ ավելի սակավաթիվ են հատուցման ենթակա օրինական պատճառված վնասի դեպքերը: Այսինքն՝ վարչական մարմինների օրինական գործողություններով պատճառված վնասի հատուցումը բացառություն է, քան՝ կանոն:

Այսպիսով, անհրաժեշտ է ամրապնդել պետական մարմինների օրինական գործողություններով պատճառված վնասի հատուցման ինս-

տիտուտը՝ հաշվի առնելով քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների առավել ամբողջական ապահովման անհրաժեշտությունը, մասնավորապես այն դեպքերում, երբ իրավունքի սահմանափակումը տեղի չի ունենում վերջիններիս ոչ իրավաչափ գործողությունների հետևանքով: Այս համատեքստում անհրաժեշտություն է առաջանում դուրս բերել և օրենսդրական մակարդակով կարգավորել այն չափանիշները, որոնք ուղենիշային կլինեն իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հարցը լուծելու համար, այդ թվում՝ կարգավորել փաստացի հետևանքներ առաջացնող իրավաչափ գործողություններով պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև որոշակիացնել իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի տեսակները (իրական վնաս, բաց թողնված օգուտ, ոչ նյութական վնաս):



РОЗА АМИРОВА

Аспирант 2-ого курса обучения Российско-Армянского университета
юрист в офисе Примирителя финансовой системы

АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ, ВЫТЕКАЮЩИЕ ИЗ ДОГОВОРОВ БАНКОВСКОГО ВКЛАДА

Одной из основных деятельностей банка выступает привлечение во вклады денежных средств физических и юридических лиц, реализация которой способствует развитию и укреплению банковской системы страны. Исследование проблемы развития положений в сфере договорного регулирования прав потребителей банковских услуг в армянской доктрине практически отсутствует, тогда, как ее следует отнести к числу наиболее актуальных вопросов цивилистической доктрины, так как в области банковских договоров пока что остается много различных неразрешенных проблем. Отношения в сфере банковских вкладов всегда играли существенную роль в жизни общества и в гражданском обороте, а на сегодняшний день данные отношения перешли в свою новую фазу. Значительные проблемы, возникающие на практике, относятся к обеспечению возврата банковских вкладов и нуждаются в детальном исследовании.

Гражданин-вкладчик, как потребитель банковских услуг, выступает в качестве «слабой» стороны в договоре банковского вклада. В соответствии с позицией КС РФ, выраженной в постановлении от 23 фев. 1999 г. № 4-П, граждане-вкладчики (...) обычно лишены возможности влиять на содержание договора банковского вклада, (...) в силу которого гражданин как экономически слабая сторона в этих правоотношениях нуждается в особой защите своих прав, и влечет необходимость в соответствующем правовом ограничении свободы договора и для другой стороны, чтобы реально гарантировать соблюдение конституционного принципа ра-

венства при осуществлении предпринимательской и иной не запрещенной законом экономической деятельности. Стоит согласиться с мнением Е.И. Данилкиной о том, что банк не должен предусматривать в договоре какие-либо неблагоприятные последствия в отношении вкладчика¹.

На сегодняшний день существует разногласие, создающее затруднение для практической банковской деятельности относительно вопроса о возможности установления договором банковского вклада права банка о начислении процентов по вкладу до востребования в размере 0%, иначе говоря, может ли Банк не начислять проценты по вкладу до востребования?

В практической деятельности банков РА (к примеру, Эйч-Эс-Би-Си Банк² и др.) встречаются случаи, когда банк изменяет размер процентов, выплачиваемых на вклады до востребования без каких-либо ограничений максимальной или минимальной суммы. Последние обоснуют свою позицию тем, что законом, якобы, не запрещается устанавливать процентную ставку по вкладам до востребования в размере 0%. Ради справедливости, следует отметить, что в Швейцарии для вкладов до востребования действует даже отрицательная процентная ставка³. Аналогичное регулирование встречается и в законодательствах Дании, Японии, Швеции и Испании, что обусловлено особенностями их правовой системы⁴.

КС РФ признал не соответствующим Конституции РФ положение ч. 2 ст. 29 ФЗ “О

¹ Данилкина Е.И. Договор банковского вклада с участием физических лиц по гражданскому законодательству Российской Федерации: автореф. дис. ... канд. юрид. наук. М., 2006.

² <https://www.hsbc.am/pdfs/investments/term-deposit-maturity-options/> (дата обращения: 21.09.2022)

³ https://www.snb.ch/en/ifor/finmkt/operat/id/finmkt_nz (дата обращения: 21.09.2022)

⁴ <https://www.investopedia.com/articles/personal-finance/051415/5-countries-lowest-interest-rates.asp> (дата обращения: 21.09.2022)

банках и банковской деятельности” об изменении банком в одностороннем порядке процентной ставки по срочным вкладам граждан как позволяющее банку произвольно снижать ее исключительно на основе договора, без определения в федеральном законе оснований, обуславливающих такую возможность. В отсутствие закрепленных в федеральном законе оснований для снижения процентных ставок по срочным вкладам граждан банк не вправе предусматривать в заключаемых с гражданами договорах условие, позволяющее ему снижать в одностороннем порядке процентные ставки по этим вкладам.⁵

Несмотря на то обстоятельство, что постановление Конституционного суда РФ относится к процентным ставкам по срочным вкладам, считаем, что мотивировочная часть решения также применима и к аналогичным ситуациям по вкладам до востребования, поскольку права вкладчика, как слабого субъекта правоотношений, должны быть защищены особым образом.

1-ая часть ст. 902 ГК РФ предусматривает положение о том, что по договору банковского вклада банк, принявший поступившую от вкладчика или поступившую для нее денежную сумму, обязуется вернуть вкладчику сумму вклада и выплатить проценты с нее на условиях и в порядке, предусмотренных договором (ст. 834 ГК РФ).⁶

Так, А.Е. Шерстобитов, рассуждая о содержании договора банковского вклада, пишет: “Основными правами вкладчика и соответственно основными корреспондирующими им обязанностями банка являются возврат вкладчику полученной банком суммы вклада и выплата причитающихся ему процентов”.⁷ Автор указы-

вает: “Единственным существенным условием договора банковского вклада является предмет. Данный договор всегда возмезден, т.е. ни при каких обстоятельствах не может быть беспроцентным”.⁸ Аналогичное суждение о содержании договора банковского вклада высказано Д.А. Медведевым: “Содержание договора составляет обязанность банка вернуть вкладчику сумму вклада (основной долг) с уплатой обусловленных процентов. Проценты являются ценой кредита, выданного вкладчиком банку (...)”.⁹ Ведь перечисляя на депозитный счет вкладчика начисленные проценты, банк выполняет свое обязательство по оплате пользования займом.

Согласно ч. 3 ст. 905 ГК РФ (ч. 5 ст. 837 ГК РФ) в случаях, когда срочный вклад возвращается вкладчику по его требованию до истечения срока или до наступления иных обстоятельств, указанных в договоре банковского вклада, проценты вкладчику выплачиваются в размере, установленном банком по вкладам до востребования, если договором не предусмотрено иной размер процентов¹⁰.

В юридической литературе не раз отмечалось, что условие о размере процентов представляет собой существенное условие договора банковского вклада, несмотря на вышеуказанную норму, позволяющую в определенном смысле компенсировать условие о размере процентов по вкладу на случай отсутствия такового в тексте договора. Л.А. Новоселова отмечает: “Условие о процентных ставках по депозитам (вкладам) относится к существенным условиям договора, но отсутствие его в конкретном договоре не приводит к недействительности договора и не является основанием для признания договора незаключенным, поскольку существует “восполнительная” норма (...)”¹¹.

⁵ Постановление КС РФ от 23.02.1999 N 4-П “По делу о проверке конституционности положения части второй статьи 29 Федерального закона от 03.02.1996 г. “О банках и банковской деятельности” в связи с жалобами граждан О.Ю. Веселяшкиной, А.Ю. Веселяшкина и Н.П. Лазаренко”

⁶ Ч.1 ст.902 Гражданского кодекса Республики Армения от 05.05.1998 г. (с посл. измн. от 15.06.2022 г.)

⁷ Шерстобитов А.Е. Расчетный форвардный контракт: теория и практика // Законодательство. 1998. № 10. С. 271.

⁸ Шерстобитов А.Е. Указ. соч. С. 268.

⁹ Гражданское право: Учебник. Т. 2 / Под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого. 4-е изд., перераб. и доп. М., 2003. С. 520–521 (автор раздела – Д.А. Медведев).

¹⁰ Ч. 1 ст. 906 Гражданского кодекса Республики Армения от 05.05.1998 г. (с посл. измн. от 15.06.2022 г.), Гражданский кодекс Российской Федерации от 30.11.1994 г. (с посл. измн. от 26.10.2021 г.)

¹¹ Новоселова Л.А. Проценты по денежным обязательствам. 2-е изд., испр. и доп. М., 2003. С. 149.

Ч. 1 ст. 906 ГК РА (ч. 1 ст. 838 ГК РФ) предусматривает, что банк выплачивает вкладчику проценты на сумму вклада в размере, определяемом договором банковского вклада, а при отсутствии в договоре данного условия банк обязан выплачивать проценты в размере, определяемом в соответствии с Законом. [7,8]

Из буквального и логического толкования гражданских норм о банковском вкладе, ясно видно, что для заключения данного вида договора обязательно одновременное наличие следующих условий: принятие банком денежных средств, возвращение банком суммы вклада, выплата процентов на нее. Излагая свою позицию Л.Г. Ефимова пишет: “После заключения договора банковского вклада на банк возлагаются три основные обязанности: вернуть вкладчику сумму вклада в порядке, установленном в договоре, выплатить ему вознаграждение в виде процентов за весь период пользования чужими средствами, а также предоставить вкладчику обеспечение возврата вклада одним из предусмотренных в законе способов”¹². Системный анализ вышеизложенных статей показывает, что предусматривается не только возврат суммы вклада, но и уплата процентов вне зависимости от срока его требования. Соответственно, договор банковского вклада всегда является реальным, односторонне обязывающим и *возмездным*, выражением которого является обязанность банка выплатить проценты на сумму вклада. Договор банковского вклада относится к возмездным договорам по той причине, что на стороне банка имеется обязанность по выплате вкладчику определенного вознаграждения, которое выплачивается за предоставленное банку право распоряжаться денежными средствами, внесенными вкладчиком. Данная обязанность банка предусмотрена императивной нормой и не может быть устранена соглашением сторон.

В данном контексте важно обратиться к вопросу о соотношении договора банковского

вклада и договора банковского счета, поскольку заключение договора банковского вклада тоже связано с открытием счета. Их сближает также возможность начисления процентов за пользование денежными средствами, находящимися на счете. Именно правовая и экономическая цель его заключения и отличает данный договор от договора банковского счета, т. к. в случае договора банковского вклада основной целью потребителя является приумножение капитала за счет получения процентов на сумму размещенных во вкладе денежных средств, тогда как в договоре банковского счета целью является использование денежных средств, размещенных на счете. Важно подчеркнуть, что, клиент, вносящий вклад в банк, имеет правомерное ожидание получения дохода за деньги, внесенные им в банк. Если в результате каких-то обстоятельств процентная ставка, установленная банком для досрочного востребования, будет установлена в размере 0%, очевидно, что исчезнет цель внесения вклада, тогда как сам банк будет продолжать иметь доход в результате ввода в оборот вложенного вклада. Выплачиваемые банком проценты следует считать не платы за услуги вкладчика по представлению суммы вклада, а составной частью результата оказываемой банком услуги¹³. Д.А. Медведева пишет: “Для банка цель договора состоит в мобилизации свободных денежных средств вкладчика под коммерческие операции, а для вкладчика – в получении процента на свой капитал”¹⁴.

Из всего вышеуказанного следует, что в договоре банковского вклада не выплаченные вкладчику проценты увеличивают сумму вклада, в результате чего проценты за последующие периоды пользования вкладом начисляются как на основную сумму вклада, так и на ранее начисленные, но не выплаченные проценты, увеличивающие сумму вклада. Выделенная особенность отличает договор банковского вклада от договора денежного займа, кредита, да и всех остальных гражданско-правовых договоров,

¹² Ефимова Л.Г. Банковские сделки: право и практика. М., 2001. С. 256–257.

¹³ Эрделевский А.М. Договор банковского вклада / А.М Эрделевский // Российская юстиция.- Москва; Юрид. лит.. 1998 – N 9.- С. 15.

¹⁴ Гражданское право: Учебник. Т. 2 / Под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого. 4-е изд., перераб. и доп. М., 2003. С. 515 (автор соответствующей главы – Д.А. Медведев).

возлагающих на одного из контрагентов денежное долговое обязательство. Следовательно, банк не имеет права не начислять проценты по вкладу до востребования.

Подлежит разъяснению также *вопрос о размере начисляемых суммы процентов на остаток вклада при требовании клиентом возврата части срочного вклада, если данное правоотношение заранее не урегулировано договором*. Например, клиент заключил с банком договор банковского вклада в размере 100,000 драм сроком на 10 лет, с 10% процентной ставкой. Через 5 месяцев клиент требует от банка часть суммы своего вклада (к примеру, 40,000 драм).

В договоре банковского вклада при возможности снятия части суммы, может быть предусмотрен неснижаемый остаток, это означает, что вкладчик может снимать денежные средства с вклада, но лишь в пределах указанного в договоре неснижаемого остатка. При этом процентная ставка может оставаться неизменной при любой сумме в пределах неснижаемого остатка (фиксированная ставка), а может меняться в зависимости от суммы вклада (плавающая ставка).

Следует согласиться с позицией Центрального Банка РА относительно данного вопроса, который считает, что ч. 2 ст. 905 ГК РА предполагает право требования вкладчика полной или частичной суммы вклада и одновременно обязанность банка возврата данной суммы в полном размере или ее части. Важно обратить внимание на то обстоятельство, что данное положение не обращается к регулированию вопроса начисления процентов, и, соответственно не предусматривает обязанность для банка по поводу начисления процентов. Более того, анализ ч. 2 и ч. 3 данной статьи позволяет сделать вывод о том, что при требовании клиентом возврата частичной суммы вклада и на возвращенной и на оставленной части должны начисляться проценты, предусмотренные на вклады до востребования.¹⁵

Во избежание противоречивой правоприменительной банковской практики сторонам

следует заранее согласовать конкретный размер этой процентной ставки прямо в тексте договора. Если в договоре заранее не оговорен такой случай, то на практике банки часто расторгают заключенный с клиентом договор банковского депозита, одновременно начисляя на всю сумму вклада проценты, предусмотренные на вклады до востребования.

Полный досрочный отзыв банковского вклада не очень-то удобен для банков, однако последние имеют право платить пониженный процент по вкладу (так называемый процент по вкладам до востребования). Если же в договоре имеется положение о том, что банк не обязан платить вкладчику вознаграждение за пользование его средствами, то такое соглашение не следует квалифицировать в качестве договора банковского вклада. Это может быть договор, имеющий другую правовую природу, к примеру, договор беспроцентного займа.

Действующая практика не изменится без вмешательства законодателя или высшей судебной инстанции. Однако такое вмешательство представляется необходимым. В договоре банковского вклада, в отличие, к примеру, от предпринимательского договора, участвуют стороны в разных весовых категориях. На одной стороне сильный субъект – банк, а на другой – слабый – вкладчик. Интересы слабой стороны может защитить только закон. Именно поэтому будет целесообразно, если на уровне закона будет установлен прямой запрет по установлению процентов по вкладу до востребования в размере 0%, а суды или иные органы досудебного урегулирования споров, при разрешении споров по обсуждаемому вопросу обязаны будут применять единообразную практику по признанию недействительным положения договоров о применении банком нулевой процентной ставки по вкладу до востребования.

Обратимся еще к одной проблеме, ставшей в РА довольно-таки актуальной в последнее время в сфере предоставления банками услуг по договору банковского вклада, где активно нарушаются права вкладчиков.

¹⁵ Официальное разъяснение Совета ЦБ РА номер 2 от 17.11.2015г. <https://www.cba.am/AM/InGovernmentalClarification-council/Clarification-01122015.pdf> (дата обращения: 21.09.2022)

Случай таковой: между клиентом и банком был подписан договор на оказание банковских услуг, на основании которого в банке на имя клиента были открыты текущий, сберегательный и карточный счета. При снятии наличных денежных средств с текущего счета в соответствии с «Тарифами ТП», являющимся неотъемлемой частью договора, взимается комиссия в определенных размерах. Тариф не применяется по истечении срока действия договора банковского вклада (заявки на залог) в случае возврата суммы депозита (залога), а средства на сберегательных счетах считаются вкладами до востребования в соответствии с «Основными условиями банковского обслуживания», являющимися частью договора. Согласно тарифам сберегательного банковского счета клиента, являющегося неотъемлемой частью договора, снятие средств со сберегательного счета возможно путем перечисления на текущий или карточный счет клиента.

Со сберегательного счета были сняты денежные средства и переведены на текущий счет, после чего средства с текущего счета были обналичены с указанного счета в тот же день. Клиент подал в банк заявление с требованием вернуть удерживаемую банком со сберегательных счетов комиссионную плату.

Согласно ч. 2 ст. 905 Гражданского кодекса РА по договору банковского вклада любого вида банк обязан вернуть сумму вклада или ее часть по первому требованию вкладчика, за исключением вкладов, внесенных юридическими лицами на иных условиях возврата, предусмотренных договором. Условие договора об отказе гражданина от права на получение вклада по первому требованию ничтожно.¹⁶

Согласно ч. 3 той же статьи ГК РА в случаях, когда срочный или другой вклад, иной, чем вклад до востребования, возвращается вкладчику по его требованию до истечения срока или до возникновения обстоятельств, указанных в договоре банковского вклада, проценты вклад-

чику выплачиваются в размере, установленном банком по вкладам до востребования, если договором не предусмотрен иной размер процентов.¹⁷

Согласно ст. 916 ГК РА банк обязан совершать для клиента операции, предусмотренные для счетов данного вида законом, установленными в соответствии с ним банковскими правилами и применяемыми в банковской практике обычаями делового оборота, если договором банковского счета не предусмотрено иное.¹⁸

Согласно ч. 1 ст. 919 ГК РА в случаях, предусмотренных договором банковского счета, клиент оплачивает услуги банка за совершение операций по его счету.¹⁹

При анализе вышеизложенной ситуации можно прийти к выводу о том, что в данном случае между сторонами был заключен смешанный договор, в рамках которого банк оказывал услуги банковского вклада и банковского счета, в частности было предусмотрено, что средства на сберегательном счете имеют статус вклада до востребования, а на основании текущего и карточного счетов банк должен оказывать клиенту услуги банковского счета. *Единственно возможный вариант снятия вкладов до востребования со сберегательных счетов – их перевод на текущие или карточные счета.* При этом установлена комиссионная плата за снятие наличных с текущего или карточного счета, за исключением случаев, когда взимаются депозитные средства. Иными словами, за снятие денежных средств, являющихся банковским вкладом, комиссионная плата не взимается.

В данном случае, средства вклада до востребования на указанном сберегательном счете клиента были первоначально переведены на текущие счета клиента с целью обналичивания, что является единственно возможным вариантом обналичивания со сберегательных счетов, после чего с указанных счетов за снятие наличных взималась комиссионная плата.

Банки аргументируют свою позицию тем,

¹⁶ Ч.2 ст 905 Гражданского кодекса РА

¹⁷ Там же.

¹⁸ Там же.

¹⁹ Там же.

что не применяется комиссия при снятии со счета наличных денежных средств после истечения срока вклада в случае возвращения суммы вклада, а в данном случае срок действия договора банковского вклада не истек, договор банковского вклада был досрочно прекращен, следовательно, и правило о неприменении комиссионной платы не действует. К обоснованию своей позиции последние также добавляют, что клиент перевод денежных средств осуществил со сберегательных счетов на текущие счета без какой-либо комиссии, а после денежная сумма, переведенная на текущий счет была обналичена со стороны клиента, и комиссионная плата взималась с текущего счета клиента.

Важно отметить, что по договору банковского счета операции по счету выполняются банком на возмездной основе: клиент оплачивает услуги банка по совершению операций с денежными средствами. Данное правило не подлежит применению к отношениям по договору банковского вклада, поскольку противоречит существу этого договора, представляющего собой (как правоотношение) одностороннее обязательство банка. С другой стороны, данное обстоятельство во многом объясняет ограничение круга банковских операций по счету вкладчика, выполнение которых допускается законодательством применительно к договору банковского вклада. Непосредственному применению к отношениям по договору банковского вклада подлежит норма, допускающая списание денежных средств по счету без распоряжения клиента только по решению суда, а также в случаях, установленных законом или предусмотренных договором между банком и клиентом (ст. 922 ГК РА).

Получается, что исключение, определенное договором, не соблюдено, в частности, договором предусмотрено, что комиссия за обналичивание депозитных средств не взимается, а денежные средства на сберегательном счете, согласно договору, являются вкладами до востребования, которые клиент может потребовать от банка в любое время, поэтому комиссионные платы за их обналичивание по договору не взимаются. Кроме того, как следует из части 2 статьи 905 ГК РА, вкладчик может в любое время потребовать от банка внесенные им денежные средства, в этом случае банк обязан вернуть их по первому требованию вкладчика. В данном случае, предусмотрев выдачу наличных средств вклада до востребования на сберегательный счет с уплатой комиссии, банк не выполнил вышеприведенное законодательное требование.

В связи с вышеизложенным следует сделать вывод о том, что современной юридической практике должно быть свойственно понимание того, что допускаемая законодательством возможность применения к отношениям по договору банковского вклада правил о договоре банковского счета носит ограниченный характер: невозможность применения указанных правил может быть предусмотрена нормами о договоре банковского вклада или может вытекать из существа этого договора. Обсуждаемый договор представляет собой самостоятельный гражданско-правовой договор, отличающийся от иных договоров, в том числе договора банковского счета, и не являющийся разновидностью какого-либо другого гражданско-правового договора.



ԱՅՈՒՋԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

«Վենետիկ ԻՄՄՕ» ՍՊ ընկերության իրավաբան

**«ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱՆՑՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ
ՓՈԽԱԴՐՈՂԻ ԵՎ ԱՌԱՔՈՂԻ (ԷՔՍՊԵՐԻՏՈՐԻ)
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Մաքսային իրավահարաբերությունը, լինելով հանրային հարաբերություն, բնորոշվում է որպես այնպիսի հասարակական հարաբերություն, որը կազմում է մաքսային գործի համապատասխան տարր, ընդգրկվում նրա կառուցվածքի մեջ և կարգավորվում է մաքս-սահմանային նորմերով: Ցանկացած իրավահարաբերության, այդ թվում մաքսայինին, ներհատուկ են երեք հիմնական կառուցվածքային տարրեր. ա) մաքսային իրավունքի սուբյեկտներ (մաքսային իրավահարաբերության մասնակիցներ), բ) մաքսային իրավահարաբերության օբյեկտներ, գ) այդ իրավահարաբերության բովանդակություն:

ՀՀ մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 128-րդ հոդվածը սահմանում է՝ ապրանքները և տրանսպորտային միջոցները հայտարարագրելու ընդհանուր պարտականությունը: Օրենսգրքի 131-րդ հոդվածի 3-րդ մասի՝ այդ պարտականությունը կրող սուբյեկտ է հանդիսանում հայտարարատուն: Համաձայն ՀՀ մաքսային օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի՝ որպես հայտարարատու կարող է հանդես գալ **ապրանքներ տեղափոխող անձը** կամ նրա կողմից լիազորված անձը¹:

Իրավահարաբերության սուբյեկտներին անդրադառնալիս հարկ է նկատել այն փաստը, որ որպես հայտարարատու «Մաքսային տարանցում մաքսային ընթացակարգով ապրանքների ներկրման դեպքում հանդիսանում է փոխադրողը: ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 142-

րդ հոդվածի համաձայն. «Մաքսային տարանցում մաքսային ընթացակարգն այնպիսի մաքսային ընթացակարգ է, որի դեպքում ուղարկող մաքսային մարմնից նշանակման մաքսային մարմին ապրանքները փոխադրվում են առանց մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման: «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը կիրառվում է Միության մաքսային տարածքով, ինչպես նաև Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով օտարերկրյա և Միության ապրանքների փոխադրման համար: Այս մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ Միության ապրանքները պահպանում են Միության ապրանքների կարգավիճակը²: «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» 2014 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագրի 5-րդ հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ Եվրասիական տնտեսական միության ապրանքները պահպանում են Եվրասիական տնտեսական միության ապրանքների կարգավիճակը օտարերկրյա պետությունների տարածքներով Միության մաքսային տարածքից դեպի Միության մաքսային տարածք «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան տեղափոխման դեպքում³:

ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 83-րդ հոդվածը անդրադարձել է այն հանգամանքին, որ

¹ Տե՛ս ՀՀ մաքսային օրենսգրք ՎՕ-83, ընդունված 06.07.2000, ուժի մեջ է 01.01.2001: Սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2000.08.21/19(117):
² Տե՛ս ԵԱՏՄ մաքսային օրենսգրք, ընդունված 11.04.2017, ուժի մեջ է մտել 01.01.2018, սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2018.03.12/17(1375).1:
³ Տե՛ս Պայմանագիր ՀՀ-ի՝ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ», ընդունված 10.10.2014, ուժի մեջ է մտել 02.01.2015, սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2015.01.21/3(1092) Հոդ.54:

«մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի հայտագրման դեպքում կարող են հանդես գալ փոխադրողը, այդ թվում նաև՝ մաքսային փոխադրողը, առաքողը, եթե նա Մաքսային միության անդամ պետության անձ է: Միաժամանակ հստակեցրել, որ Օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս Միության ապրանքների փոխադրման դեպքում փոխադրողը, անկախ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հայտարարատուն լինելու հանգամանքից, պարտավոր է. ապահովել ուղարկող մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետում ապրանքներն ու դրանց փաստաթղթերը հասցնել ապրանքների առաքման վայրը, ապահովել ապրանքների, մաքսային կապարակների և կնիքների, կամ նույնականացման այլ միջոցների պահպանվածությունը: Թույլ չտալ ապրանքների բեռնաթափումը, փոխաբեռնումը (վերաբեռնումը) և դրանց հետ կատարվող բեռնային այլ գործողությունների իրականացումը, ինչպես նաև այդ ապրանքները փոխադրող տրանսպորտային միջոցների փոխարինումը Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներում՝ առանց ուղարկող մաքսային մարմնի թույլտվության:

Միաժամանակ, ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 142-րդ հոդվածի համաձայն. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգն այնպիսի մաքսային ընթացակարգ է, որի դեպքում ուղարկող մաքսային մարմնից նշանակման մաքսային մարմին ապրանքները փոխադրվում են առանց մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման: «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը կիրառվում է Միության մաքսային տարածքով, ինչպես նաև Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով օտարերկրյա և Միության ապրանքների փոխադրման համար: «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ Միության ապրանքները պահպանում են Միության ապրանքների կարգավիճակը:

Ինչպես նաև հարկ է նշել, որ ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված են այն պարտավորությունները, որոնք փոխադրողն ունի «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով տեղափոխվող ապրանքների նկատմամբ: Մասնավորապես, Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս Միության ապրանքների փոխադրման դեպքում փոխադրողը, անկախ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հայտարարատուն լինելու հանգամանքից, պարտավոր է. ապահովել ուղարկող մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետում ապրանքներն ու դրանց փաստաթղթերը հասցնել ապրանքների առաքման վայրը, ապահովել ապրանքների, մաքսային կապարակների և կնիքների, կամ նույնականացման այլ միջոցների պահպանվածությունը: Թույլ չտալ ապրանքների բեռնաթափումը, փոխաբեռնումը (վերաբեռնումը) և դրանց հետ կատարվող բեռնային այլ գործողությունների իրականացումը, ինչպես նաև այդ ապրանքները փոխադրող տրանսպորտային միջոցների փոխարինումը Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներում՝ առանց ուղարկող մաքսային մարմնի թույլտվության:

Միաժամանակ, Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 148-րդ հոդվածի 3-րդ կետի իրագործման նպատակներով, և դրանով սահմանվում է Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) մաքսային տարածքով «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան փոխադրվող ապրանքների բեռնաթափման, փոխաբեռնման (վերաբեռնման) և ապրանքների հետ կատարվող այլ բեռնային գործողությունների, ինչպես նաև այդպիսի ապրանքները փոխադրող տրանսպորտային միջոցների փոխարինման համար մաքսային մարմնի թույլտվությունը (այսուհետ համապատասխանաբար՝ բեռնային գործողություններ, տրանսպորտային միջոցների փոխարինում, թույլտվություն) ստանալու կամ բեռնային գործողությունների իրականացման և (կամ) տրանսպորտային միջոց-

ների փոխարինման մասին մաքսային մարմնին ծանուցելու հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման հաջորդականությունը:⁴

Անդրադառնալով Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 413 որոշմանը, հարկ է նշել, որ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից փաստացի արտահանված ապրանքների քանակի հաստատումն իրականացվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի մեկնման վայրում՝ տարածաշրջանի մաքսային մարմնի համապատասխան նշանները դնելով,.....որի գործունեության վայր համարվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի մեկնման վայրը:⁵

«Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված բոլոր ապրանքները և դրանց առնչվող փաստաթղթերը ապրանքների առաքման վայր չհասցնելու դեպքում փոխադրողը անկախ հայտարարատու լինելու հանգամանքից կամ հայտարարատուն **պատասխանատվություն են կրում այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան**, որի մաքսային մարմինը, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան, իրականացրել է ապրանքների բացթողումը, իսկ փոխադրման ժամանակ պարտականությունները չկատարելու այլ դեպքերում, պատասխանատվություն են կրում այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում հայտնաբերվել է խախտումը: (ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 154-րդ հոդված)

Նշված հարցի կապակցությամբ հարկ է նշել, որ Եվրասիական տնտեսական հանձնա-

ժողովի կոլեգիայի 13.12.2017թ. թիվ 170 որոշմամբ, կարգավորվում են «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողության դադարման հետ կապված հարաբերությունները՝ համաձայն որի ընթացակարգի հսկողությունը իրականացնում է ուղարկող մաքսային մարմինը:

Հաշվի առնելով նշված որոշումը հատկանշական է, որ «**մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների առաքման վայր չհասցնելու դեպքում հնարավոր մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի վարույթը պետք է հարուցվի ուղարկող մաքսային մարմնում**, իսկ ինչ վերաբերում է իրավախախտման սուբյեկտի ընտրությանը, որևէ կերպ պրակտիկայում հնարավոր չէ ապահովել միատեսակ մոտեցում:

Մասնավորապես, ներկայումս «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ՀՀ ներմուծվող բեռների հայտարարագրումը կատարվում է փոխադրողի, մաքսային փոխադրողի, առաքողի կողմից, մինչդեռ, մեր կարծիքով, փոխադրողին վարչական պատասխանատվության ենթարկել փոխադրվող բեռի անվանման, նկարագրության, գնի, քանակի, ապրանքների մաքսային արժեքի վերաբերյալ ոչ հավաստի տեղեկություններով հայտարարման համար, ոչ իրավաչափ է, նկատի ունենալով, որ վերջինս բազմիցս իրազեկված չի լինում ապրանքի տեխնիկական բնութագրի մասին և ապրանքների հայտարարագրումն իրականացնում է մատակարար ընկերության տրամադրած բեռնառաքող փաստաթղթերի հիման վրա և որ իրավախախտման սուբյեկտը հանդիսացող վարորդը փաթեթվածքում առկա ապրանքի եղելությունը չի կարող պարզել հայտարարագրի լրացման ժամանակ անկախ նախնա-

⁴ Տե՛ս Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 170 որոշումը, պաշտոնական կայքէջ՝ <https://www.alta.ru/tamdoc/17kr0170/>: ԵՏՀ կոլեգիայի 13.12.2017թ. թիվ 170 որոշմամբ սահմանվում է՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան փոխադրվող ապրանքների բեռնաթափման, փոխաբեռնման (վերաբեռնման) և ապրանքների հետ կատարվող այլ բեռնային գործողությունների, ինչպես նաև այդպիսի ապրանքները փոխադրող տրանսպորտային միջոցների փոխարինման համար մաքսային մարմնի թույլտվությունն ստանալու կամ այդ գործառնությունների իրականացման մասին մաքսային մարմնին ծանուցելու հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման կարգը:

⁵ Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 413 որոշում «Մաքսային տարանցման մաքսային ընթացակարգով Եվրասիական տնտեսական միության ապրանքների տեղաբաշխման պայմանների մասին», պաշտոնական կայքէջ <https://www.alta.ru/tamdoc/10sr0413/>

կան զննման իրավունքից օգտվելու հանգամանքից:

Հարկ է անդրադառնալ նաև այն հանգամանքին, որ հաճախ գործնական կիրառության ընթացքում ունենում ենք խնդիրներ՝ պայմանավորված փոխադրողի կողմից լրացված տարանցիկ հայտարարագրում առկա ապրանքների և վերջինիս կողմից փաստաթղթերով ներկայացված և իրական, փաստացի բեռի մասին տեղեկությունների վերաբերյալ վերջինիս չիմացության հարցում⁶: Հաճախակի խնդիրներ են առաջանում վարչական վարույթի իրականացման արդյունքում, քանի որ վարչական վարույթի ընթացքում փոխադրողը/վարորդը բանավոր պարզաբանումների և/կամ բացատրությունների արդյունքում փաստարկում է, որ մատակարար ընկերության պահեստում բեռնաբարձման գործընթացին ներկա չի գտնվել, ապրանքների բարձումը կատարվել է առանց իր մասնակցության, որի հետևանքով չի տեսել թե ինչ ապրանքներ են ավտոմեքենայում տեղադրել, ինչպես նաև ՀՀ տեղափոխված ապրանքների հայտարարագրումը կատարվել է փոխադրողին տրամադրված փաստաթղթերի հիման վրա:

Ելնելով վերոգրյալից անհրաժեշտ է մատնանշել, որ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ՀՀ փաստացի տեղափոխված ապրանքների իրական տվյալների և բեռնուղեկցող փաստաթղթերում առկա տեղեկությունների անհամապատասխանությունը իրականում առաջանում է ոչ փոխադրողի մեղքով: Օրինակ՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչություն 2019 թվականի ապրիլի 5-ի «Վարչական գործի վարույթը կարճելու մասին» թիվ 61 որոշմամբ պարզվել է, որ 06.03.2019 թվականին ՀՀ ՊԵԿ Արարատյան մաքսատուն-վարչության աշխատակիցները «Երևանի Ուրարտու ա/մ մսի կոմբինատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մաքսային հսկողության տարածքում զննության են ենթարկել «Հույս-մոտոր» ՍՊ ընկերության անվամբ Բագրատաշենի մաքսային կետ-բաժնով

10106070/280219/0000004 տարանցման հայտարարագրով Ռուսաստանի Դաշնությունից ՀՀ ներմուծված, ապրանքներն ու հայտնաբերել, որ բացի հայտարարագրված ապրանքներից առկա է նաև չհայտարարագրված 414կգ բրուտտո, 360 կգ նետտո քաշերով մետաղական ցուցապահարան⁷:

Փաստի առթիվ 06.03.2019թ.-ին «Կաս Տրանս» ՍՊ ընկերության վարորդ Արմենակ Գուրգենի Սարգսյանի նկատմամբ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության հատկանիշներով կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն և իրականացվել է վարչական վարույթ:

2019 թվականի մարտի 25-ին մաքսային կանոնների խախտման վերաբերյալ վարույթին ներկայացել է Արմենակ Գուրգենի Սարգսյանը և բացատրություն է տվել այն մասին, որ հանդիսանում է «Կաս Տրանս» ՍՊ ընկերության վարորդ: Ընկերությանը պատկանող «35CR368/02L547» պետհամարանիշի ավտոմեքենայով մեկնել է Ռուսաստանի Դաշնություն: «ЭКОМ» ընկերության (հասցե՝ ՌԴ, Մոսկվա ք., Սպարտակի փող., 19 շենք) կողմից ՀՀ-ում գործող «Հույս մոտոր» ՍՊ ընկերության անվամբ մատակարարվող ավտոյուղերը հասցեատիրոջը առաքելու նպատակով: ՌԴ Օբնինսկ քաղաքում գտնվող պահեստային տարածքում իր կողմից վարվող ավտոմեքենան բեռնվել է ապրանքներով և իրեն են տրամադրվել բեռն ուղեկցող փաստաթղթերը: Բեռնաբարձման ժամանակ ներկա չի գտնվել, քանի որ ըստ ընկերության սահմանած թույլատրելիության նորմերի, մուտք գործելն այդ տարածք արգելվում է, ուստի կանգնել է ցանկապատից հեռու, իսկ մատակարար ընկերության կողմից կատարվել է ապրանքների բարձումը: Միաժամանակ հայտնել է, որ ՌԴ մաքսային տեսուչի կողմից ապրանքները կապարակնքվել են բարձման տեղում, իսկ փաստաթղթերը տրվել են իրեն: Իր իմացությամբ բեռնատար մեքենայում եղել են միայն ավտո-

⁶ Տե՛ս Մակկոննել, Կ.Ք. Экономикс: Принципы, проблемы, и политика. В 2 т. [Текст] / К.Р. Макконнелл, С.Л. Брю: Пер с англ. 11-го изд. Т.1.- М.: Республика,1992.- 339 с

⁷ Տե՛ս ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության 2019 թվականի ապրիլի 5-ի «Վարչական գործի վարույթը կարճելու մասին» թիվ 61 որոշում: (լրացուցիչ տեղեկատվություն՝ սույն որոշումը տրամադրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության կողմից)

յուղեր, որի արդյունքում Բագրատաշենի մաքսային կետում լրացրել է 28.02.2019թ. թիվ 10106070/280219/0000004 տարանցման հայտարարագիրը, որից հետո Բագրատաշենի մաքսային կետում բեռը մաքսային զննման է ենթարկվել ռենտգեն սարքավորման միջոցով: Մաքսային զննման արդյունքում հայտնաբերվել է, որ ավտոմեքենայի մեջ առկա է նաև 414 կգ բրուտտո, 360 կգ նետտո քաշով մետաղական ցուցապահարան: Ապրանքների զննումից հետո մեքենայի վրա դրվել է «E0140120» համարի մաքսային ապահովման միջոցը:

Հայտնել է նաև, որ մատակարար ընկերությունը բեռնել է նաև այդ ապրանքը, բացի այդ ցուցապահարանը բեռն ուղեկցող փաստաթղթերում՝ մասնավորապես 27.02.2019թ. թիվ 2702/0189 հաշիվ-ապրանքագրում, ներառված չի եղել, որի մասին ինքն իմացել է միայն «Ուրարտու տերմինալ» մաքսային պահեստում և հավելել, որ իր մեղավորությունը բացակայում է մաքսային կանոնների խախտման մեջ:

2019 թվականի ապրիլի 3-ին մաքսային կանոնների խախտման վերաբերյալ վարույթին ներկայացել է «Հույս մոտոր» ՍՊ ընկերության լիազոր ներկայացուցիչ Էդուարդ Արամի Ասլամազյանը, որը ներկայացրել է նոտարական կարգով վավերացված 27.03.2019թ. թիվ 12-19 լիազորագիրը: Էդուարդ Արամի Ասլամազյանը բացատրություն է տվել այն մասին, որ ընկերությունը զբաղվում է ավտոյուղերի և ավտոպահեստամասերի ներմուծմամբ: 2019 թվականի մարտի 6-ին ընկերության կողմից ներմուծված ապրանքների մեջ եղել է նաև մետաղական ցուցապահարան՝ 414 կգ բրուտտո, 360 կգ նետտո քաշով: ՌԴ-ում գործող մատակարար «ՅԿՕՄ» ընկերության կողմից ներկայացված նամակ-պարզաբանմամբ նշվել է, որ «ROLF» մականիշի ապրանքները իրենց ընկերության կողմից սխալմամբ է ընդգրկվել հայտարարագրված ապրանքներում: Չհայտարարագրված ապրանքները հանդիսանում են գո-

վազդային ցուցափեղկեր կամ ցուցանակներ: Միաժամանակ հայտնել է, որ վարորդի մեղավորությունը ապրանքների չհայտարարագրման մեջ բացակայում է:

Հիմք ընդունելով վարչական վարույթի ընթացքում ներկայացված պարզաբանումները և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածը⁸, ՀՀ մաքսային օրենսգրքի 206-րդ և 221-րդ հոդվածները՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության դեպքում: Ուստի, վարորդ Արմենակ Գուրգենի Սարգսյանի նկատմամբ սկսված սույն գործի վարույթը կարճվել է՝ իրավախախտման կազմի բացակայության պատճառաբանությամբ:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը՝ վարչական գործի նյութերով պարզվել է, որ «ՅԿՕՄ» ընկերության 27.02.2019թ. թիվ 2702/0189 հաշիվ-ապրանքագրով⁹ «Հույս մոտոր» ՍՊ ընկերության անվամբ ուղարկված ապրանքի վերաբերյալ Բագրատաշենի մաքսային կետ-բաժնում 28.02.2019թ. թիվ 10106070/280219/0000004 տարանցման հայտարարագիրը¹⁰, սակայն բեռնում եղած 414 կգ, 360 կգ մետաղական ցուցապահարանը չի հայտարարագրվել, ինչը տեղի է ունեցել ոչ թե «Կաս Տրանս» ՍՊ ընկերության վարորդ Արմենակ Գուրգենի Սարգսյանի կողմից, այլ մատակարար «ՅԿՕՄ» ընկերության համապատասխան աշխատակցի մեղքով, այսինքն՝ Արմենակ Գուրգենի Սարգսյանի արարքում բացակայում է մաքսային կանոնների խախտման կազմը, ինչը հիմնավորվում է 28.02.2019թ. թիվ 10106070/280219/0000004 տարանցման հայտարարագրով, «ՅԿՕՄ» ընկերության կողմից ներկայացված 29.03.2019թ. թիվ T-009 նամակ-պարզաբանմամբ, «Կաս Տրանս» ՍՊ ընկերության վարորդ Արմենակ Գուրգենի Սարգսյանի և «Հույս մոտոր» ՍՊ ընկերության լիա-

⁸ Տե՛ս «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքը, ընդունված 06.12.1985, ուժի մեջ է մտել 01.06.1986, սկզբնաղբյուր՝ ՀՍՍՀԳՍ 1985/23, պաշտոնական կայքէջ՝ file:///C:/Users/P_C/Downloads/73129.pdf

⁹ Տե՛ս 27.02.2019թ. թիվ 2702/0189՝ «ՅԿՕՄ» ընկերության հաշիվ-ապրանքագիր, պաշտոնական կայքէջ՝ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ, <https://trade.gov.am/cas//login?service=https%3A%2F%2Ftrade.gov.am%2Ftrade%2Flogin%2Fcas>:

¹⁰ Տե՛ս 28.02.2019թ. թիվ 10106070/280219/0000004 տարանցման հայտարարագիրը, պաշտոնական կայքէջ՝ <https://trade.gov.am/trade/home/index>:

գոր ներկայացուցիչ Էդուարդ Արամի Ասլամազյանի բացատրություններով:

Վերոշարադրյալի համակարգային վերլուծության և խնդրի առկայությունը վերհանելու վերաբերյալ վերևում արտահայտած դիրքորոշումը ամփոփելու համար անդրադառնանք ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությանը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների չհայտարարագրման կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրման կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշման դեպքում, որի արդյունքում չի առաջանում մաքսային վճարների պակաս հաշվարկում կամ չհաշվարկում, ինչպես նաև ոչ սակագնային կարգավորման միջոցների չկիրառում՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝ առաջացնում է **տուգանքի նշանակում՝ 50 հազար դրամի չափով**:

Սույն աշխատանքում մեր կողմից կատարված ուսումնասիրությունները փաստում են, որ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ապրանքների ներմուծման դեպքում, որպես իրավախախտման սուբյեկտ՝ հայտարարատու պատասխանատվության է ենթարկվում **փոխադրողը, մաքսային փոխադրողը կամ առաքողը**՝ տարանցման հայտարարագրի սխալ լրացման համար, մինչդեռ պրակտի-

կան ցույց է տալիս, որ անհրաժեշտ է օրենսդրական հիմք գործնականում առկա խնդիրը լուծելու համար: Նշվածը ցույց է տալիս նաև, որ օրենսդրական փոփոխությունների արդյունքում հարց կարող է առաջանալ՝ արդյո՞ք իրավաչափ չի լինի, որ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ներմուծված ապրանքների չհայտարարագրման կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրման կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկությունների նշման դեպքում իրավաբանական անձին՝ այսինքն, այն կազմակերպությանը որի անվամբ ներմուծվում է որոշակի խմբաքանակով ապրանքներ ենթարկվի վարչական պատասխանատվության:

Ի վերջո հարկ է նշել, որ անդրադառնալով իրավաչափության հարցին, պետք է փաստել, որ յուրաքանչյուր կազմակերպություն նման կերպով հարկային պարտավորություններից խուսափելու միտում կարող է ունենալ և այդ պարագայում ճիշտնով է իրավացի, որ փոխադրողին 50000 ՀՀ դրամի տուգանք նախատեսելով, թույլատրել ընտրություններին հսկայական խմբաքանակով ապրանքների ներմուծում կազմակերպել Հայաստանի Հանրապետություն: Հետևաբար՝ քանի դեռ չկա օրենսդրական լուծում, պրակտիկայում այս կարգավորումը կարող է բերել բացասական տարբեր հետևանքների:



ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ,
 իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
 ՀՀ վաստակավոր իրավաբան

**ԴԱՏԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՆՔՆԵՐԻ ԴԵՊՈՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՆՁԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ
 ԴԱՏԱՐԱՆՈՒՄ՝ ՏԵՍԱԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ**

Հոդվածում քննարկվում է ցուցմունքի դատական դեպոնացման և տեսակապի միջոցով անձին դատարանում հարցաքննելու փոխհարաբերակցության հարցերը: Այս երկու դատավարական ինստիտուտները միմյանցից տարբերվում են հիմքերի կանխատեսողական և փաստական բնույթներով. ցուցմունքի դեպոնացման հիմքերը կանխատեսողական են, վերաբերում են այնպիսի հնարավոր իրադարձություններին, որոնք կարող են տեղի ունենալ ապագայում, մինչդեռ տեսակապի միջոցով հարցաքննության վերաբերելի հիմքը փաստական է:

Հեղինակը կարծում է, որ ցուցմունքի դատական դեպոնացումը և տեսակապի միջոցով հարցաքննությունը, համապատասխան փաստակազմի առկայության դեպքում, կարող են զուգակցված կիրառվել:

Դեպոնացված ցուցմունքը մինչև դատարանում հրապարակելը, դատավորը պետք է պարզի, թե արդյոք դատարանում հնարավոր է հարցաքննել այն անձին, ում ցուցմունքը նախկինում դեպոնացվել է:

Բանալի բառեր. դեպոնացում, ցուցմունք, տեսակապ, հարցաքննություն, ցուցմունքի հրապարակում:

АРТУР ГАМБАРЯН

Заведующий кафедрой теории права и конституционного права
 Российско-Армянского (Славянского) Университета, доктор юридических наук,
 профессор, заслуженный юрист Республики Армения

**СУДЕБНОЕ ДЕПОНИРОВАНИЕ ПОКАЗАНИЙ И ДОПРОС ЛИЦА В СУДЕ ПУТЕМ
 ИСПОЛЬЗОВАНИЯ СИСТЕМ ВИДЕО-КОНФЕРЕНЦ-СВЯЗИ**

В статье рассматривается связь между судебным депонированием показаний и допросом лица в суде. Эти два процессуальных института отличаются друг от друга прогностическим и фактическим характером оснований; основания для показаний под присягой носят прогностный характер и относятся к возможным событиям, которые могут произойти в будущем, в то время как основания для перекрестного допроса являются фактическими.

Автор полагает, что судебное депонирование показаний и допрос с помощью специального залога при наличии соответствующих документов могут применяться в сочетании.

Перед оглашением депонированных показаний в суде судья должен выяснить, можно ли допросить лицо, показания которого ранее были депонированы в суде.

Ключевые слова: показания, депонирование показаний, допрос, публикация показаний.

ARTUR GHAMBARYAN

Head of the Department of Theory of Law and constitutional law
 Russian-Armenian University, Doctor of Law, Professor,
 Honored Lawyer of the Republic of Armenia.

**THE JUDICIAL DEPOSITION OF THE TESTIMONY AND THE QUESTIONING OF AN INDIVIDUAL
 IN COURT THROUGH VIDEOCALL**

The article discusses the relationship between the judicial deposition of the testimony and the questioning of the person in the court. These two procedural institutions differ from each other in the predictive and factual nature of the grounds; the grounds for deposition testimony are predictive, referring to possible events that may occur in the future, while the grounds for cross-examination are factual.

The author believes that the judicial deposition of the testimony and the interrogation by means of a special bond, in the presence of relevant documents, can be used in combination.

Before publishing the deposited testimony in court, the judge must find out whether it is possible to interrogate the person whose testimony was previously deposited in court.

Keywords: deposition, testimony, interrogation, publication of testimony.

* * *

ԳԵՎՈՐԳ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

Արդարադատության ակադեմիայի ռեկտորի խորհրդական,
 Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս,
 իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

**ԱՐԳԵԼԱՆՔԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՊՕՐԻՆԻ ԱՐԱՐՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ՝
 ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ**

Հոդվածը նվիրված է արգելանքի տակ գտնվող գույքի նկատմամբ ապօրինի արարք կատարելու հանցակազմի մեկնաբանմանը՝ Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքի կարգավորումների լույսի ներքո: Իհարկե, նշված արարքը նորույթ չէ, դրա համար պատասխանատվություն նախատեսված էր նաև նախկին քրեական օրենքում: Սակայն նոր օրենսգրքի 509-րդ հոդվածում քննարկվող հանցանքի առանձին հատկանիշներ կարգավորված են նորովի, առավել մանրամասն, ուստի անհրաժեշտություն է առաջացել մեկնաբանել այդ կարգավորումները:

Հետազոտության արդյունքները, տեսական նշանակությունից զատ, ունեն նաև գործնական նշանակություն: Դրանք կարող են ուղեցույց հանդիսանալ հարկադիր կատարման ծառայության աշխատակիցների, ինչպես նաև խնդրո առարկա արարքին իրավաբանական գնահատական տվող և դրա համար պատասխանատվության միջոցներ կիրառող մարմինների համար՝ իրենց առօրյա գործունեության մեջ:

Բանալի բառեր. արգելանք, գույք, ապօրինի արարք, քրեական նոր օրենսգրք:

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 132 2022

ГЕВОРГ ИСРАЕЛЯН

Советник ректора Академии юстиции,
преподаватель Международного университета Евразия,
кандидат юридических наук, доцент

ОПИСАНИЕ НЕЗАКОННОГО ДЕЯНИЯ В ОТНОШЕНИИ ИМУЩЕСТВА, ПОДВЕРГНУТОГО АРЕСТУ, СОГЛАСНО ПОЛОЖЕНИЯМ НОВОГО УГОЛОВНОГО КОДЕКСА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Статья посвящена толкованию состава такого преступления, как незаконное деяние в отношении имущества, находящегося под арест, в свете положений нового Уголовного кодекса Республики Армения. Разумеется, указанное деяние не является чем-то новым, ответственность за его совершение предусматривалась также в предыдущем уголовном законе. Однако в статье 509 нового кодекса отдельные признаки данного преступления урегулированы по-новому, более детально, поэтому возникла необходимость толкования новых регламентаций.

Результаты исследования, помимо теоретического значения, имеют и практическое значение. Они могут быть руководством для сотрудников службы принудительного исполнения, а также для органов, дающих правовую оценку рассматриваемому деянию и применяющих меры уголовной ответственности за его совершение в рамках своей повседневной деятельности.

Ключевые слова: арест, имущество, незаконное деяние, новый Уголовный кодекс.

GEVORG ISRAYELIAN

Advisor to the Rector of Academy of Justice,
Lecturer of Eurasia International University,
Candidate of Legal Sciences, Associate Professor

THE DESCRIPTION OF AN ILLEGAL ACT REGARDING PROPERTY UNDER THE PROHIBITION ACCORDING TO THE REGULATIONS OF THE NEW CRIMINAL CODE OF THE REPUBLIC OF ARMENIA

The article is devoted to the interpretation of the crime of committing an illegal act against the property under prohibition, in the light of the regulations of the new Criminal code of the Republic of Armenia. Of course, the mentioned act is not a new thing, for that reason, punishment was also provided for in the previous Criminal code. However, certain features of the crime discussed in Article 509 of the new Code are regulated in a new, more detailed way, so it is necessary to try to explain those regulations.

The results of the research, apart from the theoretical significance, also have a practical significance. They can serve as a guide for enforcement officers, as well as for bodies that provide legal evaluation of the acts in question and apply measures of punishment in their daily work.

Keywords: prohibition, property, illegal act, new Criminal code.

ԱՆՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ

ԵՊՀ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

**ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ**

Ժամանակակից իրավական համակարգը մի երեւոյթ է, որը իրավական հնարավորություն է ընձեռում ոչ միայն անձնական իրավունքների իրացման, այլև դրանց պաշտպանության համար: Պետք է չմոռանալ նաև, որ օրենսդրությամբ անձին վերապահված, բայց պաշտպանության ձևերով չտրամադրված իրավունքը կրում է դեկլարատիվ բնույթ: Քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլ միջոցառումների հետ մեկտեղ իրավական միջոցները նախատեսված են անձի սուբյեկտիվ իրավունքների իրացման համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու համար: Այս համատեքստում քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանությունը կարևոր դեր է խաղում մասնավոր իրավունքում:

Բանալի բառեր. իրավական միջոցներ, անձնական իրավունքների պաշտպանություն, անձնական իրավունքների իրացում, քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանություն, սուբյեկտիվ իրավունքների իրացում:

АННА МКРТЧЯН

Аспирант кафдры Гражданского права юридического факультета Ереванского Государственного университета

**АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ИНСТИТУТА ПРАВА САМОЗАЩИТЫ В ГРАЖДАНСКОМ ПРАВЕ
АРМЕНИИ**

